# ԷՋՄԻԱԾԻՆ



# ՌՆԶ

ԺԳ. ՏԱՐԻ

Հ. Է.

# ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

## VII

1956

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ՎԱԶԳԷՆԱՅ ԱՌԱՋՆՈՅ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Էջ

ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը Հարավային Ամերիկայի հայոց Հայրապետական պատվիրակ գերապատիվ Տ. Սիոն եպիսկոպոս Մանուկյանին [illegible] պատիվ շնորհելու առթիվ . . . . . 3

ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության վարիչ-պատվիրակ Տիար Վահան Մալեզյանի ութսունհինգամյա հոբելյանի առթիվ . . . . . 5

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ.— Կահիրեի եպիսկոպոսական ժողովի պատմական նշանակությունը . . . . . 7

Աֆրիկայի վերջին իրադարձությունների կապակցությամբ փոխանակված նամակներ . . . . . 11

Ամենայն Հայոց Մայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Նորին Սուրբ Օծության Տ. Տ. Վազգեն Ա-ի ճառը Ս. Էջմիածնի Մայր Տաճարում . . . . . 13

ԿԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊՍ. ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ— Մեկ Մարմին և մեկ Հոգի . . . 19

ՍԻՈՆ ԱՐՔԵՊՍ. ՄԱՆՈՒԿՅԱՆ— Վարդավառ . . . 22

ԱՍՏՎԱԾԱՇՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ . . . 25

ՄԵՍՐՈՊ ԱՐԵՂԱ ԱՆԹԱՐՅԱՆ— Նորին Սուրբ Օծության Վեհափառ Հայրապետը Բյուրականի աստղադիտարանում . . . 29

Հայրապետական բարձր գնահատություն . . . 32

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ . . . 34

Քաղվածքներ Գերագույն Հոգևոր Խորհրդի նիստերի արձանագրություններից . . . 37

Նորին Սուրբ Օծության Վեհափառ Հայրապետը Մոսկվայի հայոց նորաբաց Սուրբ Հարության եկեղեցում . . . 39

ԹՈՒԼԻՍԻԻ ԹՂԹԱԿԻՑ— Վրահայոց թեմի առաջնորդ գերապատիվ Տ. Վարդան եպիսկոպոսը Ախալքալաքում . . . 41

ԼԵՆԻՆԱԿԱՆԻ ԹՂԹԱԿԻՑ— Շիրակյան խրոնիկա . . . 42

Նվիրատվություններ . . . 44

Ս. Էջմիածնի Մայր Տաճարի, Ս. Հռիփսիմեի, Ս. Գայանեի, Ս. Շողակաթի տաճարների և նրանց շրջակա շենքերի վերանորոգումն ու բարեկարգումը . . . 46

Հ. ՍԵԴՐԱԿՅԱՆ— Շինարարական ծավալուն աշխատանքներ Մայր Աթոռում . . . 48

ՓԱՅԼԱԿ ՄԻԱՍԱՆ— Էջմիածին . . . 53

ԱԿԱԴ. Հ. ՄԱՆԱՆԴՅԱՆ— Համառոտ տեսություն հին Հայաստանի պատմության . . . 54

Ե. ԱՂԱՅԱՆՅԱՆ— Թարգմանչի գերեզմանը . . . 59

«Էջմիածին» ամսագիրը և իր ընթերցողները . . . 62

**ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ՝**

**ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ, ԷՋՄԻԱԾԻՆ**

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала „Эчмиадзин"

Redaction of the magazine „Etchmiadzin", Etchmiadzin, Armenia, USSR

---

*Երևան, 1958 թ.*

# Պ Ա Շ Տ Ո Ն Ա Կ Ա Ն

## ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿ ԳԵՐԱՊԱՏԻՎ Տ. ՍԻՈՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ ԱՐՔՈՒԹՅԱՆ ՊԱՏԻՎ ՇՆՈՐՀԵԼՈՒ ԱՌԻԹՈՎ

**ՎԱԶԳԷՆ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ. ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱԶԳԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ. ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՅՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՒՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ**

ՀԱՐԱՒԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿ ԳԵՐԱՊԱՏԻՒ Տ. ՍԻՈՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ, ՀԱՐԱԶԱՏ ՈՐԴՒՈՅ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ, ՈՂՋՈՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

Հույժ ուրախալի է Մեզ համար, Սիոն Սրբազան, Ձեզ տեսնել ներկայի Մեր բարձրաստիճան հոգևորականության արժանավորագույններու հույլին մեջ: Դուք Ձեր ամբողջ կյանքը գրեթե՝ նվիրել յուսակերտ Մեր Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցվույն, որուն միջոցավ Ձեզ նման գիտակից կոչումով ազնվաշունչ պատասխանատվությունն ունեցող եկեղեցականներու առջև կբացվի նաև Մեր հավատացյալ ժողովրդին ծառայելու լայն ու փառավոր ասպարեզ:

Ծնված ու դաստիարակված Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց կրոնաբույր ու հավատավառ մթնոլորտի մեջ և ներգրավված կուսակրոնության ասպարեզ-

դը, անձնվիրաբար հետևելով Ձեր հոգևորականի կոչումին, ո՛ւր որ ալ կանչվեցաք, Դուք փութացիք անմիջապես և հաջողեցաք ստեղծել Ձեր աշխատանքի և արդյունավետ դաշտ մեր Եկեղեցվո և ժողովրդի հոգևոր կյանքի շինության ի խնդիր:

Կոչվելով Հարավային Ամերիկայի հայոց առաջնորդության, Դուք լավագույնս իրականացուցիք Ձեր վրա դրված հույսերը, ապա նշանակվեցաք Հայրապետական պատվիրակ, միավորեցիք Հարավային Ամերիկայի չորս անջատ թեմերը ընդհանուր ղեկավարի մը շուրջ, և Ձեր ցուցաբերած վարչական ունակությամբ կարողացաք այդ օտար բայց հյուրընկալ ափերուն վրա Հայաստանյայց Եկեղեցին պահել իր ավանդական բարձրության վրա: Մենք վստահ ենք, որ շնորհիվ Ձեզ նման լուսամիտ ու նվիրված առաջնորդներու, մեր վտարանդի հավատավոր ժողովուրդը, ինչպես Մայր Աթոռին և Մայր Հայրենիքին, հոգով ու մտքով պիտի մնա կապված իր ավանդություններուն, և մեր եկեղեցին, ինչպես Նոյի փրկարար տապան, պիտի հավաքե իր զավակները, պայու և օր մը կանգ առնելու հավերժական Մասիսի սեգ կատարին, ու տարածվելու Արարատյան դաշտի չորս կողմերը:

Որպես Հայրապետական պատվիրակ և Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ, Դուք կհանդիսանաք մեր յանկալի գործակիցը և լավագույնս կկատարեք Մայր Աթոռի Ձեր վրա դրած հոգևոր պարտականությունները: Ձեր անդուլ աշխատանքներուն շնորհիվ, կազմակերպական լավ հիմքերու վրա է դրված Ձեր խնամքին հանձնված թեմը իր եկեղեցիներով, դպրոցներով, բեմական և եկեղեցական խորհուրդներով, մամուլով, որոնց շնորհիվ Հարավային Ամերիկայի հավատացյալ մեր ժողովրդի հոգիին մեջ միշտ վառ կմնա Քրիստոսի լույս հավատքը և կենդանի՝ մեր մեծասքանչ լեզուն, անոր շրթներուն վրա:

Ի վարձատրություն Ձեր աստվածահաճո գործունեության և ի քաջալերություն Ձեզ, հայրապետական Մեր այս կոնդակով կշնորհենք Ձեզ ԱՐՔՈՒԹՅԱՆ ՓԱՍՏով և կմաղթենք, որ այս բարձր կոչումը ավելցնե նոր փայլ ու հեղինակություն Ձեր անբասիր անվան վրա, տալով Ձերդ Գերաշնորհության գործունեության նոր մղում, ի պայծառություն Հայաստանյայց Առաքելական Եկեղեցվո և ի մխիթարություն մեր հավատացյալ ժողովրդյան:

Կօրհնենք զՁեզ և կաղոթենք, որ մեր Երկնավոր Հայրը պարգևե Ձեզ կյանքի երկար տարիներ՝ աշխատանքի պտղառատ և փառազարդ ճանապարհի վրա:

«Աջ լերուք, զօրացեալ ի Հոգւոյն Սրբոյ և յաւէտ օրհնեալ ի Տեառնէ և ի Մէնջ: Ամէն»:

Վազգեն Ա

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 15-ն յուլիսի
1956 Փրկչական ամի,
և ի թուականիս Հայոց ՌՆԵ,
ի Ս. Էջմիածին:

# ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹՅԱՆ ՎԱՐԻՉ-ՊԱՏՎԻՐԱԿ ՏԻԱՐ ՎԱՀԱՆ ՄԱԼԵԶՅԱՆԻ ՈՒԹՍՈՒՆՀԻՆԳԱՄՅԱ ՀՈԲԵԼՅԱՆԻ ԱՌԻԹՈՎ

## ՎԱԶԳԷՆ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ, ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱԶԳԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՅՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՒՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

ՄԽԻԹԱՐԳՈՅ ՏԻԱՐ ՎԱՀԱՆԱՅ ՄԱԼԷԶԵԱՆ, ՀԱՐԱԶԱՏ ՈՐԴՒՈՅ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ, ՈՂՋՈՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

Ուրախ սրտով և խնդությամբ կողջունենք ութսուն և հնգամյա Ձեր հոբելյանը:

Գոհությո՜ւն Աստուծո Ամենակալին:

Փառավոր անցան Ձեր կյանքի տարիները և պատվով կատարեցիք Ձեր պարտքը հայ ժողովրդի հանդեպ՝ գրական-հրապարակագրական և ազգային-հասարակական Ձեր պտղառատ գործունեությամբ:

Աշխատեցաք առանց հոգնելու, ծառայեցիք սիրով և անձնվիրելի եռանդով, համառ լավատեսությամբ և անկաշառ հայրենասիրությամբ:

Մեր Ազգի ամենեն բախտորոշ և փորձալից մեկ շրջանին, մոտ երեք քառորդ դար անդադար, Ձեր մտքի ուժը, Ձեր սրտի ջերմությունը, Ձեր կամքի բովանդակ կորովը ի սպաս դրիք մեր ժողովրդի ծով կարիքներուն առջև, անոր սրբազան իղձերուն կենսագործման ի խնդիր, և փայլեցաք հայ կյանքի մեջ որպես բազմավաստակ գործիչ և վարիչ-պատվիրակ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության:

Դուք Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության հետ միատեղ ապրեցաք և միատեղ ալ պիտի ապրիք շարունակ:

Հոգով և ի շինություն Հայաստանյայց Ս. Եկեղեցվույն և Հայոց Ազգին, Ձեր կյանքի գործերով ճշմարիտ անկորնչելի գանձ պատրաստեցիք երկինս, զոր Տերը կպարգևե ու երջանկությամբ ընդունի Ձեր հոգվո փառքին համար:

Ձեր նորեկյանի այս հեշանիկ պատմությամբ, համազգային մեծարան-քին կմիացնենք նաև Ամենայն Հայոց Հայրապետի Մեր սիրո ջերմ ողջույնը և սրտաբուխ օրհնությունը:

Այս հանդիսավոր առիթով պարտք է Մեզ գոհունակությամբ և երախտագիտությամբ հիշատակել նաև Ձեր արգասաբեր հավատարմությունը և նվիրումը դեպի Հայաստանյայց Եկեղեցին և դեպի մեր սուրբ հավատքի ոգին և փառաց լույսի աղբյուր Ս. Էջմիածինը: Դուք միշտ եղած եք և կմնաք Մայր Աթոռի հարազատ զավակը և Ամենայն Հայոց Կաթողիկոսի մեծ բարեկամը, և վստահ ենք, թե նաև այսուհետև, Ձեր ութսուն և հինգ տարիներու վաստակով պսակավոր, պիտի շարունակեք Ձեր խանդով ու գործով սատարել Մեր Ս. Եկեղեցվո և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի վերածաղկման նվիրական սուրբ գործին:

Ձեզ երկար կյանք կմաղթենք քաջառողջությամբ, խաղաղ և առատ օրերով, և Ձեր ազգաշեն ծառայություններու և հայրենանվեր ջանքերու լիակատար հաջողությամբ:

«Ողջ լերուք, զօրացեալ Ս. Հոգւով և յաւէտ օրհնեալ ի Տեառնէ և ի Մէնջ: Ամէն»:

Վազգէն Ա

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս յ 30-ն յունիսի
1956 Փրկչական ամի,
և ի տոմարիս Հայոց ՌՆԵ,
ի Ս. Էջմիածին:

# ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

## ԿԱՀԻՐԵԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Նորին Ս. Օծության Վեհափառ Հայրապետի նախագահության տակ, 1956 թվականի մարտի 5—8-ին, Կահիրեում գումարվեց Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու բարձրաստիճան իշխանավորների՝ գերաշնորհ սրբազան եպիսկոպոսների ժողով, որին մասնակցում էին տասնյոթը բարձրաստիճան հոգևորականներ:

Եպիսկոպոսական այս ժողովը մեր այսօրվա եկեղեցական կյանքում շատ կարևոր և պատմական նշանակություն ունեցող իրադարձություն էր:

Եպիսկոպոսական ժողովի կարևորությունն ու պատմական նշանակությունը կայանում է նրանում, որ

1) այդ ժողովին մասնակցում էր, Ամենայն Հայոց Հայրապետի նախագահությամբ, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու ամբողջ նվիրապետությունը՝ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության, Ս. Երուսաղեմի և Կոստանդնուպոլսի Պատրիարքական Աթոռները և Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու իշխանությունը ներկայացնող տասնյոթը բարձրաստիճան հոգևորականներ.

2) Եպիսկոպոսական ժողովի օրակարգում դրված էին Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու ներքին կազմակերպման, գործման վերաբերյալ կարևոր և այժմեական հարցեր.

3) որպես զուտ եկեղեցական ժողով Կահիրեի եպիսկոպոսական համագումարը նորություն էր մեր ազգային-եկեղեցական կյանքում 1917 թվականից հետո:

1956 թվականի նոյեմբերի 7-ին Ս. Էջմիածնում գումարված Ազգային-եկեղեցական արտագումար ժողովը, իր 4-րդ և վերջին նիստում, միաձայնությամբ որոշեց «դեր տարին անգամ մը գումարել Եպիսկոպոսական ժողով, քննելու համար կրոնա-եկեղեցական և բարեկարգչական ստիպողական հարցերով»:

Կահիրեում գումարված Եպիսկոպոսական ժողովը Նորին Ս. Օծության Վեհափառ Հայրապետի նախագահությամբ և Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու իշխանությունը ներկայացնող տասնյոթը բարձրաստիճան հոգևորականների մասնակցությամբ զբաղվեց Հայաստանյայց Առաքելական Եկեղեցուն վերաբերող կրոնա-եկեղեցական և բարենորոգչական կարևոր հարցերով:

Կահիրեի եպիսկոպոսական ժողովի օրակարգում կային հետևյալ տասը հարցերը.

1. Ընդհանուր զեկուցում Մայր Աթոռի ներկա կացության մասին.
2. Հայաստանյայց Եկեղեցու Սահմանադրության հարց.
3. Հայաստանյայց Եկեղեցու Կանոնագրքի կազմության հարց.
4. Ս. Գրքի տպագրության 300-ամյակի տոնակատարությունը և այդ առթիվ Աստվածաշնչի աշխարհաբար թարգմանության հարց.
5. Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի առավել կազմակերպության խնդիր.
6. Արտասահմանից մի քանի հոգևորականներ Էջմիածին հրավիրելու խնդիր.

7. Մայր Աթոռի կողմից հոգևոր կանոն սահմանելու հարց.

8. Ս. Էջմիածնի և մեր մյուս Աթոռների փոխհարաբերության ձևերի պատրաստելու հարց.

9. Հայաստանյայց եկեղեցու բարեկարգություն.

10. Քրիստոնեական այլ եկեղեցիների հետ հարաբերության խնդիր:

Եպիսկոպոսական ժողովը ձեռնհասաբար քննարկեց օրակարգի բոլոր կետերը և միաձայն ընդունեց համապատասխան որոշումներ, առաջնորդվելով Հայաստանյայց Առաքելական եկեղեցու միասնության գաղափարից և մեր հավատացյալ ժողովրդի գերագույն շահերից:

Եկեղեցին աստվածահաստատ, հոգևոր ու բարոյական մի կազմակերպություն է, որի հիմնադիրն ու գլուխն է մեր Փրկիչը, որը հիմնեց եկեղեցին և այն հանձնեց Իր առաքելական առաքյալներին և աշակերտներին, իր եկեղեցու հովիվների և առաջնորդների, ճշմարտության, ուղղափառության նախանձախնդրով առաջնորդելու Իր հավատացյալներին:

Եկեղեցու առաքելական ղեկավարության ժամանակաշրջանում, եկեղեցին, որպես Քրիստոսի հավատացյալ մարդկանց ժողով (ըստ որ է եկեղ. զինվորան կոչ եկեղեցի... այլ զինավորյալ ժողովուրդն — Ս. Լուսավորիչ և Ս. Սահակ, Կանոնաց ժողովածու), և որպես աստվածահաստատ հոգևոր կազմակերպություն իր դավանանքով, իր ծիսական բարեպաշտական կյանքով, իր վարչատնտեսական կազմակերպությամբ վստահվեց եպիսկոպոսներին, որոնք Ս. Հոգու առաջնորդությամբ ղեկավարում էին եկեղեցին:

Գործք Առաքելոցի պատմությունից հայտնի է, որ եկեղեցական խնդիրները ժողովներում կարգադրելու կարգը հաստատեցին առաքյալները (Գործք, ԺԵ): Սուրբ Հայրերն հետևելով առաքյալներին և առաքելական ավանդության, որոշում են տարին գեթ երկու անգամ եպիսկոպոսական ժողով գումարել: Քրիստոնեական համայնքի տեսանելի ներկայացուցիչը եպիսկոպոսն էր: Եպիսկոպոսները համախմբվում էին, ժողով գումարում և զբաղվում դավանական և մեկնաբանական վեճերի և այլ զուտ եկեղեցական հարցերի քննությամբ: Հերձվածողների դեմ Աստվածային Եկեղեցու մղած պայքարում հիմնական ծանրությունը ընկնում էր եպիսկոպոսների վրա: Եպիսկոպոսն էր, որ գլխավորում էր պայքարը: Եպիսկոպոսական ժողովն էր, որ հանդիսանում էր ուղղափառության ամրոցը: Եպիսկոպոսները գրում էին հոգևական և կանոնական հարցեր, և դրանցով փաստորեն հանդիսանում էին եկեղեցու ուղղափառության ջատագովները ու պաշտպանները:

Ժողով գումարելու, վճիռներ կայացնելու, եկեղեցական կանոններով սահմանադրություն նորոգելու նախաձեռնությունը եպիսկոպոսների իրավունքն էր: Տիեզերական ու տեղական ժողովներում էլ վճռական ձայնը պատկանում էր եպիսկոպոսներին: Ժողովական արձանագրություններից երևում է, որ հիշվում են ավելի շատ եպիսկոպոսների անուններ: Նիկիայի առաջին տիեզերական ժողովում (325 թ.) կային 318 հայրապետներ, Կոստանդնուպոլսի երկրորդ տիեզերական ժողովում (381 թ.)՝ 150 եպիսկոպոսներ:

Մեզ հասած «Կանոնաց առաքելականաց»-ի 27-րդ կանոնում խոսվում է եպիսկոպոսական ժողովի մասին. «ԵՐԿԻՑՍ Ի ՏԱՐՒՈՋ ԺՈՂՈՎ ԼԻՑԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ և քննեսցեն առ միմեանս զհրամանս բարեպաշտութեան. և զպատահեալն եկեղեցական ընդդիմաբանութիւնս լուծցեն, մի անգամ ի չորրորդ շաբաթն Պենտեկոստէին և երկրորդ՝ յաշնանային»:

Եպիսկոպոսական ժողով գումարելու մասին խոսվում է նաև Նիկիական ժողովի 5-րդ կանոնի մեջ... «Բարի համարեցինք սահմանել, որ ամեն աշխարհում տարին երկու անգամ ժողով լինի, որպեսզի բոլոր եպիսկոպոսները միասին ժողովվեն, քննեն այդպիսի թյուրիմացությունները: Ժողովներից առաջինը լինի Քառասնորդականից առաջ... երկրորդը՝ աշնան ժամանակներում»:

Եպիսկոպոսական ժողովների միջոցով եկեղեցական, կրոնական, բարեկարգչական հարցեր լուծելու առաքելական սովորությունը եղել է նաև մեր մեջ, ի հնուց անտի մինչև այսօր:

Հնում, ըստ առաքելական կանոնի, մեզ մոտ ևս տարին երկու անգամ Հայրապետը շրջում էր ամբողջ երկիրը, եպիսկոպոսական ժողով գումարում, ամեն կողմ կարգ ու կանոն հաստատում: Ս. Լուսավորիչը, Մեծն Ներսեսը, Ս. Սահակը 12 եպիսկոպոսներով շրջում էին ողջ երկիրն Հայոց: Հետագայում եպիսկոպոսներ Նավասարդի տոնին Շահապիվան, իսկ Ս. Կարապետի տոնին Մուշ էին համախմբվում՝ գումարելու տարին գեթ 1—2 անգամ եկեղեցական-բարեկարգական հարցերով, և այնտեղ քննելուց հետո կարևոր հարցերը՝ ներկայացնում էին կա՛մ Հայրապետին ի վավերացումն և կա՛մ ազգային ժողովին ի հավանություն:

Բայց վերջին ժամանակներս մեզ մոտ ընդունված կարգը այն է եղել, որ Ազգա-

լին-եկեղեցական սրբագումար ժողով գումարվել է միայն դեպքից դեպք, կաթողիկոսական ընտրության և օծման կապակցությամբ, և ժողովը իր ընթացիկ օրակարգը վերջացնելուց հետո ցրվել է, հաջորդ կաթողիկոսական ընտրության առթիվ միայն հավաքվելու համար:

Եկեղեցին չի կարող մատնվել անշարժության:

Եկեղեցին աստվածահիմն հաստատություն է, ապրող, շնչող, զարգացող, կատարելագործվող մի հոգևոր հաստատություն: ՆԱ ՊԵՏՔ Է ԲԱՐՁՐԱՆԱ ԴԱՐԵՐԻ ՀԵՏ, ՏԱՐԱԾՎԻ ԵՎ ԸՆԴԱՐՁԱԿՎԻ ԺԱՄԱՆԱԿԻ ՈՒ ՄԻՋՈՑԻ ՄԻՋ. ԽՈՐԱՆԱ ԻՐ ՈՒՂՂԱՓԱՌՈՒԹՅԱՆ ԵՎ ԴԱՎԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ. ՄԻՇՏ ՆՈՐ ՈՒ ՃՇՄԱՐԻՏ ԽՈՍՔ ԲԵՐԻ ԻՐ ՀԱՎԱՏԱՑՅԱԼՆԵՐԻՆ, ԽՈՐՔՈՒՄ ՄՆԱԼՈՎ ԱՆՓՈՓՈԽ, ՆՈՒՅՆ ԵՎ ՀԱՎԻՏՅԱՆ:

Կրոնա-եկեղեցական, դավանաբանական, բարեկարգական հարցերում ղեկավարի, առաջնորդի, կազմակերպողի դերը միշտ վերապահված է եղել բարձր հոգևորականությանը: Ս. Գրիգոր Լուսավորիչը Եկեղեցին ղեկավարում էր մնայուն 12 խորհրդական եպիսկոպոսներով, որոնք ապրում և գործում էին Հայրապետանոցում և ծանոթ էին որպես դռան եպիսկոպոսներ: Այս 12 եպիսկոպոսները Հայրապետի գործակիցներն ու խորհրդականներն էին Եկեղեցու ընդհանուր կազմակերպման և ղեկավարման գործում: Իսկ նշանավոր դեպքում միայն Ազգային-եկեղեցական ժողով էր գումարվում համազգային նշանակություն ունեցող հարցեր լուծելու համար:

Խոսելով այստեղ միայն վերջին ժամանակներում հրավիրված զուտ եկեղեցական ժողովների մասին, պետք է ասել, որ 1917 թվականին Երջանկահիշատակ Տ. Գևորգ Ե կաթողիկոսը իր ապրիլի 5-ի կոնդակով, Սինոդի Նախագահ գերաշնորհ Տ. Հուսիկ արքեպիսկոպոսի գլխավորությամբ հրամայում է կազմել եպիսկոպոսներից և վարդապետներից մի ժողով՝ «ի պահպանութիւն ուսմանց և սեպհականութեան ազգիս, ի շահ Ս. Եկեղեցւոյս և հօտիս... առ ի քննել զպարագայս, որ առաջի մեզ դնէ ոգի ժամանակիս և կազմել ուրուագիծ ցանկալի փոփոխութեանց... զկնի խոհական խորհրդակցութեան Ձերոյ առաջի առնել Մեզ զտնօրինութիւն և զկարծիս Յանձնախմբիդ առ ի տնօրինել զոր ինչ արժան ունիմք վարկանել ընդ փոյթ ի վերականգնումն նախկին կարգաց և կանոնաց ըստ ոգւոյ Ս. Եկեղեցւոյս Մերոյ, է՛ որ ըստ առաջի արարեալ ուրուագծի նախադրակի, է՛ որ ըստ առաւելագոյն լայնատարր գումարման խորհրդակցական ժողովոյ, զոր ունիմք գումարել ի մօտոյ, մինչ ցգումարումն ազգային ընդհանուր ժողովոյ, յոյր ձեռն ունի կազմակերպիլ վերջնական կանոնական Սահմանադրութիւն վարչութեան Ս. Եկեղեցւոյս»: Որով 1917 թվականի հունիսի 13-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում հրավիրվում է հոգևորական համագումար, զբաղվելու համար կրոնական-եկեղեցական բարենորոգչական և այլ հարցերով:

Եկեղեցական համագումարը բացվում է Մատենադարանի (այժմյան Ճեմարանի) շենքի առաջին հարկի 2 դահլիճներում և տևում է մինչև հունիսի 23-ը: Զուտ եկեղեցական այս համագումարին ներկա չեն կարողանում լինել արևմտահայ հոգևորականության ներկայացուցիչները՝ առաջին համաշխարհային պատերազմի պատճառով:

Եկեղեցական համագումարում Գևորգ Ե-ը ունենում է իր մշտական ներկայացուցիչը հանձին գերաշնորհ Տ. Հուսիկ արքեպիսկոպոսի, որը միշտ տեղյակ է պահում կաթողիկոսին՝ համագումարի դիվանի հետ միասին, համագումարի նիստերի և գրաղումների մասին:

Եկեղեցական համագումարը ավարտելով իր աշխատանքները, ժողովի եզրակացությունները որոշման վերածած, ժողովական արձանագրություններով կաթողիկոսին է ներկայացնում:

Կաթողիկոսը իր գոհունակությունն է հայտնում եկեղեցական համագումարի բեղմնավոր աշխատանքների կապակցությամբ, իսկ համագումարի ժողովական որոշումների առթիվ ավելացնում է, որ դրանցից մի մասը հայրապետական վավերացման կարժանանան և կմտնեն կյանքի մեջ, իսկ «որոշումներից այնպիսիները, որոնք այժմեն իսկ կյանքի մեջ մտցնելու հարմարություն չեն ունենա, կդրվեն իր կողմից, ընտրությամբ իհարկե, ապագա Ազգային Սահմանադրական ժողովի առաջ, որպեսզի հանրական քննությունը իր կնիքը դնէ նրանց վրա» («Արարատ», 1917 թ., № 6—7, էջ 480):

Մեր սրբազան եպիսկոպոսներն են Հայաստանյայց Եկեղեցու տեսուչներն ու հովիվները: Ինչպես անցյալում, նմանապես նաև այժմ, նրանք իրենց ձեռքում պետք է պահեն մեր Եկեղեցու հոգևոր առաջնորդությունը: Ո՞վ ավելի ճիշտ ու լուսավոր ուղիներ կնշի մեր Եկեղեցու հետագա հոգևոր զարգացման ու զորացման համար, քան մեր բարձրաստիճան հոգևորականությունը:

Տխուր է այստեղ արձանագրել, որ մեր Եկեղեցին զանազան պատճառներով շատ

է ԱՇԽԱՐՀԱԿԱՆԱՑՈՒՄ, և այդ իսկ պատճառով ձախողվել, որովհետև ըստ Նորին Ս. Օծության Վեհափառ Հայրապետի ճիշտ բնորոշման, «...կրոնն պահել իր կոչականությունը զանազան ձևերու առջև, նախաձեռնելով և աշխատանքային խտրականությունից ամենքգործությանց...»:

Նորընտիր Վեհափառ Հայրապետը, մեր եկեղեցապատմական ավանդը պահել ենա միջոցը ու միախառնում, աշխատում է Հայաստանյայց եկեղեցին բարձրացնել իր նախկին կոչման և պատմական դերին, առանց մնալով մեր եկեղեցու ազգային նկարագրին, ժողովրդական կազմությանը:

Մենք իրավամբ հպարտանում ենք Հայաստանյայց Առաքելական և Սուրբ Եկեղեցու ազգային նկարագրով և ժողովրդական կազմությամբ: Մեր եկեղեցուն միշտ էլ խորթ է եղել կղերապետությունը: Մեր ժողովներում եկեղեցականների հետ միասին նստած են եղել հավասար-հավասարի, միաձայն ու համախոհաբար, նաև նույն իրավունքներ և կամ ժողովրդի ներկայացուցիչներ: Հայաստանյայց Առաքելական եկեղեցու գերագույն օրենսդիր մարմինը Ազգային-Եկեղեցական պատգամավոր ժողովն է: Այդպես է եղել, է և կլինի: Սակայն այդ չի նշանակում եկեղեցու հոգևոր իշխանությունը ունենա իր ներքինակարգը խառնի ամեն իրավունքից և պատասխանատվությունից:

Կահիրեում գումարված եպիսկոպոսական ժողովը, որն ուրախությամբ ողջունելով բավանդակ ազգի կամքը, վճռեցիկ գրավական է այն բանի, որ եպիսկոպոսական ժողովը կոչված է մեր օրերում էլ դառնալու Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու կազմակերպման, զարգացման գործում ազդեցիկ և նշանակավոր գործոններից մեկը:

Կահիրեում գումարված եպիսկոպոսական համագումարը խոստումնալից ու խանդավառ հեռանկարներ բացեց Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու միասնության, նորոգ կազմակերպման և զարգացման գործում:

Այս փաստերի լույսի տակ, Կահիրեում գումարված եպիսկոպոսական ժողովը Վեհափառ Հայրապետը իրավամբ որակեց «պատմական ժողով մը»:

Կահիրեի եպիսկոպոսական ժողովը իր 3-րդ նիստում զբաղվեց Հայաստանյայց Առաքելական եկեղեցու Սահմանադրության կազմության հարցով և այդ առթիվ կազմեց յոթ հոգուց հանձնախումբ, միաձայն որոշում ընդունեց, որ «ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑՒՈՅ ՈՐՈՇ ԳԱՒԱՌԱԿԱՆ ԵՒ ԳԱՂԹԱՊԵՏԱԿԱՆ ԽՆԴԻՐ ՀԱՐԿ Է, ՈՐ ՆԿԱՏԻ ԱՌՆՈՒԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՄԷՋ ԵՒ ԱՆԿԷ ՆՏՔ ՄԻԱՅՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒԻ ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ ԵՒ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ Ի ՎԱՒԵՐԱՑՈՒՄ»:

Այժմ Հայաստանյայց Առաքելական եկեղեցու Սահմանադրությամբ զբաղվող հանձնախումբը սկսել է իր աշխատանքները:

Նոր մշակվող այդ եկեղեցական Սահմանադրության մեջ, ըստ Նորին Ս. Օծության Վեհափառ Հայրապետի ցանկության և եպիսկոպոսական ժողովի միաձայն որոշման, անհրաժեշտ է, որ «ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՈՇԻ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ, ՈՐ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՃՇՏԻՎ ՏԵՐՄԻՆՈՎ, ՀԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ, ԷՋՄԻԱԾՆԻ, ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՍՏԵՂԾԵԼ ԱՅՆՊԻՍԻ ՕՐԻՆԱԿԱՆ, ԱՐԳԵԼԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ, ՈՐՈՆՔ ԱՌԱՋՔԸ ԱՌՆԵՆ ԱՅՆՊԻՍԻ ՊԱՏԱՀԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՈՐՈՆՔ ՀԱՃԱԽ ԽԱՆԳԱՐԵԼ ԵՆ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԽԱՂԱՂ ԿԵՑՈՒԹՅԱՆԸ»:

Անհրաժեշտ է, որ Հայաստանյայց եկեղեցու Նոր Սահմանադրությունը նվիրագործի և ապահովի եկեղեցու նվիրապետության և հոգևոր իշխանության սուրբ ներքինակությունը և միաժամանակ լայն գործակցությունը համայնքային ժողովրդի, եկեղեցու կազմակերպման ու ղեկավարման ներքական գործում, համաձայն ազգային և սահմանադրական սկզբունքների:

Բովանդակ հայության սրտագին իղձն է Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին տեսնել իր պատմական դերի և հոգևոր կոչման բարձրության վրա:

Մեր մարտիրոս և Ս. Եկեղեցու վերականգնման և հոգևոր զարթոնքի աշխատանքների մեջ պատմական պատասխանատու և կարևոր դեր է վերապահված եպիսկոպոսական ժողովին:

## ԱՆԹԻԼԻԱՍԻ ՎԵՐՋԻՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՀԵՌԱԳՐԵՐ

*Սփյուռքից ստացված բազմաթիվ պաշտոնական հեռագրեր խոսում են այն մասին, որ Կիլիկյան Աթոռի Միաբանական ընդհանուր ժողովը գումարվելով հուլիսի 23-ին, օրինավոր մեծամասնությամբ, Կաթողիկոսական նոր տեղապահ է ընտրել ամենապատիվ Տ. Խադ արքեպիսկոպոս Աչապահյանին։ Այս առթիվ Կիլիկյան Աթոռի Միաբանական ընդհանուր ժողովի նախագահ գերաշնորհ Տ. Փառեն եպիսկոպոս Մելքոնյանից հուլիսի 26-ին ստացվեց հեռագիր։*

### ԿԻԼԻԿՅԱՆ ԱԹՈՌԻ ՄԻԱԲԱՆԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՓԱՌԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՀԵՌԱԳԻՐԸ ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Կիլիկիո Կաթողիկոսության Միաբանական ընդհանուր ժողովը պաշտոնանկ արեց Տեղապահ Խորեն Պարոյանին, ամբողջ իշխանությունը փոխանցելով Խադ արքեպիսկոպոս Աչապահյանին։

Ընդհանուր ժողովի Նախագահ՝
ՓԱՌԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԵԼՔՈՆՅԱՆ

26 հուլիսի 1956 թ.
Անթիլիաս

*Հուլիսի 27-ին Կիլիկյան Աթոռի միաբանության անունից ստացվեց մի այլ հեռագիր Անթիլիասում տեղի ունեցող իրադարձությունների առնչությամբ։*

### ԿԻԼԻԿԻԱՅԻ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Զարեհ և Խորեն եպիսկոպոսները չարաշահում են իրենց պաշտոնները։ Երեկ Կաթողիկոսարանի դահլիճում ծեծել տվին վարդապետներին իրենց համախոհների միջոցով։ Ամբաստանում ենք Զարեհ և Խորեն եպիսկոպոսներին զեղծման և ոճրամիտ դիտավորությունների մեջ։ Խնդրում ենք նրանց դատել Հայ Եկեղեցու Կաթողիկոսի, պատրիարքների և եպիսկոպոսների ժողովի առաջ։

ԿԻԼԻԿԻԱՅԻ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

27 հուլիսի 1956 թ.
Անթիլիաս

## ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԵՌԱԳԻՐԸ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ՏԵՂԱՊԱՀ ԱՄԵՆԱՊԱՏԻՎ Տ. ԽԱԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ

ԱՆԹԻԼԻԱՍ

Գոհունակությամբ տեղեկացանք Ձեր ընտրության մասին՝ որպես Տեղապահ Տանն Կիլիկիո Աթոռի: Գնահատելով միաբանության մեծամասնության այս իմաստուն որոշումը, կմաղթենք Ձեզ ուժ և կարողություն, որպեսզի կարենաք սանձել խռովարարությունն Աթոռի և ժողովրդի մեջ՝ Հայ Եկեղեցվո սիրո և միության ոգով:

ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

3 օգոստոս 1956
Էջմիածին

## ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԵՌԱԳԻՐԸ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ՏԵՂԱՊԱՀ ԱՄԵՆԱՊԱՏԻՎ Տ. ԽԱԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ

ԲԵՅՐՈՒԹ

Մեր խոր վշտակցությունը կհայտնենք Անթիլիասի մեջ պատահած դեպքերուն համար, որոնք վշտալից խոց են հոգևոր կյանքի և անպատվաբեր մեր ազգի համար: Դուք, Սրբազան Եղբայր, կոչված եք պատմական դեր կատարելու և պաշտպանելու Ձեր Ս. Աթոռին գոյությունն ու հեղինակությունը Ձեր իմաստությամբ, համբերությամբ և վճռականությամբ, զի Աստված ընդ Ձեզ է և Մենք աղոթող Ձեր գործի հաջողության համար: Մայր Աթոռը և մեր ամբողջ Եկեղեցին ու ժողովուրդը Ձեր կողքին են ի սեր մեր սուրբ հավատքի և Ազգի:

ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

7 օգոստոս 1956
Էջմիածին

# ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա-Ի ՔԱՐՈԶԸ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

Հուլիսի 15-ին, Վարդավառի երկրորդ կիրակին, Մայր Աթոռը արտակարգ եռուզեռի մեջ էր: Ուխտավորների և հավատացյալ ժողովրդի խուռն բազմություն հավաքվել էր Մայր Տաճարի ներսն ու շրջափակը: Շատեր ուխտի էին եկել մոտ ու հեռավոր վայրերից, Վեհափառ Հայրապետի պատարագը լսելու և ունկնդրելու Նրա կենդանի խոսքը: Այսօր Մայր Տաճարում մատուցվելու էր հանդիսավոր սուրբ պատարագ: Հավատացյալների բազմությունը Վեհափառ Հայրապետի անցքի վրա անհամբեր սպասում էր ստանալու համար Նորին Ս. Օծության օրհնությունն ու համբուրելու Նրա օծյալ Ս. Աջը: Թագավորական արտակարգ բազմության պատճառով բավական ժամանակ պետք եղավ Վեհափառ Հայրապետին Կաթողիկոսարանից Մայր Տաճար առաջնորդելու համար:

Մայր Տաճարը տոնականորեն զարդարված, արդեն լիքն էր ուխտավորներով և հավատացյալներով: Հանդիսավորությամբ սկսվեց հայրապետական սուրբ պատարագը՝ Մայր Տաճարի հառաձայն երգչախմբի երգեցողությամբ: Հավատացյալները սրտի անսահման ջերկրանքով և հոգևոր հափշտակությամբ ունկնդրում էին սուրբ պատարագը և խորին երկյուղածությամբ իրենց ջերմագին աղոթքները միացնում պատարագիչ Վեհափառ Հայրապետի աղոթքներին: Նույն վեհ ու տպավորիչ հանդիսությամբ շարունակվեց սուրբ պատարագը մինչև «Հայր մեր»:

Քարոզի պահն է: Մայր Տաճարում տիրում է հար լռություն: Վեհափառ Հայրապետը դառնում է դեպի ժողովուրդն ու խոսում իր ներշնչված հորդորներից մեկը, որը լսվում է խորունկ ուշադրությամբ, խանդավառությամբ և լավատես հույսերով ու հավատքով:

«Տէր իմ, Աստուած, ապաւէն և տեղի ամուր կեցուցանել զիս. զի հաստատութիւն իմ և ապաւէն իմ Դու ես»:

Սիրելի՛ հավատացյալ ժողովուրդ:

Այսօր, երբ կլրանան հինգ տարիները Մեր Եպիսկոպոսական ձեռնադրության, Մեր շրթները գոհունակության աղոթք կկարդան առ ամենակալն Աստված, աղերսելով, որ Իր անչափ ողորմությամբ Մեզ ապավեն և հաստատություն հանդիսանա նաև այսուհետև, Մեր սուրբ գործի ճամբուն վրա:

Խոր հուզումով է, որ կհիշեմ այն օրը, 1951-ին, երբ երջանկահիշատակ Գևորգ Զ հանգուցյալ Հայրապետին առջև ծունկի եկան Հայ Եկեղեցվո հինգ վարդապետներ, իրենց գլուխը ունենալով Սրբո Երուսաղեմա Պատրիարքական տեղապահ Եղիշե արքեպիսկոպոս Տերտերյանը և բոլորը ուխտեցին անձնուրացությամբ և հավատարմությամբ ծառայելու Ս. Եկեղեցիին, Մայր Աթոռին

և հավատացյալ ժողովրդին: Այդ սիրո կամուրջներեն մին ալ Մենք էինք, իբրև առաջնորդ թեմին Հայոց Ռումանիո:

Այսօր, Մեր եպիսկոպոսական ձեռնադրության հիսներորդ տարելիցին, մեր մեջ չէ, ավա՜ղ, մեր մեծապատիվ Գևորգ Զ Կաթողիկոսը և Անոր հայրապետական գավազանը հանձնված է Ռումանիո հայոց թեմի նախկին առաջնորդին:

Աստված գիտե, գիտեն և մարդիկ, թե Մենք շատ հեռու էինք այս Ս. Աթոռին տիրանալու մտածումեն, և ամեն բան փորձեցինք, որպեսզի այս ծանր լուծը չիջնե Մեր ուսերուն վրա: Եվ սակայն եկավ պահ մը, երբ ընդդիմանալ և հրաժարիլ համազոր պիտի ըլլար դասալքության, և դժված պիտի ըլլայինք Մեր սիրտը Եկեղեցիին ծառայելու: Այսպես է, որ Մեր անձը հանձնեցինք Տիրոջ, կրկնելով մեծ սաղմոսերգուին խոսքը՝ «Արա ընդ ծառայի Քում, Տէ՛ր, ըստ ողորմութեան Քում»:

Եվ կարծեմ, ըսած մին է այս Մեզ համար, ցեղի անձնականը: Բաց գիտակցելով այն բոլոր դժվարությունները, որ կսպասեին մեր Ս. Եկեղեցվո կյանքը, համոզված կըլլայինք, թե ինչպես երկյուղին հրաշքներ կսպասեին, թափանցելու և հնազանդեցնելու սրբեք Մեր մտքին ու հոգիին բոլոր ծալքերուն: Եվ սակայն, ո՜վ զարմանք, շատ ժամանակ չանցած, տեսանք, թե անձանոթ տակավին կյանքը, և կարծես Մեր առջևեն Լույսը անտեսանելի ուժ մը կբանար դռներ Աստուծո ողորմության:

Կան մեր կյանքին մեջ պատահարներ, երևույթներ, որոնք «անիմանալի են ի մեզ և մեր համար զմեզ»: Մենք կհավատանք աստվածային նախախնամության: «Օրհնեալ ես Դու, Տէ՛ր, Աստուած հարցն մերոց»:

Իրավ է, սիրելի՛ հավատացյալ ժողովուրդ հայոց, ոչ երազ է և ոչ ալ պատրանք, թե Մեր օրերուն սկսան բացվիլ ողորմության դռներ ի շինություն Ս. Եկեղեցվո և ի պայծառություն Մայր Աթոռ Ս. Էջմիածնի:

Այս Ս. Տաճարը հիմնող, Հայր Միածինը, Տէրը և Փրկիչը յառած է մեր բոլորին աչքերը և Իր փրկարար Աջը երկարած է մեզի. և Նա պիտի հովվե, պիտի առաջնորդե զմեզ: «Ի Քեզ, Տէ՛ր, յուսացայ, մի՛ ամաչեցից յաւիտեան»:

Մեր օրերուն կպայծառակերպվի մեր Ս. Եկեղեցին: Հավատքը կվերածնի, հոգիները կմաքրվեն, Քրիստոսի Ս. Ավետարանը նոր ջերմությամբ և քաղցրությամբ կլեցնե բոլոր զավակ սրտերը: Լո՛յս, պայծառ լո՜յս կիջնե Հայաստանյայց վրա՝ մերոյ լուսաւորութեան վերակացուն մեծ Լուսավորչի անմար կանթեղեն:

Երանի՛ թե կարենայինք ճիշտ հասկնալ ու տեսնել այդ իմանալի լույսը, որ սկսած է ցայտիլ, և մենք մեր ձեռքերով լայն բանայինք մեր հոգիներու լուսամուտները, ավելի շատ և ավելի լիությամբ ընդունելու համար զայն:

Մեր յավատեսությունը, Մեր համոզումը, թե կպայծառակերպվի Ս. Եկեղեցին՝ կրկին նախ Մեր հոգիին ապրումեն ու կհիմնվի այն հավատքի զգացումին վրա, որ առաքելական դարը հիշեցնող թափով և ջերմությամբ սկսած է բորբոքել մեր ժողովրդի լայն զանգվածներու հոգիները:

Ապա Մենք յստակորեն կտեսնենք ճշմարտությունը այն սրբազան սիրո և հավատավորության, որով տոգորված է մեր Ազգը թե՛ այստեղ, թե՛ Սփյուռքի մեջ, դեպի իր սուրբ հավատքի կեդրոն՝ անշեջ Լույս Խորան Ս. Էջմիածին:

Այստե՛ղ հայտնված է Աստված մեր ժողովրդին, և այստե՛ղ է լսված խոսքը:

Այստեղե՛ն կուգի մեզ համար «Ճանապարհ, ճշմարտություն և կյանք» հոգիներու:

Միածինը մեզ կրաշխավորե Էջմիածնո՛վ:

Երրորդ՝ մեզ մնացածս կուզենք նյութական շինարարական աշխատանքներու այն ընդարձակ ծրագիրը, զոր կազմած ենք և սկսած ենք կյանքի կոչել: Ինչպես կտեսնենք, տասը օրե ի վեր սկսած են արդեն աշխատանքները Մայր Տաճարի մարմարապատման:

Մենք հուսով ենք, թե առաջիկա հինգ տարիներու ընթացքին պիտի կարողանանք վերանորոգել և շինել մեր մայրենի բոլոր հռչակավոր բազմադարյան սրբավայրերը՝ Հռիփսիմեն, Գայանեն, Շողակաթը, Օշականը, Խոր-Վի-

րապը, Գեղարդը, Բջնին, Գանձասարը և ուրիշներ: Հիմնովին պիտի վերանորոգվին նաև Ս. Էջմիածինը և իր շուրջ գտնվող բոլոր շենքերը: Ինչպես գիտեք, Միութենական կառավարության Վարչապետ Բուլգանինի հատուկ կարգադրությամբ Մայր Աթոռին կվերադարձվին Էջմիածնի հողամասի վրա գտնվող և ցարդ չհանձնված բոլոր շինությունները, մեջն ըլլալով նոր Վեհարանը, երկհարկանի, հայկական ոճով մեծ շինություն (20 սրահներե բաղկացած), կառուցված 1912—1914 թվականներուն:

Հունիս 28-ին Մեր նախագահությամբ տեղի ունեցավ առաջին խորհրդակցական հանդիպումը մասնագետներու, կազմելու համար ընդհանուր ծրագիր և նախագիծ՝ Ս. Էջմիածնի հողամասի վրա կատարվելիք վերանորոգություններու և ընդհանուր բարեկարգումի: Այդ ժողովին մասնակցեցան մեր երկրի անվանի տասներկու ճարտարապետներ, հնագետներ և շինարարներ: Ժողովին ներկա եղան նաև Հայ Եկեղեցվո գործերու խորհրդի նախագահ պ. Հրաչյա Գրիգորյան, Ճարտարապետության կոմիտեի նախագահ պ. Ռուբեն Ազիզբեկյան և Էջմիածնի քաղաքային խորհրդի նախագահ պ. Հովհաննիսյան: Այս լայն խորհրդակցական ժողովեն հետո կազմվեցավ հատուկ հանձնաժողով, որ, ի նկատի ունենալով հայտնված բոլոր տեսակետները, կկազմե վերջնական ընդհանուր նախագիծը Ս. Էջմիածնի վերաշինության և բարեկարգման աշխատանքներուն: Այդ հանձնախմբի անդամներն են ճարտարապետ Միքայել Մազմանյան, ճարտարապետ Րաֆֆի Իսրայելյան, հնագետ դոկտ. Կարո Ղաֆադարյան, ճարտարապետ Վարազդատ Հարությունյան, ճարտարապետ Կոստանդին Հովհաննիսյան:

Վերին աստիճանի մխիթարական է Մեզ տեսնել, թե ինչպիսի նախանձախնդրությամբ և եռանդով մեր պետական իշխանությունն ու մեր մասնագետները իրենց լայն աջակցությունը կբերեն մեր սուրբ գործի հաջողության համար: «Ուրախ լեր, Սուրբ Եկեղեցի»:

Չորրորդ՝ այստեղ մեր հոգիները կհրճվին հաստատելով, որ շնորհիվ Վարչապետ Բուլգանինի, և մեր հայրենական կառավարության բարյացակամությամբ ձեռք բերված արտոնություններուն, Մայր Աթոռ Ս. Էջմիածինը հետզհետե կաշխուժանա և քայլ առ քայլ կկազմակերպվի Եկեղեցին, թե՛ Հայաստանի և թե՛ դրացի եղբայրական հանրապետություններուն մեջ:

Ծանոթ է Ձեզ, թե վերջին տարիներու ընթացքին արդեն բավարար չափով կազմակերպված են մեր ներքին թեմերը իրենց առաջնորդներով, թեմական և եկեղեցական խորհուրդներով: Այսպես, բացի Հայաստանի թեմերեն, ունինք երեք թեմական կեդրոններ՝ Թբիլիսին՝ Վրաստանի հայ եկեղեցիներու համար, Բաքուն՝ Ադրբեջանի և Թուրքմենստանի հայ եկեղեցիներու համար և Ռոստով՝ Հյուսիսային Կովկասի և Ռուսաստանի հայ եկեղեցիներու համար:

Մեծ ուրախությամբ ի վիճակի ենք ավետելու Ձեզ, թե մինչև սեպտեմբերի վերջը պիտի վերաբացվին 10—15 նոր եկեղեցիներ Հայաստանի մեջ, իսկ մինչև այս տարվան վերջը քանի մը տասնյակ հայ եկեղեցիներ և չորս վանքեր ևս իրենց սուրբ դռները պիտի բանան հավատացյալներու առջև՝ Վրաստանի, Ադրբեջանի, Ղարաբաղի, Նախիջևանի և Անդրկասպյան երկիրներու մեջ: Տեղյակ ենք նաև այն մասին, որ դրացի հանրապետություններու հայաշատ շրջաններուն մեջ պիտի վերաբացվին բազմաթիվ հայկական վարժարաններ:

Եվ վերջապես մխիթարական է տեսնել, թե Մայր Աթոռի մեջ կպատրաստվի և կաճի հոգևորականներու նոր սերունդ մը, որուն շարքերը հետզհետե կխտանան գիտակից և շնորհալի երիտասարդներով՝ աբեղաներ և սարկավագներ, որոնք մոտ ապագային պիտի կոչվին ղեկավար դեր ստանձնելու, զարդարելու և շենցնելու համար մեր հազարամյա Ս. Եկեղեցին: Մեր Հոգևոր Ճեմարանը ևս զարգացման ճանապարհին վրա կգտնվի: Հառաջիկա տարեշրջանին ծրագրած ենք 25—30 նոր ուսանողներ ընդունիլ հիներուն վրա, իսկ երկու տարի վերջ կհուսանք, որ Մայր Աթոռի հոգևոր կրթության այս հաստատությունը պիտի ունենա շուրջ հարյուր ուսանող, բաժնված վեց դասարաններու վրա:

Հույժ փափագելի է մեզ ուսանողներ ընդունիլ նաև արտասահմանեն:

Արդ, քանի որ այս է ճշմարիտ կացությունը այսօր, և ասոնք են լուսավոր հեռանկարներ, որ կբացվին մեր Եկեղեցվո և Մայր Աթոռին առջև, իրավունք

և պատասխանատվություն չունի՞նք այսօր Մեր յանձնառությանց, Մեր ողջերթություններն և ուրախություններն բաժին հանելու մեր հավատացյալներուն, ի մասնավորի մեր Սփյուռքի ժողովուրդին, որ հաց գտած է [illegible], թե հոգևոր և նյութական ձևով, շատոնց ի վեր կսպասեր այս օրերուն: Եվ մեր ժողովուրդը իր բնազդով չէր սխալված: Ինչքան երջանիկ էի և ուրախ, որ, թե՛ արտասահմանյան Մեր այցելություններեն առաջ, թե՛ վերադարձին՝ Մոսկվայի և Լենինգրադի կայարաններ, թե՛ Երևան և թե՛ Էջմիածին Մեր շուրջը շատ հաճախ կլսեինք նույն մաղթանքը հայ հավատացյալներու բերնեն. «Փա՜ռք Քեզ, Աստված, փա՜ռք Քեզ, այս օրեն ալ տեսանք»:

Բոլորը՝

«Եկեղեցի Հայկական...

Քու երգդ է միշտ հաղթության»:

Այս բոլորին հետ, սակայն, չենք կրնար չտեսնել նաև այն ստվերը, որ կսպառնա իջնել Մեր հանդարտեին վրա: Նախընթացներ մեր Ս. Եկեղեցվո նվիրապետական Երկրորդ Աթոռ նկատված՝ Տանն Կիլիկիո Կաթողիկոսության ծոցին մեջ ստեղծված կացության: Թեև մասնավոր Աթոռ մըն է ան, որոշ առանձնություններով, և ինչ որ ալ ըլլան այնտեղ, չի կրնար էական ազդեցություն մը ունենալ Հայ Եկեղեցվո ընդհանուր հառաջընթացին վրա, սակայն Մեր խիղճը պետք էր ըսեր, որ ան զուրս չմնար, իր իսկ գոյության և ներքնակցության համար, մեր Եկեղեցվո վերազարթնումի ընդհանուր նիգեն և շինարար աշխատանքներեն: Ս. Եկեղեցին իրեն մեկ մարմին, ինչպես ամբողջ և անխռով մնա ի Քրիստոս սիրո միության մեջ, այնպես ալ իր կենսունակ կրցանա թե՛ ինքը ամբողջը, թե՛ այդ ամբողջին մասերը, Եկեղեցվո սուրբ մարմինը իր բոլոր անդամներով:

Մեր նպատակը չէ եղած և չէ՛ միջամտել բոլոր Կիլիկիո Աթոռին ներքին գործերուն. Մեր նպատակն եղած է և է այսօ՛ր ալ՝ օգնել երկու նպատակ է, որպեսզի Անթիլիասը վերագտնե իր անկախությունը, ներքին խաղաղությունը և շինարար կյանքի ուղին, մեր Ս. Եկեղեցվո ծոցին մեջ:

Ահա թե ինչու մտատանջված և բողոքելով Զարեհ Եպիսկոպոսի կրկնակի խնդրանքներուն կատարված Եղիշե արքեպիսկոպոսի միջոցավ և Մեզի հաղորդված՝ առաջինը Փարիզ 6 ապրիլ թվակիր հեռագրով և երկրորդը Էջմիածին 4 և 6 հունիս թվակիր հեռագրերով. փորձեցինք հաշտության նոր հնարք մը գտնել և Ս. Էջմիածին հրավիրեցինք Կիլիկիո Աթոռի եպիսկոպոսներ և կողմերու աշխարհական ներկայացուցիչներ առանց խտրության, առաջարկ բերելով, որ օծումն ալ այստեղ Միածնաէջ Մայր Տաճարին մեջ կատարվի, առանց որ պատրաստվի նախընթաց մը նկատվի այդ ապագայի համար: Կամեցանք առիթ ստեղծել Մայր Աթոռին մեջ համաձայնություն մը գոյացնելու և համերաշխության հաստատելու Հայ Եկեղեցվո ծոցին մեջ: Եվ, ինչո՞ւ չէ, խորհեցանք նաև, առաջին անգամ ըլլալով մեր ազգային կյանքի վերջին 35 տարիներու ընթացքին, որ այստեղ գոյացած համաձայնությունը բերեր բարերար անդրադարձում մը կրնար ունենալ նաև մեր ազգային-հասարակական կյանքի վրա, եկեղեցական կյանքի սահմաններեն ալ անդին. և ի՞նչ, միթե ո՞չ կըլլար:

Մեր առաջին՝ 9 հունիս թվակիր հեռագրին մերժողական պատասխան ստանալով. բայց միշտ առաջնորդված խաղաղության և միության նույն ոգիով, հունիս 22-ին երկրորդ հեռագրով մը կրկնեցինք Մեր հրավերը, հարգելով ձեռամբ Տեղապահ Խորեն Եպիսկոպոսի առաջարկը, որ օծումը կատարվի Անթիլիասի Տաճարին մեջ, համաձայնությունը Էջմիածին կայացնելէ հետո: Այս երկրորդ հեռագիրը կվերջացնեինք կոչ ընելով, որ չմերժվի եղբայրական սիրո հրավերը, որ կուգար Մայր Աթոռ Ս. Էջմիածնեն:

Մեր այս երկրորդ հրավերին պատասխանը ցայսօր, 15 հուլիս, չենք ստացած: Ինչո՞ւ: Աստված. պարզ պատասխա՞ն մըն ալ կըլլացուի: «Ո՛վ Եղբայր, Անթիլիաս»: Մի՞թե սերը և հարգանքը դեպի մեր սուրբ հավատքի կեդրոնը այդ աստիճան ցամքած է ոմանց սրտերուն մեջ և ուծացումը այնքա՞ն խորացած Սփյուռքի կյանքի պայմաններուն մեջ:

Ի՞նչ պատասխան պիտի տաք, վա՛ղը, Ձեր որդիներուն:

Չենք մտածեր տխուր մեկնություններու հանգիլ, չենք փորձվիր Մեր լավատեսությունը պղտորել, չենք կամենար Մեր հույսը կտրել, սակայն չենք ալ կրնար քարսիրտ ըլլալ և լռել: Հետզհետե պարզ կերևա, որ դժբախտաբար, եկեղեցական կյանքի և եկեղեցվո շահերուն հետ աղերս չունեցող ձգտումներ պատճառ կդառնան, որ Անթիլիասը ինքզինքը Մայր Աթոռեն անջատե, հակառակ իր միաբանության և հավատացյալ ժողովուրդի կամքին:

Քաղաքական ղեկավարներու կողմե վերջերս հրատարակված երկար հոդվածաշարքեր և այլ երևույթներ հստակ կերպով ցույց կուտան, թե [illegible]րարները ողբերգակա՛ն սխալ մըն է, որ կփորձեն կատարել, Կիլիկիո Աթոռը իրենց քաղաքական պայքարի հենարան դարձնել ուզելով: Մենք կհորդորենք զիրենք հեռու կենալ նման ծրագրե և ազատ ձգել Անթիլիասը և Զարեհ եպիսկոպոսի ձեռքերը: «Ի բաց կացէք ամենեքեան»: Իսկ երբ անոնք ամեն գնով պիտի ուզեն բաժանել մեր եկեղեցին, Մենք կխորհինք, թե Խորեն, Զարեհ և Ղևոնդ եպիսկոպոսները պետք է վճռական քայլ մը առնեն և միանան այն ոգիին, որ մեր ամբողջ եկեղեցիին ոգին է, մեջը ըլլալով նաև Տանն Կիլիկիո միաբանության մեծամասնությունը:

Ինչքան ուշ չէ տակավին, թող հասկնան իրական կացությունը, ապա թե ոչ հեռու չէ այն օրը, երբ Մենք ևս պիտի չկարողանանք զիրենք փրկել:

Ոչ ոք ոչինչ կշահի ինքզինքը Ս. Էջմիածնին հակադրելով: Ո՛չ մեկ ուժ այս ժողովուրդի հոգիեն չի կրնար պոկել Ս. Էջմիածինը: Մեր կյանքի մեծ ճշմարտություններեն մեկն է այս, որ լավ հասկցվի այսօր Հայրենիքեն ներս. եթե դուրսը չհասկցողներ կան տակավին, Մենք կաղոթենք, որ Աստված անոնց ալ շնորհք տա: Մենք տարակույս չունինք, թե մեր ամբողջ հոգևորականությունը և մեր ամբողջ հավատացյալ ժողովուրդը մեկ սիրտ, մեկ հոգի, այս սկզբունքին վրա կանգնած պիտի մնան:

Ի սփյուռս աշխարհի ցրված Մեր զավակները, մեր ժողովրդի զավակները, բոլորը անխտիր պետք է միանան և ամեն գնով պաշտպանեն՝

1. Հայաստանյայց եկեղեցվո միությունն ու անբաժանելիությունը.

2. Տանն Կիլիկիո Կաթողիկոսական Աթոռին անկախությունը ամեն տեսակի քաղաքական ազդեցություններե և անոր ինքնավարությունը՝ ավանդական իր իրավասություններով.

3. Պահպանումը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Անթիլիասի Աթոռի միջև սիրո և հոգևոր գործակցության ոգիին և իրավասությանց սահմաններուն:

Այս կպահանջե մեզմե մեր Ս. Եկեղեցին, հոգևոր վերաշինության և վերակազմության այս շրջանին մանավանդ, ա՛յնպես, ինչպես ճիշտ կերպով բանաձևվեցավ եպիսկոպոսական ժողովի կողմե, Անթիլիասին առաջարկված համաձայնագրով:

Այս է Մեր հավատքը, և վառ է Մեր ՀՈՒՅՍԸ, թե ի վերջո բոլորը պիտի հասկնան Մեզ, և խաղաղության ձայնը պիտի հնչե: «Եւ արդ, զի ունիմք այսպիսի յոյս, բազում համարձակութեամբ վարեսցուք» (Բ Կորնթ., Գ 12):

Այսօր, մեր հավատացյալ և հուսացյալ ժողովուրդը, թե՛ Հայրենիքեն ներս, թե՛ Հայրենիքեն դուրս, հոգևոր կյանքի նոր հենարան մը կորոնե, հրաշքներու կհավատա, տեսիլքներ կտեսնե և սուրբեր կփնտրե, և անապատներեն դեպի Եկեղեցի, դեպի կենաց աղբյուրը կվազե, ձեռքերը դեպի Մեզի կարկառած, ու կսպասե Մեր խոսքին, կսպասե Մեր գործին: Մեր ժողովուրդը զԱստված կփնտրե:

Երկինքը պիտի բարկանար մեր վրա, եթե չգիտնայինք մեր պարտքը կատարել, եթե ի վիճակի չըլլայինք, մենք հոգևորականներս, անցողական և աշխարհիկ երևույթներեն անդին տեսնելու, բարձրանալու և բարձրացնելու համար մեր հավատացյալ ժողովուրդը, մեր Եկեղեցին, հավիտենական ճշմարտություններու և խորհուրդներու մակարդակին վրա: Մենք կոչված ենք ծառայելով իշխելու, և առաջնորդելու մեր ժողովուրդը դեպի պայծառակերպումը իր անհատական ու հավաքական կյանքին:

Բայց մենք պիտի չտկարանանք մեր առաքելութեան մեջ:

Մենք և մեր ամբողջ եպիսկոպոսական դասը հավատարիմ պիտի մնանք Ս. Հոգվո ներգործությամբ ստեղծված միության և անբաժանելիության ոգիին,

զոր ճաշակեցինք բոլորս միասին և միախորհուրդ, մեր վերջին նախահրաժեշտա-կան ճաշի մէջ, և անխախտ պիտի մնանք բոլորս այդ վեմին վրայ՝ առաքե-լական հաւատարմութեամբ և եկեղեցական միաբանութեամբ:

Եվ մենք պիտի զօրացնենք ու ծաղկեցնենք մեր Ս. Եկեղեցին: Որանք ինչ-պէս ստացեր ենք, կրանք նոյնպէս պահպանենք և ճոխացնենք:

Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցին, միշտ հաւատարիմ Քրիստոնեու-թեան պատնէշի աւանդներուն մէջ աշխարհի վրայ, և հայ ժողովրդի կեանքի խառնուած փառաւոր կերպով զարգացող այսօր է՝ և հաւատացեալ առաքել սա-գործութեամբ վերստին պիտի դառնայ մեր սուրբ նախնեաց բերդը, ուր և զե-կավարէ իր կեանքին և իր սուրբ կոչումին, առանց անկեղծ խնամակալներու:

Հայ հովիւներ եկեղեցականնե՛ր և աշխարհականնե՛ր սուրբ ուխտաններու, և դո՛ւք, հայ հաւատացեալ ժողովուրդ, ձեր ձեռքին մէջ առէք գիրք մեր բազմաչարչար Ս. Եկեղեցին և առաւել պահեցէք զայն հաւատարմ, եռանդով և համբեր հայա-տութեամբ:

Ո՜վ դուն, արթո՛ւն Գրիգոր, Ս. Լուսաւորի՛չ մեր, կրկի՜ն արդյոք մեր ձայնը լու պարձանքներից...

Մենք բոլորս, համախմբուած լու և մեր ուխտին, պիտի սրբագործենք մեր Ս. Եկեղեցին, պիտի սրբագործենք Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, պիտի սրբա-կացենք և պիտի լուսաւորենք մեր համայնքը, մեր սիրելը, մեր պատ-վական հայ ժողովուրդը:

Զի «Անցեալն է Տէր և օրհնեալ է Աստուած»:

«Պահպանեա Եկեղեցի, զեկեղեցի Քո անշարժ պահեա՛. և զերկրպագուս անուանդ Քում պահեա՛ ի խաղաղութեան»: Ամէն»:

Նորին Սուրբ Օծութեան Վեհափառ Հայրապետի ճառերեն մէկը համ-բաւաւորել եկեղեցական ազգային ժողովի նիստի 22-ի գիշերային պատգամաւորներուն ընթացքում:

ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿ. ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ

(Պատրիարք Հայոց Պոլսոյ)

# ՄԵԿ ՄԱՐՄԻՆ ԵՎ ՄԵԿ ԳԼՈՒԽ

Այս տողերուն նպատակը չէ անդրադառնալ մանրամասնությանց վրա այն շատ տխուր իրադարձություններուն, որոնք այս փետրվարի ընթացքին տեղի ունեցան Անթիլիասի մեջ հայրապետական ընտրության առիթով. Խոնարհ և իմաստորեն վճռական կեցվածք մը ընտրելիին կողմե՝ պիտի խնայեր Աթոռին այդ ցավալի և ոչ պատվաբեր երևույթները։

Հայաստանյայց Եկեղեցվո եպիսկոպոսական դասը, գլխավորությամբ Ամենայն Հայոց շնորհապարդ Կաթողիկոսին, Կահիրեի մեջ գումարված զույգ լիակատար ժողովով մը, ջանաց դարմանել կացության դառնությունը, ամենայնուրեք ու սրտցավ խորհրդակցություններով, առաջնորդված միայն Եկեղեցվո անքակտելի միության սրբազան գաղափարեն և անզանցառելի պահանջեն։ Եվ այսպես պատրաստեց «Համաձայնագիր» մը, և Վեհափառ Նախագահին ձեռքով հանձնեց զայն Անթիլիասի Աթոռի Տեղապահ գերաշնորհ Տ. Խորեն եպիսկոպոս Բարոյանին։

Մեծ եղավ մեր զարմանքը, երբ լսեցինք, թե պատասխանը եղած է ժխտական և ոչ ակնկալելի ոճով։

Եպիսկոպոսական ժողովը, այս խնդրույն քննության միջոցին, կրազկանար տասնմեկ անդամներե, որոնք միահամուռ հավանությամբ յուրացուցած էին նույն Համաձայնագիրը։ Վեհափառ Կաթողիկոսին տրված պատասխանին մեջ ամենեն ավելի անըմբռնելի կետը այն առարկությունն էր, թե Եպիսկոպոսական ժողովը իրավունք չուներ զբաղելու Անթիլիասի Աթոռին վերաբերյալ խնդիրներով։ Ասիկա կրնա ճիշտ ըլլալ, ըստ նեղմտածողական — թող ներվի մեզի այս ակամա բացատրությունը — մտայնության. բայց մենք, Հայաստանյայց Եկեղեցվո եպիսկոպոսներս, հավատացեր էինք զոնե, թե պարտականություն ունեինք միաբանողական մտահոգության։ Անթիլիասի Աթոռը դուրս չի կրնար մնալ այս միութենեն, հետևաբար և Հայ Եկեղեցվո իրավական սահմաններեն, ոչ ալ իր եպիսկոպոսները՝ նույն Եկեղեցվո եպիսկոպոսներու շարքեն։ Եկեղեցվո անկախությունը, իր միության մեջ, կդառնա անիմաստ, երբ անոր փոքրիկ մեկ մասը կցուցաբերե անջատողական ոգեբանություն։ Անթիլիասի Աթոռը, Պատրիարքական Աթոռներուն հետ, մեկ մասն է միայն, արդարև, Ամենայն Հայոց Հայրապետության Մայր Աթոռին։ Եվ 11 եպիսկոպոսները միաբաններն են այս Աթոռին, որով և իրենց ձայնը, շեշտն ու կշիռն ունի անուր ընդհանրական հեղինակության։ Մանավանդ որ այս հեղինակությունը չէ չարաշահված որևէ անարդարանալի նպատակով, այլ ընդհակառակն բարյացակամորեն օգտագործված է այն՝ անդորրության և շինության համար նույն Աթոռին։

***

Հայաստանյայց Եկեղեցին մեկ Մարմին է և ունի մեկ Գլուխ միայն, Այդ Մարմինը խորհրդանշված է Ս. Էջմիածնով, որուն Գահակալն է միակ Գլուխը։ Հասարակ տեղիք խոսք մըրրած պիտի ըլլայինք, եթե ըսեինք՝ առանց գլխի մարմին չապրիր։ Ոչ օքի անծանոթ են, կխորհինք, պատմական այն պարագաները, որոնք կհարկադրեին դահակալները առժամաբար փոխադրելու իրենց Աթոռը հարմարագույն վայրերու մեջ։ Վերջին պանդխտավայրն եղած էր Սիս։

1441 թվականը, Կաթողիկոսական միակ Աթոռին համար, եղավ և՛ փրկարար, և՛ աղետավոր։ Փրկարար, — վասնզի ան ազատեցավ պանդխտավայրին մեջ գործող օտար ազդեցություններե, աղետավոր, — հառաջ բե-

րերով փոխանցում մը եկեղեցւոյ Մայրենին մէջ։ Ընդհանրական Կաթողիկոսութեան Սսոյ Աթոռին դէմ առնուելիքով «Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան» մը։ Սսոյ Աթոռին մէկ գլուխին դէմ ցցուեցաւ ներհակ գլուխ մը, որ հաճախ համակրութիւններով ձանձրացաւ բուն Կիլիկիոյ դէմ։ Եւ այս նոր Աթոռն ալ կոչուեցաւ «Ամենայն Հայոց», Ըն-տանելով սոյն պատմութեան նորագոյնարին մէջ խօսելու և խօսելով Սսոյ Աթոռի Կաթողիկոսին տրուած տիտղոսի իմաստն։ Եւ զանգվածս — այսօր ալ կան — պատմութեան անտեղեակ գրիչներ, որոնք Սսոյ ժամանակի Աթոռն ալ կոչեցին «Մեծի Տանն Կիլիկիոյ Աթոռ», ընդհանրականութեան պատրանքով զայն պաշտպանելու համար միտքերը։

Այս խեղաթիւրումները, այո՛, մինչև օրս «Հայաստան Աշխարհ»,— ո՛չ է գեղեցիկ տարբեր ներկա անտեղյակ կեցվածքը Կաթողիկոս Աթոռին և անոր դէմ պատճառաբաններուն։

«Միակ մյուսին համար», Օսմանեան հաստատուած բացառութիւնը, որ հանելի տեղ գտաւ ժամանակի թէեւ համոզումներուն մէջ ալ, ժամանակաւորեալ մտահոգութիւն մըն է միայն, բաց մէկ Ամբողջական մէկը՝ պետք չունի և չի կրնար ունենալ ուրիշ մը։ Եթէ պայմանները հարկադրեն, մէկը դարձյալ կարող է գտնել իր ժամանակավոր տեղը։ Բայց այս վախն ալ, բարեբախտաբար, չունինք այսօր, և կ'ակնկալենք, թէ պիտի չունենանք երբեք։

Արդ, խօսք չի կրնար ըլլալ Աշապահյան Եփրեմի մը պնդումի մասին, թէ «Հայրապետական շառաւիղ ի Սրբոյն Գրիգորի Լուսաւորչէն սկսեալ, մնաց ի գերագահն Կիլիկիոյ»։ Մուսայելեան մը գերծ չէ բոլորովին պատասխանատուութենէ՝ այս շփոթ կացութեան ստեղծումին մէջ, ինչքան ալ բանագրութեան արդարացումներ գտնել նարտարվորին պատմագիրներ։ Արդյունքը չի տար մեզի փաստը այդ արդարացումներուն։

Ահա ներկա կացութիւնը այդ «Թեմփատական Աթոռ»-ին, ինչպես կորակե զայն Օրմանյան։ Եւ Ամենայն Հայոց Կաթողիկոս մը, որ իր ընդհանրական հեղինակութեամբը և այնքան բարյացակամ տրամադրութեամբ, փորձեց և անկեղծօրէն ուզեց դնել այս Աթոռը իր իրավասութեանց ճիշտ սահմանին մէջ, նախագահել ընտրութեան և օծել ընտրեալն իր իսկ ձեռքով։ Այո՛, ուզեց ընել այսպէս, բայց իրավացիօրէն նախապայման դնելով միութեան և համերաշխութեան բերել կուսակցական անհաշտ պայքարներով պառակտուած ժողովուրդը։ Նա չուզեց, ստոյգ է, որ ընտրյալն ըլլա միակ կուսակցութեան մը թևերով Աթոռ բարձրացած անձ մը, ով որ ալ եղած ըլլայ անի։ Բայց տարաբախտաբար եպիսկոպոսական դասը գերադաս եղաւ, որ համաժողովրդական ձայնով կոչված անձը բացմի հոն, ով որ ալ եղած ըլլայ անի։ Եւ երբեք խնդրո առարկա չէր նույնիսկ ներկա «ընտրյալը»։ Ո՛չ մէկ հակառակ միտք, ո՛չ մէկ կասկածամտութեան կանխամտածութիւն, մանաւանդ ո՛չ մէկ աւտամին քաղաքականութիւն, ինչպես ձրիաբար կենթադրեն ոմանք, չին պղտորած անկեղծութիւնն ու ազնվութիւնը Տ. Վազգեն Կաթողիկոսի գործողութեանց և տրամադրութեան։ Եւ ասիկա կարող ենք բոլոր մենք բարձրաբարբառ և ամենախորունկ համոզումով՝ շատ ավելի մանավանդ և մտերմօրէն խորաշափելու պատահմունքը ունեցած իր հոգին, իր կատարելապես հոգևորական խառնվածքը։ Պարզ խոսելու համար, ոչ մէկ նշույլ անգամ ենք իր վերաբերմունքի մէջ, որ մատնեն քաղաքական կամ դիվանագիտական մշուշ մը իր մէջ։ Նա միայն ու միայն ունեցաւ միակ մտահոգություն՝ պահելու Եկեղեցւո մարմնին ամբողջական միությունը և անոր միակ Գլուխին հեղինակութիւնը, վեր կուսակցական ամեն հաշիվէ և նկատումներե, զերծ նաև օտար ՄԻԱՀԿ ազդեցութենէն՝ որ ունենար քաղաքական բնույթ։ Այո՛, նախանձախնդիր եղաւ, և եպիսկոպոսները բաժնեցին այդ նախանձախնդրութիւնը, ճանչնալու և ճանչցնելու, եկեղեցական հողեր գետնի վրա, ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆԸ, որ հեղինակութիւնն է, իրապես և իրավապես զայն ընտրող Համաքականութեան ամբողջութեան, Հայաստանեայց Եկեղեցւո հարազատ զավակներուն անպակաս լրության — մէջն ըլլալով բոլոր հոսանքները առանց իրենց կուսակցական թղամիդներուն — արտահայտված իր պատգամավորներուն ձայնով։ Եւ թէ ինչո՞ւ «Սպիւռքահայը» կդառնա իսկապես միայն Ամենայն Հայոց կամ Ընդհանրական Կաթողիկոսը և ոչ թէ Անթիլիասի Հայրապետը, որ Ազգին ոչ իսկ մէկ ութերորդ ձայնի վկայութիւնն ունի։

Եվ կրկնենք, Կահիրեի Եպիսկոպոսական ժողովը կրամներ ամբողջացվին Նորին Սրբության այս պայծառ տեսութիւնը և արդարանալի մտահոգութիւնը։ Տ. Զարեհ արքազանի ընտրութիւնը», այո՛, այս տեսութեամբ և նկատումներով, գտած էր, գտած էինք և մենք եպիսկոպոսներս, «բերի և անընդունելի»։ Խոսք չկար երբեք անձին արժանավորութեան կամ անարժանութեան, Վարանում պիտի չըլլար ձեռք դնելու անոր գլխուն վրա և Ս. Մեռոնի օծումը կաթեցնելու։ Բայց մերժեցաւ, և այս՛ վճռական որոշումով և համաձայնագրի մը մատուցումով, որ այս թերին լրացվի և կատարված ընտրութիւնը դառնա ըն-

*դունների ամենուն կողմէ, ճշմարտելու և գոբացնելու համար ընտրյալին հեղինակությունը, բայց ոչ համազոր Հայաստանյայց Եկեղեցվո Միակ Գլուխի հեղինակության, որուն ենթակա պարտի ըլլալ՝* ի հոգեւոր՝ *պահելով իր անկախությունը վարչական-մատակարարողական գործառնությանց մեջ, ինչպես ճշտված է Համաձայնագրին մեջ։ Ավետարանական այս խոնարհությունը կակնկալեինք գոնե Ավետարանի պաշտոնյայեն։ Եվ մեզի ցավ և հիասթափություն պատճառեց այն ապարթանությունը, որով Եպիսկոպոսական ժողովը, ինչպես ըսինք, կնկատվեր անիրավասու զբաղելու Անթիլիասի խնդիրներով։ Ուրեմն, Անթիլիասի* ԵՐԵՔ Եպիսկոպոսները, իրենց նախաձեռն ու պաշտպան ՄԻԱԿ կուսակցությամբ, *կտրվա՞ծ են* մեկ Մարմինէն, *որ է Հայաստանյայց* Եկեղեցին *և արվեստական գլուխով տարրե՞ր մարմին մ'են եղած։*

*Մոլորանք մը կա, դժբախտաբար, որ հոգևորական դասեն փոքրիկ մաս մը կպարզե՛ Քրիստոնեական և՛ Հայաստանյայց Եկեղեցվո միարար շունչեն և այդ միությունը պահող ու ամրապնդող ոգվույն զորութենեն։*

*Ասիկա մեզի խորունկ ցավ կպատճառե, և անգամ մը ևս կոչում կընենք եկեղեցական խղճմտանքին անոնց, որոնք ուխտած են Աստուծո Տան մեջ՝* ծառայելու ժողովրդին լռության, *առանց խտրելու հաչ և հաչյակ, ըլլալու հովիվն ու սպասավորը* ամենուն. չուզելու մեկին իսկ կորուստը։ *Զունի՞նք օրինակը հանձին մեր «Հավատքի Զորագլուխ»-ին։ Ծառայել ուղիղ գիծով, քաշված՝ մեր աստվածային Ռաւվիրային կյանքով, ծառայել ա՛յն դաշտին մեջ, որ Ավետարանինն է։*

*«Արածե՛ գառներս, արածե՛ ոչխարներս» — Թող հեզությամբ ու խոնարհությամբ լսվի այս քաղցր հանձնարարությունը ամեն անոնց կողմե՝ որոնց կհանձնվին հովվական ցուպն ու սրինգը։*

*Մեծ է պատասխանատվությունը անհնազանդներուն։ Եվ դեռ ուշ չէ ուշքի գալու և դառնալու* արժանընտիր։

(Արտատպված «ՀՈՂԱՆԱԹ»-ից)

ՍԻՈՆ ԱՐՔԵՊԻՍԿ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

(Հայրապետական պատվիրակ Հարավային Ամերիկայի Հայոց)

# ՎԱՐԴԱՎԱՌ

## ԼՈՒՅՍԻ ՏՈՆԸ

Մեր Տերը Իր երկրավոր կյանքի մեծագույն դրվագները ապրեցավ լեռներու վրա, Իր բազմաչարչար կյանքին հանգրվան ընտրեց բարձունքները, ավելի մոտ Աստուծո, վեր ու հեռու մարդկային մեղքերեն ու աղմուկեն։ Ձեր մտքին առջև պատկերացուցեք Իր սուրբ կյանքը։ Իր աստվածային առաքելության Ավետարանի քարոզության սկսելե առաջ, կառանձնանա, կպատրաստվի 40 օր, ու կփորձվի բարձր լեռան մը կատարին, Փորձության լեռան վրա, Իր Ավետարանի մեծագույն պատգամները — ինը երանիները — կավանդե բլուրի մը գագաթեն, Երանության լեռան վրայեն, Իր լուսեղեն փառքը կցուցնե Թաբոր լեռան բարձունքին վրա, կխաչվի մարդոց փրկության համար՝ Երուսաղեմի մոտիկ Գողգոթայի գագաթին վրա, ու վերջապես Իր երկրավոր կյանքի մատյանը կփակե, լեռան մը կատարեն, Ձիթենյաց բարձունքեն երկինք համբառնալով։

Երեք սիրելագույն աշակերտներուն՝ Հովհաննեսի, Պետրոսի և Հակոբոսի՝ հետ կառանձնանա, կհեռանա մյուս աշակերտներեն, ու կաղոթե։ Իր դեմքը կճառագայթե հրաշալի պայծառությամբ, լուսեղեն ճառագայթներով, ձյունեն ավելի սպիտակ, աստվածային լույսով։

Հիսուսի պայծառակերպությունը լույսի հանդես է, լույսի տոնը. Եկեղեցվո ամենեն լուսափայլ տոնը։

Իր մարմինը լույսով կողողվի. երկնքի լույսին կփոխվի, կլուսեղինանա, այնպես որ Անոր սպիտակ, թափանցիկ տարրեն կարելի կըլլա տեսնել Իր աստվածային հոգին. Իր դեմքը համակ լույս է, ճառագայթարձակ. Իր հոգին կարտացոլա հոն, վասնզի հոգին լույս է ու կրակ, արև է ու սեր։

Թեև երեք աշակերտներեն քիչ մը կհեռանա, սակայն մինակ չէ. Հին Ուխտեն, Իսրայելի կրոնքին երկու մեծ ռահվիրաները հոն են. Մովսես ու Եղիա Իրեն հետ կխոսին։ Թե ինչե՞ր խոսեցան, ոչ ոք գիտե, ավետարանիչը կըսե. Խոսէին զելիցն որ կատարելոց է յԵրուսաղէմ — Իր վերջին օրերու, իր չարչարանքներու և խաչելության մասին։ Առաջին մարմնավոր էակն է, որուն հետ կխոսին անմարմին հոգիները։

Մովսես Իսրայելի առաջին փրկիչն է, օրենսդիրը. հիմնադիրը Մովսիսական կրոնքին, իսկ Եղիա՝ առաջին մարգարեն, հրեղեն կառքով երկինք բարձրացող մարգարեն.

*Անոնք երկուքն ալ իրենց երկրաւոր կեանքին մէջ երկնային լոյսով լուսաւորուեցան, առաջինը, երբ Սինա լեռնէն վար կիջնէր՝ Տասնաբանեայ պատուիրաններու տախտակը ձեռքին մէջ՝ այնքան լուսաւոր ու փայլուն էր, որ ստիպուեցաւ իր դէմքը ծածկել քողով մը, որպէսզի իր ընկերները չշլանան անոր լոյսէն, երկրորդը հրեղէն կառքով ու ձիերով երկինք տարուեցաւ։ Լոյսէ ու կրակէ երկու մարդերը կուգան վկայելու Նոր Լոյսին, որ կփողփողի Թաբոր լեռան գագաթին վրայ։ Անոնք եկան վկայելու ճշմարիտ լոյսին, անոր, որ ըսաւ. «Ես եմ լոյս աշխարհի»։*

*Հիսուս Մովսէսէն աւելի լուսափայլ դէմք մը զգեցած է, լոյսի շողեր կկաթին Իր էութենէն, ու Եղիայէն աւելի հրաշալի կերպով երկինք պիտի բարձրանայ։ Անոնք այլեւս պիտի չերեւին, աշխարհ, ասկէ վերջ, անոնց օրէնքին պէտք չունի, վասնզի Նոր Լոյսը, Նոր Օրէնսդիրը եկած է։*

*Ամպ մը կծածկէ զիրենք, ու ձայն մը կլսուի. «Դա է որդի իմ սիրելի, դմա լուարուք»։ Անոր միայն պէտք է ունկնդրէ մարդկութիւնը, Անոր՝ որ հաւիտենական կեանքի խօսքեր ունի։*

*Ամպը կանհետանայ, ու Հիսուս Իր սովորական դէմքով ու հագուստով կիջնէ վար լեռնէն, աշակերտներուն քով, Իր պարտականութեան գլուխը։ Եւ անոնց կպատուիրէ, որ ոչ ոքի պատմեն իրենց տեսածը։*

***

*Մովսէս ու Եղիան — օրէնքն ու նախանձախնդրութիւնը մարգարէին, արդարութիւն ու համոզումի քաջութիւն — առաքինութիւններ, առանց որոնց մեծութիւն չկայ—։ Գաղափարական գործիչը, առաքեալը պէտք է ունենայ արդարութիւն ու հոգեկան արիութիւն իր գաղափարները իրագործելու համար։ Օրէնքը. բարոյական օրէնքը. պարտականութեանց լոյսն է։ Առանց օրէնքի՝ արդարութիւնը վերացական երազ մը պիտի մնայ և պիտի մեռնի, առանց հոգեկան արիութեան՝ օրէնքն ու արդարութիւնը ոչինչ պիտի արժեն։*

*Մովսէսն ու Եղիան օրէնքն ու անձնուիրութիւնն են, որ կխօսին Հիսուսի՝ աստուածային Օրէնքի հետ, որով պիտի կատարուէր Աստուծոյ կամքը և Իր զոհաբերութիւնը։ Անոր աչքին պատկերացաւ Գողգոթայի խաչը, ու գիտակցութեամբ իջաւ լեռնէն վար, Իր պարտականութեան գլուխը, աւելի արի, աւելի ինքնավստահ։ Անոր աստուածային հոգին կարտացոլար Իր դէմքին վրայ, զոր աշակերտները կտեսնէին լուսաշող։*

*Հիսուսի հոգւոյն պայծառակերպութիւնը ամէն օր տեսանելի չէր աշակերտներուն, թէև միշտ ներկայ, բայց թաքուն իրենց աչքերէն, Թաբոր լեռան վրայ էր, որ զայն տեսան Իր դէմքին վրայ, Իր ներքին լոյսը՝ լուսափայլ ճառագայթումով։*

*Մենք մարդոց արտաքինը միայն կտեսնենք, մեր աչքերը անհաղորդ են անոնց ներքինին։ Բայց, պահեր կան, երբ հոգին կփայլի դէմքին վրայ, երբ արտաքին տեսքը կլուսաւորուի ներքին լոյսով, այն ատեն միայն կտեսնենք ու կճանչնանք բուն մարդը, անոր հոգին։*

*Ու ներքինը, հոգեկանը կտեսնեն անոնք, որ տեսիլք ունին, ներշնչումի ընդունակ են, աստուածային շնորհք ունին։ Տեսանողն ու սուրբը, արուեստագէտն ու բանաստեղծը, ներհայեցողն ու հոգետեսը կտեսնեն հասարակ մահկանացուներու չտեսածը՝ իրենց հոգեկան աչքերով։ Ու հոգին տեսնելու շնորհքը կտրուի անոնց, որ հաւատք ունին ու սէր։ Անոնք, որ կրնան ընդունարան ըլլալ Աստուծոյ։*

*Գաղափարի մը նուիրուած անհատը կամ գործիչը պէտք է ունենայ իր հոգիի պայծառակերպութեան պահերը, անդրադառնալու համար իր հոգւոյն, իր էութեան, ու գիտակցելու համար իր ձգտումներուն ու առաքելութեան։*

***

*Պայծառակերպութիւնը ուրվագիծն է Համբարձման, սակայն, փառքով համբառնալու համար՝ պէտք է, որ անարգութեամբ չարչարուի Մարդու Որդին, խաչուի ու թաղուի հարութեամբ հաղթելու համար մահուան։*

*Աստուծոյ Որդին Իր երկրային կեանքի ընթացքին երկու անգամ միայն փառաւորուեցաւ. Պայծառակերպութեան ու Ծաղկազարդին, առաջինին, ուղեց որ գաղտնի մնայ, իսկ երկրորդին՝ փութացուց. որ մարգարէութիւնը կատարուի. Ան, փառաց Տէրը պէտք չունէր փառքի ցոյցին։*

*Հիսուսի Պայծառակերպութեան լեռը Նազարէթի քով Թաբորն է. ի՞նչ հրաշալի բարձունք, արդարև. Տէրը անկէ աւելի գեղեցիկ կատար մը պիտի չգտնէր Պաղեստինի մէջ՝ Իր աստուածային փառքը ցուցնելու համար։ Թաբոր լեռը կիշխէ Նազարէթի ընդարձակ դաշտին, հրաշագեղ տեսարան մը կպարզուի անոր գագաթին վրայ ելլողին աչքին, բնութեան գեղեցիկ համայնապատկեր մը։ Սակայն, Յովհաննէս առաքեալ զայն կկոչէ Սուրբ Լեռ, սրբութեան լեռը, որ կոչուած է նաև Աղօթքի Լեռ։*

*Ամէն քրիստոնեայ պէտք է ունենայ իր պայծառակերպութեան լեռը, իր աղօթքի*

սուրբ լեռը. անկէ հաղորդակցելու համար Աստուծոյ հետ. Առանց Հիսուսի չենք կրնար վերելակել սրբութեան լեռը. Անոր պիտի հետեւինք. Անոր շնորհիվ պիտի անցնինք պայծառակերպութեան յուսաշող փառքը, ինչպես Պետրոս, Հակոբոս և Յովհաննես առաքյալները, բայց անոնց բախտին արժանանալու համար՝ պետք է ունենալ մեկուն հավատքի վեհը, և միւսներուն սառժանք, սիրալից սիրտը:

Տիրոջ սրբութեան լեռը կարելի չէ ելել աշխարհիկ զգացումներով, գիտութեան անմարմին ուղերով ու կոշիկներով, այլ հավատքով ու սրբութեամբ: Մովսես իր կոշիկները հանեց Սինա լեռան վրայ: Աստուծոյ սուրբ լեռը բարձրանալու համար պետք է մերկանալ մեղքի կոշիկներեն, աղտոտութեան ու չարութեան կապանքներեն, սիրտ և սրբութեան թևերով միայն կարելի է վերասլանալ դեպի երկինք:

Սաղմոսերգուն կհարցնէ. «Ո՞վ ելցէ ի լեռն Տեառն, կամ ո՞վ կացցէ ի տեղւոջ սրբութեան նորա», և շատ իմաստութեամբ կպատասխանէ. «Որ սուրբ է ձեռօք և անբիծ սրտիւ»: Ու սրբութեան Տէրը կըսէ. «Երանի՜ այնոցիկ, որ սուրբ են սրտիւ, զի նոքա զԱստուած տեսցեն»: Սուրբին վիճակի մեջ, մեղքերով թաթխված հոգին չի կրնար բարձրանալ սրբութեան լեռը: Մեղքի ճահճի մեջ կոխկռտացող դարուս, կամ գետնի խորշերուն մեջ ապրող խլուրդը կրնա՞ ըմբռնել լույսի հրաշքը, կրնա՞ սավառնիլ օդին մեջ. պետք է ունենալ արծիվի թեւեր՝ ճախրելու համար կապույտ երկինքն ի վեր:

Երբ մարդ բարձր լեռան մը կատարը կելլէ՝ իր հոգին կմեծնայ, կազնուանայ, միտքով ու սրտով դաշտեր կերեւին անոր ու ինքը հսկայ մը կկարծէ ինքզինքը:

Անոնք որ կարող են բարձրանալ հոգիով ու սրտով Տիրոջ Սուրբ լեռը, արդարութեան, բարութեան ու սրբութեան բարձունքը, անոնք միայն կրնան տեսնել զԱստուած, նշմարել Անոր անմահական, լուսավառ դեմքը, ու լսել հրեշտակներու երգը: Ու երբ վարի, սովորական, առօրյա կյանքին կդառնան՝ օծված պիտի ըլլան ցողով ու արշալույսի առտուան ցոլքերը պիտի լուսավորեն անոնց դեմքը, և անոնց կյանքը պիտի վերածնի ու նորոգվի, յարդ պիտի փոխվի հեգ դասնուկի, և երբ Հիսուսի սիրույն վեհութեան բարձրութեան հասնին՝ իրենք ալ պիտի կերպարանափոխվին ու պայծառակերպվին:

Մարդիկ իրենց կյանքի տափակ ու մեղսալից վիճակեն, մերթ ընդ մերթ պետք ունին բարձրանալու, ելլելու իրենց պայծառակերպութեան լեռը՝ գալ մը մերկանալու համար նյութի կերպարանքեն, ձերբազատվելու համար աշխարհի մեղքի շղթաներեն, ու նորոգվելու համար հոգիով ու լույսով նոր Աստուծո փառքը տեսնելու, ու Անոր հետ խոսելէ վերջ՝ իրենց կյանքի պատգամը ընդունելով անկե, վերածնած՝ կյանքին պետք է իջնեն, մարդոց իդեալով ու առաքյալի տեսիլքով:




# ԱՍՏՎԱԾԱՇՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

## Ա Ռ Ա Կ Ք   Ս Ո Ղ Ո Մ Ո Ն Ի

Ճանաչել զիմաստութիւն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ, ընդունել զդարձուածս բանից, ի միտ առնուլ զարդարութիւն ճշմարիտ, և ուղղել զիրաւունս. զի տացէ անմեղաց զխորագիտութիւն, մանկանց տղայոց զմիտս և զհանճար. որոց իբրև լուիցէ իմաստունն՝ իմաստնագոյն լիցի, իսկ որ հանճարեղն իցէ զառաջնորդութիւն ստասցի, ի միտ առցէ զառակս և զբանս խորինս, զճառս իմաստնոց և զառակս նոցա: Սկիզբն իմաստութեան երկիւղ Տեառն, հանճար բարի ամենեցուն որ առնեն զնա. պաշտօն բարի առ Աստուած՝ սկիզբն զգօնութեան. զիմաստութիւն և զխրատ ամպարիշտք անգոսնեն:

Լուր, որդեակ, խրատու հօր քո, և մի՛ մերժեր զօրէնս մօր քո. զի պսակ շնորհաց ընկալցի գլուխ քո, և մանեակ ոսկի ի պարանոցի քում:

Որդեակ, մի՛ խաբեսցեն զքեզ արք ամպարիշտք, և մի՛ ախորժեսցես՝ եթէ կոչեսցեն զքեզ և ասիցեն, եկ ընդ մեզ՝ կցորդ լեր արեան, ծածկեսցուք յերկրի զայր արդար ի տարապարտուց. կլցուք զնա կենդանւոյն իբրև դժոխք, և բարձցուք զյիշատակս նորա յերկրէ. և զստացուածս նորա զպէսպէսս ըմբռնեսցուք, լցցուք զտունս մեր աւարաւ. զվիճակ քո արկ ընդ մեզ, քսակ հասարակաց ստասցուք ամենեքեան, գանձարան ի միասին եղիցի մեր:

Որդեակ, մի՛ երթար ճանապարհ ընդ նոսա, խոտորեա զոտն քո ի շաւղաց նոցա: Զի ոտք նոցա ի չարիս ընթանան, և երագունք են ի հեղուլ զարիւն: Զի ոչ եթէ տարապարտուց ձգեն զործիս թռչնոց. զի նոքին իսկ որ սպանութեանն հաղորդ են գանձեն անձանց իւրեանց զչարիս. կործանումն արանց անօրինաց չար է: Այս ճանապարհք են ամենեցուն որ գործեն զանօրէնս, զի ամպարշտութեամբն զանձինս իւրեանց սատակեն:

Իմաստութիւն յելս ճանապարհաց գովի, և ի հրապարակս համարձակութիւն բերէ. և ի

գլուխ պարսպաց քարոզի, և առ դրունս հզօ-
րաց յանճախել, և ի դրունս քաղաքաց համար-
ձակեալ խօսի: Որչափ ժամանակս անմեղք
իցեն զհետ արդարութեան, ոչ ամաչեսցեն.
իսկ անմիտք ցանկացողք թշնամանաց՝ ամ-
բարշտացեալք ատեցին զիմաստութիւն, և զա-
պարտ եղեն յանդիմանութեանց: Ահա-
ւասիկ առաջի առնեմ ձեզ զոգւոյն իմոյ
զպատգամս, ուսուցից զբանս իմ ձեզ: Քանզի
կոչէի, և ոչ լսէիք. յերկարէի զբանս իմ, և ոչ
անսայիք. այլ արտաքս առնէիք զխորհուրդս
իմ, և յանդիմանութեանց իմոց ոչ անսայիք:
Այսուհետև ես ծիծաղեցայց զկորստեամբ ձե-
րով, և ուրախ եղէց՝ յորժամ գայցէ ձեզ նե-
ղութիւն և պաշարումն: Եւ յորժամ հասանիցէ
ձեզ յանկարծակի խռովութիւն, և կործանումն
ի նմանութիւն մրրկի գայցէ. կամ յորժամ
հասանիցէ ձեզ տառապումն. իցէ զի կար-
դայցէ՛ք առ իս, և ես ոչ լուիցեմ ձեզ. խնդրես-
ցեն զիս չարք, և ոչ գտանիցեն. զի ատեցին
զիմաստութիւն, և զերկիւղ Տեառն ոչ խնդրե-
ցին. և ոչ կամէին անսալ խորհրդոց իմոց, և
արհամարհէին զյանդիմանութիւնս իմ: Այ-
սուհետև կերիցեն զպտուղս ճանապարհաց
իւրեանց, և իւրեանց ամպարշտութեամբն
յագեսցին: Փոխանակ զի զրկէին զտղայս՝ կո-
տորեսցին, և կշտամբութիւն զամպարիշտս
սատակեսցէ: Իսկ որ ինձ լսէ՝ բնակեսցէ յու-
սով, և դադարեսցէ աներկիւղ յամենայն չա-
րութենէ:

(Առակ Ա. 22—33)





## ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ

Եւ տեսեալ զժողովուրդն՝ ել ի լեառն. և իբրև նստաւ անդ, մատեան առ նա աշակերտք նորա. և բացեալ զբերան իւր ուսուցանէր զնոսա և ասէր.

Երանի աղքատաց հոգւով, զի նոցա է արքայութիւն երկնից: Երանի սգաւորաց, զի նոքա մխիթարեսցին: Երանի հեզոց, զի նոքա ժառանգեսցեն զերկիր: Երանի որ քաղցեալ և ծարաւի իցեն արդարութեան, զի նոքա յագեսցին: Երանի ողորմածաց, զի նոքա ողորմութիւն գտցեն: Երանի այնոցիկ որ սուրբ են սրտիւք, զի նոքա զԱստուած տեսցեն: Երանի խաղաղարարաց, զի նոքա որդիք Աստուծոյ կոչեսցին: Երանի որ հալածեալ իցեն վասն արդարութեան, զի նոցա է արքայութիւն երկնից: Երանի է ձեզ յորժամ նախատիցեն զձեզ և հալածեսցեն, և ասիցեն զամենայն բան չար զձէնջ սուտ վասն իմ. ցնծացէք և ուրախ լերուք, զի վարձք ձեր բազում են յերկինս. զի այսպէս հալածեցին զմարգարէսն որ յառաջ քան զձեզ էին:

Դուք էք աղ երկրի. ապա թէ աղն անհամի, ի՞ւ յաղիցի. ոչ իմիք ազդիցէ այնուհետև. բայց եթէ ընկենուլ արտաքս և կոխան լինել ի մարդկանէ: Դուք էք լոյս աշխարհի. ոչ կարէ քաղաք թաքչել որ ի վերայ լերին կայցէ: Եւ ոչ լուցանեն ճրագ և դնեն ընդ գրուանաւ, այլ՝ ի վերայ աշտանակի, և լոյս տայ ամենեցուն որ ի տանն իցեն: Այնպէս լուսաւորեսցէ լոյս ձեր առաջի մարդկան, որպէս զի տեսցեն զգործս ձեր բարիս, և փառաւորեսցեն զՀայր ձեր որ յերկինս է:

Մի՛ համարիք եթէ եկի լուծանել զօրէնս կամ զմարգարէս. ոչ եկի լուծանել, այլ՝ լնուլ: Ամէն ասեմ ձեզ. մինչև անցցեն երկինք և երկիր, յովտ մի որ նշանախեց մի է ոչ անցցէ յօրինացն և ի մարգարէից մինչև ամենայն եղիցի: Որ ոք լուծցէ մի ինչ ի պատուիրանացս յայսցանէ ի փոքունց և ուսուսցէ այնպէս զմարդիկ՝ փոքր կոչեսցի յարքայութեան երկնից. իսկ որ արասցէ և ուսուսցէ՝ նա մեծ կոչեսցի յարքայութեան երկնից: Բայց ասեմ ձեզ, զի եթէ ոչ առաւելուցու արդարութիւն ձեր աւելի քան զդպրացն և զփարիսեցւոց, ոչ մտանիցէք յարքայութիւն երկնից:

Լուարուք զի ասացաւ առաջնոցն թէ Մի՛ սպանաներ. զի որ սպանանիցէ՝ պարտական լիցի դատաստանի: Այլ ես ասեմ ձեզ եթէ. Ամենայն որ բարկանայ եղբօր իւրում տարապարտուց՝ պարտաւոր լիցի դատաստանի. և որ ասիցէ ցեղբայր իւր Յիմար՝ պարտաւոր լիցի ի գեհենն հրոյն: Եթէ մատուցանիցես զպատարագ քո ի վերայ սեղանոյ. և անդ յիշեսցես եթէ եղբայր քո ունիցի ինչ խէթ զքէն, թող զպատարագն քո առաջի սեղանոյն. և երթ նախ հաշտեաց ընդ եղբօր քում, և ապա եկեալ մատուսջիր զպատարագն քո: Լեր իրաւախոհ ընդ ոսոխի քում վաղագոյն.

մինչ դեռ կաս ընդ նմա ի ճանապարհի. գուցէ մատնիցէ զքեզ ոսոխն դատաւորի, և դատաւորն դահճի, և արգելցիս ի բանտի: Ամէն ասեմ քեզ, ոչ ելանիցես անտի մինչև հատուցանիցես զյետին նաքարակիտն:

Լուարուք զի ասացաւ. Մի՛ շնար: Բայց ես ասեմ ձեզ, թէ, Ամենայն որ հայի ի կին մարդ առ ի ցանկանալոյ նմա՝ անդէն շնացաւ ընդ նմա ի սրտի իւրում: Եթէ ակն քո աջ գայթակղեցուցանէ զքեզ, խլեա զնա և ընկեա ի քէն. զի լաւ է քեզ եթէ մի յանդամոց քոց կորիցէ, և մի՛ ամենայն մարմինդ քո անկանիցի ի գեհեն: Եւ եթէ աջ ձեռն քո գայթակղեցուցանէ զքեզ, հատ զնա և ընկեա ի քէն. զի լաւ է քեզ եթէ մի յանդամոց քոց կորիցէ. և մի՛ ամենայն մարմինդ քո արկանիցի ի գեհեն: Եւ եթէ աջ ձեռն քո գայթակղեցուցանէ զքեզ, հատ զնա և ընկեա ի քէն. զի լաւ է քեզ եթէ մի յանդամոց քոց կորիցէ. և մի՛ ամենայն մարմինդ քո արկանիցի ի գեհեն: Ապաքէն ասացաւ եթէ, Որ արձակիցէ զկին իւր՝ տացէ նմա զարձակմանն. բայց ես ասեմ ձեզ եթէ, Ամենայն որ արձակէ զկին իւր առանց բանի պոռնկութեան՝ նա տայ նմա շնալ. և որ զարձակեալն առնէ՝ շնայ:

Դարձեալ լուարուք զի ասացաւ առաջնոցն, Մի՛ երդնուցուս սուտ, բայց հատուսցես Տեառն զերդմունս քո: Այլ ես ասեմ ձեզ. Ամենևին մի՛ երդնուլ, մի՛ յերկինս՝ զի է աթոռ Աստուծոյ. և մի՛ յերկիր՝ զի պատուանդան է ոտից նորա, և մի՛ յԵրուսաղէմ՝ զի քաղաք է մեծի արքայի. և մի՛ ի գլուխ քո երդնուցուս, զի ոչ կարես մազ մի սպիտակ առնել կամ թուխ: Այլ եղիցի ձեր բան՝ Այոն այո, և, Ոչն ոչ. զի աւելին քան զայն ի չարէն է:

Լուարուք զի ասացաւ, Ակն ընդական և ատամն ընդ ատաման: Այլ ես ասեմ ձեզ, Մի՛ կալ հակառակ չարին. այլ եթէ ոք ածիցէ ապտակ յաջ ծնօտ քո, դարձո նմա և զմիւսն: Եւ որ կամիցի ոք դատել և առնուլ զշապիկս քո՝ թող ի նա և զբաճկոն քո: Եւ որ տարապարհակ վարիցէ զքեզ մղոն մի՝ երթ ընդ նմա և երկուս: Որում խնդրէ ի քէն՝ տուր. և որ կամի փոխ առնուլ ի քէն՝ մի՛ դարձուցաներ զերեսս:

Լուարուք ապաքէն զի ասացաւ, Սիրեսցես զընկեր քո, և ատեսցես զթշնամին քո: Այլ ես ասեմ ձեզ. Սիրեցէք զթշնամիս ձեր, օրհնեցէք զանիծիչս ձեր, բարի արարէք ատելեաց ձերոց. և աղօթս արարէք ի վերայ այնոցիկ որ լլկեն զձեզ և հալածեն. զի եղիջիք որդիք Հօր ձերոյ որ յերկինսն է. զի զարեգակն իւր ծագէ ի վերայ չարաց և բարեաց, և ածէ անձրև ի վերայ արդարոց և մեղաւորաց: Զի եթէ սիրիցէք զայնոսիկ որ սիրեն զձեզ՝ զի՞նչ վարձք իցեն. ո՞չ ապաքէն և մաքսաւորք զնոյն գործեն: Եւ եթէ տայցէք միայն ողջոյն բարեկամաց ձերոց, զի՞նչ աւելի առնէք. ո՞չ ապաքէն մաքսաւորք և մեղաւորք զնոյն գործեն: Արդ եղերուք դուք կատարեալք, որպէս և Հայրն ձեր երկնաւոր կատարեալ է:

(Գլուխ Ե, 1—48)



# ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԲՅՈՒՐԱԿԱՆԻ ԱՍՏՂԱԴԻՏԱՐԱՆՈՒՄ

Ամառային վառ ու շոգ օրերից մեկն է։

Նորին Ս. Օծությունն Վեհափառ Հայրապետը այդ օր՝ հուլիսի 31-ին, երեկոյան դեմ, բարեհաճեց այցելել Բյուրական։

Վեհափառ Հայրապետի հրավերով, Նորին Ս. Օծության ընկերակցում էր Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պ. Հ. Գրիգորյանը։

Վեհափառ Հայրապետին ընկերակցում էին նաև Ս. Էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները, տողերիս գրող դավանականկիր Սեսրոպ արքեպս. Անթարյանը և Մայր Աթոռի դիվանապետ պ. Հայկ Առաքելյանը։

Բյուրականը անցյալում եղել է Ամենայն Հայոց Հայրապետների պատմական ամառանոցը։

Ջառիվեր ու ոլորապտույտ ճանապարհով բարձրանում ենք գյուղ։ Կանաչազարդ պուրակի տպավորություն է թողնում Բյուրականը՝ իր հաճելի օդով և զուլալ ջրով։ Կանգ առանք բարձր դիրքի վրա կառուցված պարզ ու համեստ մի շենքի առաջ, որը եղել է կաթողիկոսական հին ամառանոցը։ Սրա կողքին արդեն բարձրացել է վարդագույն տուֆից գեղեցիկ, եռահարկ մի շենք, որը լինելու է Բյուրականի միջնակարգ դպրոցի նոր շենքը։

Կաթողիկոսարանի ամառանոցի շենքի շինությունն ու պատմությունը կապված է հատկապես Գևորգ Դ և Խրիմյան Հայրիկ կաթողիկոսների անունների հետ։ Մասնավորապես Խրիմյան Հայրիկը շատ քաղցր հիշատակներ է թողել իր այստեղ հանգստացած ժամանակ, քաղցր հուշեր, որոնք պահվում են Բյուրականի բնակիչների և մանավանդ Խրիմյանի հետ միաժամանակ հանգստացող Գևորգյան Ճեմարանի նախկին սաների և դասախոսների մոտ։ Վեհափառ Հայրապետը շենքին ծանոթացավ հանգամանորեն։ Հուզումով դիտեցինք պատմական այն ծառը, որի տակ թիկն տված դիրքով Խրիմյան Հայրիկը նկարվել է։ Մեծ հաճույքով խմեցինք Բյուրականի սառնորակ ջուրը։ Մինչ այդ արդեն ողջ բնակչությունը տեղյակ եղավ Վեհափառի ժամանման մասին և հոծ բազմություն խռնվեց մեր շուրջը։ Վեհափառ Հայրապետի այցը խիստ ոգևորել էր ժողովրդին, որը ջանասեր մեղուների պարսի նման պտտվում էր նրա շուրջը։ Վեհափառը մտերիմ խոսակցություն ունեցավ աշակերտների հետ նրանց ուսման, դաստիարակության և տարեվերջի քննությունների շուրջ, հետաքրքրվեց նրանց արձակուրդային օրերի աշխատանքներով։ Կոլտնտեսության նախագահի հետ ունեցած զրույցի ժամանակ Վեհափառ Հայրապետը հետաքրքրվեց այս տարվա բերքի վիճակով, գյուղացիության նյութական կացությամբ, մշակութային և կենցաղային պայմաններով։ Այս մտերմական, սրտագին խոսակցությունը խոր գոհունակություն պատճառեց ներկաներին։

Ապա եղանք գյուղի հնամյա եկեղեցում, որը առաջին իսկ հայացքից խորհրդավոր տպավորություն է թողնում այցելուների վրա։ Եկեղեցին կառուցված է կարմրավուն տուֆ քարից։ Ունի ճարտարապետական ուշագրավ կառուցվածք և բազիլիկ ձև։ Եկեղեցին մշտապես լցված է լինում հավատացյալներով, նույնիսկ հեռավոր վայրերից եկած բազմաթիվ ուխտավորներով։ Վեհափառը երբ այս մասին հետաքրքրվեց, նրանից օդափոխության համար Բյուրական եկած մի տիկին ասաց, որ ինքը կիրակի օրը մատաղ է արել. և խնդրեց համբուրել Նորին Սրբության Աջը։ Աղոթքից հետո հրաժեշտ տվեցինք եկեղեցուն

և այցելեցինք դեպի Աստղադիտարանը։ Ճանա-պարհը խորապես սպեղված և զարդված տրամադրությամբ ճանապարհ՝ դեպի Վեհա-փառ Հայրապետին։

Բյուրականի գեղազիր մեկ բլրի վրա բարձ-րանում է Աստղադիտարանը, ուր հայրենի գիտնականները այստեղ միլիոնավոր լույսերով գիշերները դիտում են մեր աստղային երկին-քը։ Հրաշալի է այդ երկինքը և զարմանալի նրա գաղտնիքները։ Յուրաքանչյուր մի կյանք



Բյուրականի աստղադիտարանը

թափառում է այնտեղ մոլորակից մոլորակ, աստղից աստղ, միգամածից միգամած, և որքա՜ն ուշագրավ է հետևել այդ խորհրդա-վոր կյանքի ընթացքին և վայրիվերումներին։

Մտնելով Աստղադիտարանի գեղեցիկ դար-բասից ներս, այնտեղ մեզ դիմավորեց գիտ-նականների մի խումբ իրենց ընտանիքներով։ Թեթև մթության մեջ նկատելի էին շրջակա շենքերի հայ ճարտարապետական ոճով ու ճաշակով կատարված ձևավորումները, որոնք գեղեցիկ դիրքի, օդի, ջրի ու մանավանդ հրա-շալի երկնքի հետ ստեղծում են չափազանց հաճելի մթնոլորտ, բանաստեղծական գողտ-րիկ մի անկյուն։ Նրանք, որոնք առաջին ան-գամ են այցելում այստեղ, թվում է, թե իրենք գտնվում են երկնքին ամենամոտիկ կետի վրա, որտեղից կարծես հեշտությամբ հնա-րավոր է կարդալ անհամար աստղերի անցյալն ու ապագա ճակատագիրը։ Սակայն այս միամիտ կարծիքը այցելուին խիստ ան-հարմար դրության մեջ է թողնում, երբ լսում է Աստղադիտարանի գիտական հմուտ քարտու-ղար պ. Միրզոյանի սպառիչ բացատրություն-ներ, երբ տեսնում է բարդ հեռադիտակները, լաբորատորիայում տեղակայված մեքենա-գործիքները, լուսանկարչական թիթեղիկնե-րով ստացված աստղանկարները, երբ տեղե-կանում է հազար ու մի զարմանալի գաղտ-նիքների մասին, նոր կազմվող աստղերի, աստղասփյուռների մասին, որոնց ծնորա-ծին անունը տրվեց միմիայն միլիոնավոր տարիների կյանք ունենալու համար։ Այցե-լուն կամա-ակամա ընկնում է զանազան խորհրդածությունների մեջ, փորձում է զար-

մանքը թաքցնել, հիացումը զուսպ կերպով ի հայտ բերել, չափել, վերլուծել, բացատրել այլևայլ բաներ, ու լռությամբ խոնարհեցնում է հոգնած թարթիչները, այնուամենայնիվ բավարարված չլինելով իր «եզրակացություններից»։ Բյուրականի գեղեցիկ գիշերը պայծառորեն վկայում է այն մասին, թե իրոք աստղերն ունեն իրենց բանաստեղծությունը. Հայաստանի գիտնականները ամեն գիշեր հաղորդվելով այդ բանաստեղծության թևավորիչ խորհրդին, ճամփորդել են երկնային բոլոր մարմինների միջով ու նվաճել են շատ ու շատ բարձունքներ, մանավանդ աստղասփյուռներ։ Այդ գիտնականների կյանքը յուրօրինակ է ոչ միայն նրա համար, որ գիշերային է, այլև նրա համար, որ երկնային է, բայց երկրի համար։ Այս հանգամանքն է այն գործուն հետաքրքրության շարժառիթը, որոնցով նրանք շրջապատված են ինչպես մեր ժողովրդի, այնպես էլ ամբողջ գիտակից մարդկության կողմից։ Այդ չի՞ վկայում արդյոք այն գեղեցիկ փաստը, որ փոքրիկ Բյուրականի մեծ պատվիրակը, մեր ժողովրդի տաղանդավոր որդի Վիկտոր Համբարձումյանը Լոնդոնում աստղերի մասին խոսելիս փառքն ունեցավ իր ուսերին կրելու մեծ Նյուտոնի թիկնոցը։

Մենք համոզվեցինք, որ ընդամենը տասը տարի առաջ ծնված Աստղադիտարանը այնպիսի հսկայաքայլ առաջընթաց է ապրում, որ սուզվելով երկնքի մեջ, ամենից առաջ հասավ աստղասփյուռներին, մի տեղ, որտեղից լույսն անգամ միլիոնավոր տարիներ առաջ ճանապարհ ընկնելով դեռևս Հայաստան չի հասել... Ահա թե ինչու Հայոց Հայրապետը պատվավոր հյուրերի մատյանում խանդավառությամբ արձանագրեց.

«Այսօր, հուլիսի 31-ին, այցելեցինք մեր երկրի աստղադիտարանը հիացումի և հպարտության զգացումով»։

Բոլորս էլ նման զգացումներով էինք ոգորված, երբ հրաժեշտ էինք առնում Աստղադիտարանից։ Բոլորս էլ երջանիկ էինք տուն վերադարձին։

Փա՜ռք հայրենի մեր գիտությանը։

Փա՜ռք մեր փոքրիկ Հայաստանի մեծ գիտնականներին։

ՄԵՍՐՈՊ ԱՐԵՂԱ ԱՆԹԱՌՅԱՆ

# ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՁՐ ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ

*«Էջմիածին» ամսագրի էջերում սրտագին ուրախությամբ ենք հրատարակում Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հարազատ ու հավատարիմ այն զավակների անունները, որոնցից ոմանք իրենց երկարամյա ազգօգուտ և եկեղեցանվեր գործունեության և հասարակական աշխատանքների, ուրիշներ՝ իրենց եկեղեցանվեր սրտաբուխ և առատաձեռն պարգևների համար, ի նշան երախտիքի գնահատանքի և սիրո, արժանացել են Ամենայն Հայոց Հայրապետ Նորին Ս. Օծության Տ. Տ. Վազգեն Ա-ի ուշադրության և պարգևատրվել են Հունիսի 14-ի հայրապետական սրբատառ կոնդակով և Ս. Գրիգոր Լուսավորչի առաջին կարգի ականակուռ ոսկյա շքանշանով։*

*Հայրապետական այս բարձր գնահատության արժանացողներից ոմանք իրենց գործունեությամբ անձամբ են ծանոթ են Նորին Ս. Օծության Վեհափառ Հայրապետին, վերջերս արտասահմանում կատարած Իր հովվապետական այցելության ժամանակից։ Ուրիշները պարգևատրվել են թեմակալ սրբազան առաջնորդների բարեխոսությամբ և միջնորդությամբ։*

Ս. Գրիգոր Լուսավորչի առաջին կարգի ականակուռ ոսկյա շքանշանով պարգևատրվել են.

*Եգիպտոսի հայոց բարեխնամ առաջնորդ գերաշնորհ Տ. Մամբրե արքեպիսկոպոս Սիրունյանի միջնորդությամբ՝*

**ՏԻԱՐ ՀՐԱՆՏ ՆԱՍԻՔՅԱՆ**, *ատենապետ Կահիրեի Քաղաքական ժողովի և բարերար Մայր Աթոռի.*

**ՏԻԱՐ ՄԱՐՏԻՆ ՋԱՐԳՀԱՆԵԼՅԱՆ**, *ատենապետ Ալեքսանդրիայի Քաղաքական ժողովի.*

**ՄԵԹՐ ԳԵՎՈՐԳ ՔԱՑԱՐՅԱՆ**, *ատենապետ Ալեքսանդրիայի Թեմական ժողովի.*

**ՏԻԱՐ ԱՐՄԵՆԱԿ ՓԵՏԵՎՅԱՆ**, *ատենադպիր Կահիրեի Թեմական ժողովի.*

**ՏԵՐ ԵՎ ՏԻԿԻՆ ՋԱՐԵՀ ՍԱԴԱՅԱՆ**, *ազգային բարերարներ.*

**ՏԻԱՐ ԼԵՎՈՆ ՇԱԼՃՅԱՆ**, *անդամ Կահիրեի Թեմական ժողովի.*

*Նորին Ս. Օծության Վեհափառ Հայրապետի անձնական գնահատանքով՝*

**ՏԻԱՐ ՆՈՒԲԱՐ ԿՅՈՒԼԲԵՆԿՅԱՆ** *(Լոնդոն), բարերար Մայր Աթոռի.*

**ՏԻԱՐ ՍԱՐՔՈ ՓԱՓՐՃՅԱՆ** *(Մանչեստր), բարերար Մայր Աթոռի.*

*Հյուսիսային Ամերիկայի հայոց Արևելյան թեմի բարեխնամ առաջնորդ գերաշնորհ Տ. Մամբրե արքեպիսկոպոս Գալֆայանի միջնորդությամբ՝*

**ՏԻԱՐ ՏԻԳՐԱՆ ՍՄՍԱՐՅԱՆ**, *Թեմական խորհրդի անդամ.*

**ՏԵՐ ԵՎ ՏԻԿԻՆ ՀԵՐԻ ԹԱԹՈՍՅԱՆ**, *ազգային բարերարներ.*

**ՏԻԱՐ ՊՈՂՈՍ ՂՈՒԿԱՍՅԱՆ**, *ազգային բարերար.*

**ՏԻԱՐ ՄՈՎՍԵՍ ՀԵՐԻ ՄՈՎՍԵՍՅԱՆ**, *ազգային բարերար.*

*Կալիֆորնիայի թեմի բարեխնամ առաջնորդ գերաշնորհ Տ. Շնորհք եպիսկոպոս Գալուստյանի միջնորդությամբ՝*

**ՏԻԱՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՓԵՐՓԵՐՅԱՆ**, *ազգային բարերար.*

**ՏԻԱՐ ԱՌԱՔԵԼ ՑԱՂՐԺՅԱՆ**, *ազգային բարերար.*

*Հարավային Ամերիկայի հայոց Հայրապետական պատվիրակ գերաշնորհ Տ. Սիոն արքեպիսկոպոս Մանուկյանի միջնորդությամբ՝*

**ՏԻԱՐ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵՎ ՏԻԿԻՆ ՄԱՐԹԱ ՏԻԱՐՓԵՔԻՐՅԱՆ**, *ազգային բարերարներ.*

**ՏԻԱՐ ԱՐՄԻՆ ՓԵՐԿԱՄԱԼԻ**, *ազգային բարերար։*

Հայրապետական օրհնության կոնդակի են արժանացել.

*ՏԻԱՐ ԵՐՎԱՆԴ ՀՅՈՒՍԻՍՅԱՆ (Միլանո, Իտալիա), բարերար Մայր Աթոռի.*

*ՏԻԱՐ ՍԱՐԳԻՍ ՔՅՈՒՐՔՃՅԱՆ (Լոնդոն, Անգլիա), բարերար Մայր Աթոռի.*

*ՏԻԱՐ ՕՆՆԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ (Կամո, Իտալիա), բարերար Մայր Աթոռի։*

Ավագ քահանայության պատվին են արժանացել.

*Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետի հուլիսի 5-ի և 25-ի սրբատառ կոնդակներով, քահանայական երկարամյա և օգտակար գործունեության համար.*

*ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ Տ. ԳԵՎՈՐԳ ՔԱՀԱՆԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ (Լենինական), Շիրակի թեմի առաջնորդական տեղապահ բարձրապատիվ Տ. Կոմիտաս վարդապետի միջնորդությամբ.*

*ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ Տ. ՀԱԿՈԲ ՔԱՀԱՆԱ ՔԵԼԱՄՅԱՆ (Լենինական), Շիրակի թեմի առաջնորդական տեղապահ բարձրապատիվ Տ. Կոմիտաս վարդապետի միջնորդությամբ.*

*ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ Տ. ՄԿՐՏԻՉ ՔԱՀԱՆԱ ՄԿՐՏՉՅԱՆ (Մայր Աթոռ), լուսարարապետ գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոսի միջնորդությամբ.*

Քահանայական լանջախաչի տվչություն.

*Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետի հունիսի 20-ի և հուլիսի 25-ի սրբատառ կոնդակներով, եկեղեցական անբասիր և արդյունաշատ գործունեության համար, ի նշան գնահատանքի և քաջալերանքի, քահանայական լանջախաչ կրելու իրավունք է շնորհված՝ լուսարարապետ գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոսի միջնորդությամբ.*

*ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ Տ. ԿՈՄԻՏԱՍ ՔԱՀԱՆԱ ՇԻՐԻՆՅԱՆԻՆ (Երևանի Ս. Սարգիս եկեղեցու հոգևոր հովիվ).*

*ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ Տ. ՀՈՎՍԵՓ ՔԱՀԱՆԱ ՔՅՈՍԵՅԱՆԻՆ (Երևանի Ս. Սարգիս եկեղեցու ավագերեց).*

*ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ Տ. ՀԱԿՈԲ ՔԱՀԱՆԱ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ (Մայր Տաճարի դասապետ).*

*ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ Տ. ԱՐՏԱՇԵՍ ՔԱՀԱՆԱ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ (Աստրախան), թեմակալ առաջնորդի և եկեղեցական խորհրդի միջնորդությամբ.*

*ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ Տ. ՏՐԴԱՏ ՔԱՀԱՆԱ ՏՈՒՎԱՐՃՅԱՆԻՆ (Ստալին քաղաք, Բուլղարիա), եկեղեցական վարչության և թեմական խորհրդի միջնորդությամբ.*

*ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ Տ. ԱՇՈՏ ՔԱՀԱՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ (Մանչեստր), եկեղեցու հոգաբարձության միջնորդությամբ.*

*ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ Տ. ԵՂՆԻԿ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ (Սան-Պաուլո, Մոնտեվիդեո), Հայրապետական պատվիրակ գերաշնորհ Տ. Սիոն արքեպիսկոպոս Մանուկյանի միջնորդությամբ.*

*ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ Տ. ՎԱՐԴԱՆ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ, Երևանի Ս. Հովհաննես եկեղեցու հոգևոր հովիվ, գերապատիվ, Տ. Սահակ եպիսկոպոսի միջնորդությամբ պարգևատրվեց կամիլավկայով։*

*Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետր հուլիսի 27-ին Հայրապետական օրհնության կոնդակ շնորհեց Ատրպատականի թեմի առաջնորդական տեղապահ ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ Տ. ԿԱՐԱՊԵՏ ՔԱՀԱՆԱ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ նրա քահանայական գործունեության 55-ամյա և առաջնորդական տեղապահության 45-ամյա հոբելյանի կապակցությամբ։*

*«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը ի սրտե շնորհավորում է Հայրապետական բարձր գնահատության արժանացողներին և մաղթում բոլորին ավելի արդյունավետ ազգային եկեղեցական, հասարակական գործունեություն ի պայծառություն մեր Ս. Եկեղեցուն և ի մխիթարություն հավատացյալ ժողովրդին։*



# ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ՀՈՒԼԻՍԻ 1-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, սուրբ պատարագ մատուցվեց Մայր Տաճարում։ Պատարագեց և քարոզեց Տ. Ոզիկ Արեգյան սուրբերի կյանքի, բարեգթության ու գործունեության մասին։

Նույն օրը, Էջմիածնի քաղաքի Ս. Աստվածածին եկեղեցում տեղի ունեցավ քահանայական ձեռնադրություն Ներսես Բասմաչյան և Հովհաննես Թադևոսյան սարկավագների։ Առաջին Ս. Սեղանին սպասարկելու կոչված երկու ընծայացուները Երուսաղեմի ժառանգավորաց վարժարանի նախկին սաներից են, զարգացած, բարեպաշտ, իրենց պապերի հավատին նախանձախնդիր։ Հավատացյալների հոծ բազմության ներկայությամբ ձեռնադրությունը կատարեց գերապատիվ Տ. Սահակ եպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը։ Ներսես սարկավագ Բասմաչյանը կոչվեց Տ. Զարեհ քահանա, իսկ Հովհաննես սարկավագ Թադևոսյանը՝ Տ. Վարդան քահանա։

Նորընծաներին մաղթում ենք Աստուծո շնորհքն ու կարողություն, որպեսզի նրանք լինեն Տիրոջ այգու հավատարիմ և նվիրված մշակները։

⁂

ՀՈՒԼԻՍԻ 5-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Պայծառակերպության Տոնին Վարդավառի ավանդական տոնի կապակցությամբ հավատացյալների խուռն բազմության ներկայությամբ Մայր Տաճարում մատուցվեց հանդիսավոր սուրբ պատարագ։ Պատարագիչն էր գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը։ Բովանդակալից իր քարոզի մեջ սրբազան հայրը նկարագրեց Պայծառակերպության տոնի դեպքերը ըստ Ս. Ավետարանի և ապա բացատրեց օրվա տոնի խորհուրդը։ Քարոզի վերջում սրբազան հայրը անդրադարձավ Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներում հունիսին կատարած իր այցելության մասին և խորին հուզմունքով պատմեց ամերիկահայության Մայր Հայրենիքի և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հանդեպ ունեցած ջերմագին զգացմունքների մասին։

⁂

ՀՈՒԼԻՍԻ 9-ԻՆ, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, հիշատակ մեռելոց։ Մայր Տաճարում մատուցվեց սուրբ պատարագ։ Պատարագեց հոգեշնորհ Տ. Մեսրոպ աբեղա Անթարյանը։ Սուրբ պատարագից հետո կատարվեց հոգեհանգիստ համօրեն ննջեցյալների համար։

⁂

ՀՈՒԼԻՍԻ 29-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, սուրբ պատարագ մատուցվեց Մայր Տաճարում։ Պատարագիչն էր արժանապատիվ Տ. Հակոբ քահանա Հակոբյանը։ Սուրբ պատարագին ներկա էր հավատացյալների մեծ բազմություն, ինչպես նաև Մայր Հայրենիք ժամանած ֆրանսահայ ուխտավորների խումբը։ Քարոզեց հոգեշնորհ Տ. Մեսրոպ աբեղա Անթարյանը «Ու արտասուեաց Յիսուս» բնաբանով։ Իր գեղեցիկ և բովանդակալից քարոզի մեջ հոգեշնորհ հայր սուրբը շեշտեց Փրկչի արտասուքի մեջ ցոլացող աստվածային կարեկցանքը, վշտակցությունը, գութն ու մարդասիրությունը դեպի մարդու վիշտը, տառապանքը, մեղապարտությունը։

⁂

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐԻ ՏԵՂԱԿԱԼ պրոֆ. Ա. Առաքելյանը ծանրաբեռնված լինելով դասախոսական և գիտական աշխատանքներով, հունիսից հրաժարվեց խմբագրի տեղակալի պարտականություններից։

Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ կազմվեց խմբագրական մարմին, որը աշխատանքի անցավ հուլիսին՝ Մայր Աթոռում վերակազմավորված խմբագրատան մեջ։

## ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*ՀՈՒԼԻՍԻ 1-ԻՆ, ԿԻՐԱԿԻ ՕՐԸ, Մայր Աթոռ Ս. Էջմիածին ուխտի եկավ Մայր Հայրենիք ժամանած Կալիֆորնիայի հայ ուխտավորների խումբը։ Բարեպաշտ ուխտավորները ներկա եղան սուրբ պատարագին, ապա դիտեցին Մայր Տաճարին կից եկեղեցա-պատմական թանգարանը։ Վերջում հրավիրվեցին Վեհարան, որտեղ ընդունվեցին Ամենայն Հայոց Հայրապետի կողմից։ Ուխտավորների խմբի անունից Վեհարանում պ. Արամ Տոլիկյանը խոսք առավ և ասաց.*

*— Վեհափառ Տեր, մեր խումբը ուխտավորներու խումբ մըն է և մենք Միացյալ Նահանգներեն եկած ուխտավորներն ենք մեր Հայրենիքին և մեր Ս. Էջմիածնին։ Մենք կսիրենք Ս. Էջմիածինն ու մեր նվիրական Հայրենիքը և մեր սրտերուն մեջ միշտ վառ պիտի մնան Ս. Էջմիածնի անունն ու խորհուրդը և Մայր Հայրենիքի սերն ու հպարտությունը։*

*Վեհափառ Հայրապետը, խորապես զգացված ուխտավորների այս անկեղծ ու սրտառուչ զգացումներից և խոսքերից, իր ուրախությունը հայտնեց և ասաց.*

*— Մենք կողջունենք Ձեզ բոլորիդ Ս. Էջմիածնի այս նվիրական հողին վրա և բարի գալուստ կմաղթենք ամենքիդ։ Շատ հեռավոր ափերէ եկած էք Հայրենի հողի և Ս. Էջմիածնի կարոտը առնելու համար։ Դուք սկիզբը կըլլաք ուխտավորության մը, որ պիտի շարունակվի սփյուռքահայ բոլոր գաղութներին։ Ոչ ուշ ժամանակեն Մենք առիթը պիտի ունենանք այստեղ ողջունելու Կալիֆորնիայի ուխտավորներու ուրիշ խումբ մըն ալ։ Ֆրանսայեն ևս խումբ մը պիտի գա մոտ ապագային, և այսպիսով սփյուռքահայ մեր որդիները հնարավորություն պիտի ունենան մոտիկեն զգալու Հայրենիքի քաղցրությունն ու նվիրականությունը։ Մենք վստահ ենք, որ ուխտավորները պիտի մխիթարվին հոգեպես ու երջանիկ զգացումներով պիտի վերադառնան իրենց տուները։*

*Մենք կփափագեինք, որ անոնք սեպտեմբերին ըլլային այստեղ, որովհետև մինչև այդ ժամանակ շատ մը փոփոխություններ պիտի ըլլան ինչպես Մայր Տաճարեն ներս, այնպես ալ ամբողջ շրջափակին մեջ։ Վաղվընե սկսյալ շինարարության նոր շրջան մը պիտի սկսի Մայր Աթոռեն ներս, հատկապես սփյուռքահայության սրտաբուխ նվիրատվություններուն շնորհիվ։ Պիտի մարմարապատվի ոչ միայն Մայր Տաճարի հատակը, այլև Ավագ Սեղանը, հայկական արվեստի հարազատ ոճով մը։*

*Ձեզի կրնամ հայտնել երջանիկ լուր մը ևս՝ նկատի ունենալով, որ այս շենքը, որուն մեջ Ձեզ կընդունինք այսօր, բավարար չէ մեր արդի պահանջներուն, վերջերս Սովետական Միության վարչապետ Նորին Վսեմություն Պարոն Քոսիգինին մոտ Մեր եղած ժամանակ, շարք մը կարևոր հարցերու դրական լուծման հետ որոշվեցավ նաև նոր Վեհարանի շենքը վերադարձնել մեզ։ Այնպես որ հաջորդ անգամ, երբ նորեն ուխտի գաք Ս. Էջմիածին, Ձեզի կընդունինք այն նոր փառավոր շենքին մեջ։* (Ծափահարություններ)։ *Շատ ու շատ նորություններ կրնանք Ձեզի հայտնել, սակայն Ձեր ժամանակը չի ներեր, կտեսնենք, ուստի թույլ տվեք օրհնել բոլորիդ և մաղթել Ձեզ երջանիկ վերադարձ։ Տարե՛ք Մեր հայրապետական օրհնությունները Մեր բոլոր որդիներուն։*

*Այնուհետև ուխտավորների խմբի ղեկավարը մոտենալով Վեհափառ Հայրապետին, առավ Ս. Աջը և ամբողջ խմբի կողմից Նորին Ս. Օծության հանձնեց թանկարժեք ոսկյա մի ինքնահոս գրիչ։ Ուխտավորների մյուս անդամները ևս երկյուղածությամբ մոտեցան, և համբուրելով Հայրապետի Ս. Աջը, իրենց «դարբաս»-ները տվին Մայր Աթոռի պայծառության համար։ Հուզիչ էր տեսարանը։ Դարեր շարունակ Մայր Աթոռը պայծառ ու շեն է պահված հայ ժողովրդի ինքնաբուխ «այրի կնոջ երկու լումա»-ներով։*

*Ուխտավորներից մեկը համեստությամբ խնդրեց, որ Վեհափառը ներողամիտ լինի «նվերների սակավության համար», քանի որ իրենք ամերիկահայության համեստ դասի ներկայացուցիչներն են, և սակայն միշտ պատրաստ կլինեն իրենց համեստ բաժինը բերելու հօգուտ և ի շինություն Ս. Էջմիածնի։*

*Վեհափառ Հայրապետը ճշմարտապես հուզվել էր այս սրտառուչ վերաբերմունքից։ Նորին Ս. Օծությունը նախ հայտնեց իր անսահման գոհունակությունը և ավելացրեց, որ կարևորը նվերի քանակը չէ, այլ ոգին, որով նա տրվում է բարի և վեհ նպատակի համար։ Ապա Վեհափառ Հայրապետը սրտագին օրհնեց բոլորին և ասաց, որ Ինքը մշտապես աղոթող պիտի լինի նրանց կյանքի երջանկության համար, մաղթեց, որ իրենց այդ զգացմունքները միշտ վառ մնան և ժառանգաբար փոխանցվեն իրենց որդիներին, թոռներին, որպեսզի նրանք ևս օտարության մեջ չմոռանան իրենց նվիրա-*

կան Հայրենիքը, հայ ժողովրդի սրբության սրբոց Ս. Էջմիածինը, մեր հոգեկան արժեքները և մեծասքանչ լեզուն։

Ուխտավորների խմբի մեջ այդ ամերիկահայության անունից պ. Արամ Տողիկյանը Վեհափառ Հայրապետից խնդրեց այցելել նաև ամերիկահայ իր որդիներին։

— Օր մը կհուսանք այցելել նաև Ամերիկա,— վստահ ժպիտով վերջում պատասխանեց Վեհափառը։

Վերջում Նորին Ս. Օծության Վեհափառ Հայրապետը խաչեր բաժանեց բոլոր ուխտավորներին, որոնք երկյուղած բարեպաշտությամբ ընդունեցին հայրապետական օրհնության հետ այդ խաչերը։

Ուխտավորները Վեհափառ Հայրապետից հրաժեշտ առին անմոռանալի հուշերով։

∘°∘

ՀՈՒԼԻՍԻ 29-ԻՆ, ԿԻՐԱԿԻ ՕՐԸ, Մայր Աթոռ ուխտի եկավ ֆրանսահայ ուխտավորների խումբը, որ ներկա եղավ նաև սուրբ պատարագին։ Ուխտավորների ամբողջ խումբը Մայր Տաճարում հաղորդվեց։ Նրանք հոգեկան խորունկ գոհունակությամբ ունկնդրեցին սուրբ պատարագի հոգեզմայլ երգեցողությունը։ Սուրբ պատարագից հետո ուխտավորները առաջնորդվեցին Վեհարան, որտեղ նրանց ջերմորեն ընդունեց և օրհնեց Վեհափառ Հայրապետը։ Ողջույնի և բարի գալստի սրտագին խոսքերից հետո Վեհափառ Հայրապետը պատմեց նրանց Մայր Աթոռում կատարվող շինարարական աշխատանքների և եկեղեցու պայծառացման հետ կապված խոստումնալից հեռանկարների, Հոգևոր ճեմարանի հնարավորությունների և այն բոլորի մասին, ինչ սիրելի ու հետաքրքիր է ամեն մի հայ մարդու համար։ Վեհափառ Հայրապետի այս մանրամասն զրույցը մեծ խանդավառություն և ոգևորություն առաջ բերեց բոլոր ներկաների սրտերում դեպի Ս. Էջմիածինը, դեպի Հայրենիքն ու Ամենայն Հայոց Հայրապետը։

Աշխարհամբույրի ժամանակ Վեհափառը ուխտավորներին սուրբ նշխարք և խաչեր բաժանեց։ Ֆրանսահայ ուխտավորների խումբն էլ իր սրտաբուխ նվերները տվավ Վեհափառ Հայրապետին։ Ուխտավորներից բարեպաշտ տիկին Եուսյան 50.000 ֆրանկ նվիրեց Մայր Աթոռի շինարարության ի նպաստ։

Վեհափառը իր հայրապետական օրհնությունը տվավ բոլորին և բարի ճանապարհ մաղթեց նրանց։ Ուխտավորները սրտի անհուն բերկրանքով և երախտագիտությամբ հրաժեշտ առին Վեհափառ Հայրապետից և մեկնեցին Ս. Էջմիածնից։

∘°∘

ՀՈՒԼԻՍԻ 1-ԻՆ Սովետական Միություն ժամանած ամերիկյան շինարարների պատվիրակությունը այցելեց Մայր Աթոռ և ծանոթացավ Մայր Տաճարի հնագարյան ճարտարապետական առանձնահատկություններին։ Ամերիկյան պատվիրությանը ուղեկցում էին մեր հեղինակավոր ճարտարապետները։ Պատվիրակությունը մեծ հետաքրքրությամբ ծանոթացավ Մայր Տաճարին կից եկեղեցապատմական թանգարանին և մեծապես գնահատեց նրա հնագիտական և պատմական նշանակությունը։

Պատվիրակությունը Մայր Աթոռից մեկնեց մեծ գոհունակությամբ։




# ՔԱՂՎԱԾՔՆԵՐ
# ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

## 1956 Թ. ՀՈՒՆԻՍԻ 8-Ի ՆԻՍՏԻՑ

*Գերագույն Հոգևոր խորհրդի այս նիստում Հոգևոր ճեմարանի վերատեսուչ պ. Մ. Տեր-Ստեփանյանը զեկուցեց ճեմարանի 1955—1956 ուսումնական տարվա արդյունքների մասին, ապա խոսեց հաջորդ ուսումնական տարվա խնդիրների վրա, շեշտեց ճեմարանի վերատեսուչի և վերակացուի պաշտոնները ձեռնհաս հոգևորականներով փոխարինելու և ուսանողությանը համազգեստով օժտելու անհրաժեշտության վրա։*

*Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետը գոհունակություն հայտնեց Հոգևոր ճեմարանում կատարված աշխատանքների մասին, ապա ծանրացավ ուսանողության թիվը առաջիկայում զգալիորեն ավելացնելու, ճեմարանի ուսումնական մնայուն ծրագրերի կազմության հարցերի վրա։*

*Գերագույն Հոգևոր Խորհուրդը որոշեց առաջիկա ուսումնական տարում զգալիորեն ավելացնել ընդունվելիք ուսանողների թիվը ինչպես արտասահմանի, այնպես էլ ներքին թեմերից, իսկ նոր ուսումնական տարվանից ունենալ ճեմարանի ուսումնական կայուն և վերջնական ծրագիր։*

## 1956 Թ. ՀՈՒՆԻՍԻ 22-Ի ՆԻՍՏԻՑ

*Գերագույն Հոգևոր խորհրդի սույն նիստում Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետը խոսեց Մայր Աթոռի տպարանի մասին։ Վեհափառ Հայրապետը ուրախությամբ և գոհունակությամբ հայտնեց, որ Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգների հայ գաղութը, գլխավորությամբ առաջնորդարանի և ազգային մարմինների, ձեռնարկել է 100.000 դոլարի հանգանակության («100.000-ի արշավ») հօգուտ Մայր Աթոռին նվիրվելիք տպարանի։*

*Գերագույն Հոգևոր Խորհուրդը Նորին Ս. Օծության այս հաղորդումը ընդունեց մեծ գոհունակությամբ։*

*Ապա Վեհափառ Հայրապետը խոսեց Մոսկվայի հայոց Նորաբաց Ս. Հարություն եկեղեցու վերանորոգման վիճակի մասին։*

*Սկզբնական շրջանի նյութական դժվարությունները հաղթահարելու նպատակով, որոշվեց Մոսկվայի հայոց եկեղեցական խորհրդին իբր փոխառություն, բացառության կարգով, բաց թողնել 10.000 ռուբլի։*

## 1956 Թ. ՀՈՒՆԻՍԻ 20-Ի ՆԻՍՏԻՑ

Նորին Ս. Օծության Վեհափառ Հայրապետի առաջարկով Գերագույն Հոգևոր Խորհուրդը զբաղվեց Ռումինիայի հայոց թեմի առաջնորդական տեղապահ ընտրելու հարցով։

Գերագույն Հոգևոր Խորհուրդը, նկատի ունենալով Ռումինիայի հայոց թեմի թափուր վիճակը և ընդառաջելով Ռումինահայ թեմական խորհրդի դիմումներին, որոշեց Ռումինիայի հայոց թեմի առաջնորդական ժամանակավոր տեղապահ նշանակել Մայր Աթոռի միաբան հոգեշնորհ Տ. Եղիշե արեղա Սարգսյանին։

## 1956 Թ. ՀՈՒԼԻՍԻ 13-Ի ՆԻՍՏԻՑ

Գերագույն Հոգևոր Խորհրդի սույն նիստում կարդացվեց Մոսկվայի հայոց հոգևոր հովիվ հոգեշնորհ Տ. Պարգև արեղա Գևորգյանի և եկեղեցական խորհրդի զեկուցագիրը՝ Մոսկվայի հայոց եկեղեցու վիճակի և եկեղեցու շենքի վերանորոգման հետագա աշխատանքների մասին։

Որոշվեց եկեղեցական խորհրդի կողմից ներկայացված վերանորոգչական աշխատանքների նախահաշիվը հաստատել հետևյալ փոփոխություններով.

Ընթացիկ տարում վերանորոգել եկեղեցու միայն կտուրը, գմբեթն ու պատուհանները, կատարել դրսի ծեփը և պատրաստել տախտակամածը։ Մյուս աշխատանքները թողնել հետագայի համար։

Միաժամանակ Գերագույն Հոգևոր Խորհուրդը որոշեց եկեղեցու վերանորոգման անհրաժեշտ աշխատանքների համար Մոսկվայի հայոց եկեղեցական խորհրդին բաց թողնել ևս 20.000 ռուբլի, որպես փոխառություն։

Մայր Աթոռի միաբան հոգեշնորհ Տ. Խորեն վարդապետ Էլչուգյանը նշանակվեց եկեղեցիների վրա իբրև վերահսկիչ, հանձնարարելով նրան, Նորին Ս. Օծության Վեհափառ Հայրապետի հրամանով և կարգադրությամբ, պարբերաբար այցելել թեմերն ու եկեղեցիները, ապա զեկուցել Վեհափառ Հայրապետին։

Գերագույն Հոգևոր Խորհրդի սույն նիստում քննության առնվեց Երևանի Ս. Սարգիս եկեղեցու մատուռի վերակառուցման ծախսերի նախահաշիվը և որոշվեց հաստատել ներկայացված նախահաշիվը և առաջարկել Մայր Աթոռի տնտեսական կառավարչությանը՝ հսկողություն սահմանել կատարվելիք ծախսերի նկատմամբ։

Նմանապես քննվեց Երևանի Ս. Հովհաննես եկեղեցու բակի պարսպի կառուցման նախահաշիվը և որոշվեց ստուգել այն և ներկայացնել Գերագույն Հոգևոր Խորհրդին։

Ժողովում լսվեց նաև Երևանի Ս. Հովհաննես եկեղեցու հոգևոր հովիվ արժանապատիվ Տ. Վարդան քահանա Գրիգորյանին կենսաթոշակ նշանակելու մասին եկեղեցական խորհրդի միջնորդությունը և որոշվեց արժանապատիվ քահանա հորը նշանակել ամսական 300 ռուբլի կենսաթոշակ սույն թվականի հուլիսի 1-ից։

# ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՄՈՍԿՎԱՅԻ ՀԱՅՈՑ ՆՈՐԱԲԱՑ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ

*Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետի բարձր կարգադրությամբ Մոսկվայի հայոց Ս. Հարություն եկեղեցին վերստին բացեց իր դռները հայ հավատացյալ հոգիների առաջ։*

*Մայիսի 5-ին, Զատկի Ճրագալույցի երեկոյան, գերաշնորհ Տ. Սահակ սրբազանը, հոգեշնորհ Տ. Մեսրոպ աբեղա Անթարյանի և արժանապատիվ Տ. Խաչատուր քահանայի հետ, ժողովրդի խուռն բազմության ներկայությամբ կատարեց եկեղեցու վերաբացման արարողությունը, որից հետո պաշտվեցին Ճրագալույցի ավանդական արարողությունները և սուրբ պատարագը։*

*Մոսկվայի հայոց Ս. Հարություն եկեղեցու վերաբացումը զուգադիպում էր Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետի արտասահման կատարած հովվապետական ուղևորությունից դեպի Մոսկվա վերադարձի օրերին։*

*Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետի Մոսկվա ժամանելուց առաջ, Մոսկվայի հայ հավատացյալների սրտագին նվիրատվություններով, նորաբաց եկեղեցու վերանորոգման աշխատանքների համար հայթայթվել էին անհրաժեշտ միջոցներ, և Քրիստոսի Հրաշափառ Ս. Հարության տոնի կապակցությամբ եկեղեցին ենթարկվել էր մասնակի վերանորոգման։*

*Մոսկվայի հայ հավատացյալների համար մայիսի 5-ը (Ճրագալույց), Զատիկը (6 մայիսի) և Նոր կիրակին (13 մայիսի) պատմական և հավետ անմոռանալի օրեր էին։*

*Զատկի օրը Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետը հանդիսությամբ և «Հրաշափառ»-ով առաջնորդվեց Մոսկվայի Հայոց Նորաբաց Ս. Հարություն եկեղեցին, ուր ժամանակից առաջ Մոսկվայի հայությունը հավաքված, շուրջ երկու հազար, անձկությամբ և անհամբերությամբ սպասում էր Նորին Ս. Օծության ժամանմանը։ Եկեղեցին, բակը և շրջակայքը լցվել էին խուռներամ բազմությամբ, որը ուրախությամբ և ջերմորեն դիմավորում էր Վեհափառ Հայրապետին։*

*Տեսարանը հուզիչ էր և սրտառուչ, երբ երկար տարիների դադարից հետո Մոսկվայի հայոց եկեղեցին նորից իր դռներն էր բաց անում հավատացյալների առաջ։ Պետք էր տեսնել, թե ինչպիսի՜ երկյուղածությամբ, ջերմեռանդությամբ, կարոտով և հոգևոր խնդությամբ Մոսկվայի հայ հավատացյալները եկել էին լցնելու նորաբաց եկեղեցին։ Մինչ Նորին Ս. Օծությունը եկեղեցական թափորով, երգով ու խնկով, խաչով ու խաչվառով ժողովրդի բազմության միջից ուղղվում էր դեպի սուրբ եկեղեցի, ժողովրդի շատերը բացագանչում էին ցնծությամբ. «Ապրա՜ծ կենա Հայոց Ազգն ու մեր Վեհափառ Հայրապետը», «Փառավո՜ր մնա Ս. Էջմիածինը»։ Ուրիշներ, ի տես Վեհափառ Հայրապետի, խորունկ մխիթարությամբ գոչում էին. «Վերածնվե՜ց հայ կյանքը Մոսկվայում»։ Այս հանդիսավոր ու պատմական պահին, ուրախության և մխիթարության վճիտ արցունքներ կային բոլորի նայվածքների մեջ, և՛ Նորին Ս. Օծության, որ եկել էր այցելության Մոսկվայի իր հոտին, և՛ ժողովրդի, որ եկել էր կարոտով, հուզումով ողջունելու իր սիրելուն, Նորընտիր Հայրապետին։ Ներկաների թվում էին նաև բազմաթիվ հայ մտավորականներ, արվեստի և գիտության աշխատողներ, որոնք նույնպես խանդավառությամբ էին ողջունում Նորին Ս. Օծությանը։*

*Զատկական հանդիսավոր սուրբ պատարագը մատուցեց գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը, Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետի ներկայությամբ։ Պատարագը երգեց Մոսկվայի հայոց եկեղեցու երգեցիկ խումբը։ «Հայր*

մէրս»-ից առաջ քարոզից Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետը խուռն բազմության ներկայության, Ս. Հարության սրբազան պատգամը տվավ Մոսկվայի հայության և միաժամանակ խոսեց արտասահմանյան իր ուղևորության նպատակների, տպավորությունների մասին, և այս հաղորդեց Սփյուռքի հայության ջերմ ու սրտագին ողջույնները Մոսկվայի հավատացյալներին։ Իր Ս. Հարության քարոզի և պատգամի վերջում Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետը խոսեց Մոսկվայի Նորաբաց Ս. Հարություն եկեղեցու մասին, գովեց այդ առթիվ Մոսկվայի հայերի եկեղեցանվեր եռանդը և կոչ արեց, որ ժողովուրդը հոգով և սրտով ու մեր նախնիների բարեպաշտությամբ և նախանձախնդրությամբ իր «այրի կնոջ լումա»-ներով շեն ու պայծառ պահի մեր Ս. Եկեղեցին և իր լրման հասցնի եկեղեցու վերանորոգության աշխատանքները։

Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետը Մոսկվայի հայոց Նորաբաց եկեղեցու ավագ սեղանի համար իր կողմից այս առթիվ խոստացավ Աստվածամոր յուղանկար մի գեղեցիկ նկար օծել և նվիրել։ Վեհափառ Հայրապետը բարեմաղթություններ արեց հայ ժողովրդի համար և օրհնեց ներկա հավատացյալ ժողովրդին։

Մայիսի 13-ին, Նոր կիրակի օրը, Մոսկվայի հայոց Նորաբաց Ս. Հարություն եկեղեցում հանդիսավոր սուրբ պատարագ մատուցեց հոգեշնորհ Տ. Մեսրոպ արեղա Անթարյանը։ Պատարագին ներկա էր խուռն բազմություն։ Մի շաբաթ է, ինչ Մոսկվայում էր Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետը և զբաղվում էր Մոսկվայի հայոց Նորաբաց եկեղեցու կազմակերպչական հարցերով։ Ընդառաջելով հավատացյալ համաժողովրդական բաղձանքներին, Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետը մի քանի օր ավելի մնաց Մոսկվայում։ Եվ ահա, Նոր կիրակի օրը, դեպի հայոց եկեղեցին էր փութացել ժողովուրդը խուռն բազմությամբ, մի անգամ ևս տեսնելու և լսելու Վեհափառ Հայրապետին։

Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետը Ս. Զատկի օրվա հանդիսությամբ և ժողովրդական խանդավառ մթնոլորտի մեջ առաջնորդվեց սուրբ եկեղեցի և «Հայր մեր»-ից առաջ խոսեց իր հոյակապ և հոգեշունչ քարոզներից մին, ծանրացավ Նոր կիրակիի խորհրդի վրա, ապա գեղեցկորեն այդ խորհուրդը կապեց Ս. Էջմիածնում սկսված հոգևոր նոր զարթոնքի և վերակառուցման շինարարական աշխատանքների հետ, երախտագիտություն հայտնելով այս առթիվ Սովետական բարեխնամ կառավարության, որ բարյացակամությամբ է վերաբերվում Հայ Եկեղեցու հանդեպ, տալով ամեն ազատություն և հնարավորություններ մեր կրոնական, եկեղեցական կյանքի կազմակերպման և հետագա զարգացման համար։ Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետը մեծ ուրախությամբ խոսեց Նորին Վսեմություն Պարոն Ն. Ա. Բուլգանինի հետ իր ունեցած տեսակցության մասին, շնորհակալությամբ հիշելով, որ իր ներկայացրած 7 կետերից բաղկացած դիմումը եռ դրական լուծում է ստացել։

Իր քարոզի վերջում Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետը մաղթանքներ արեց հայ ժողովրդի մեծ և անկեղծ բարեկամ ռուս մեծ և ազնիվ ժողովրդի և նրա հարազատ Հայրենի պետության՝ Սովետական կառավարության հզորության, բարօրության և փառքի համար։ Ամբողջ եկեղեցին մեկ սիրտ և մեկ հոգի, իր սրտառուչ «ամեն»-ներով ձայնակցում էր իր Հայրապետի մաղթանքներին։

Հանդիսավոր սուրբ պատարագից հետո Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետի նախագահությամբ կատարվեց հոգեհանգստյան պաշտոն մեր բոլոր նահատակների խնկելի հիշատակին։

Մոսկվայի հայոց եկեղեցին շարունակում է գործել։ Հոգևոր հովիվ է նշանակված Հոգեշնորհ Տ. Պարգև արեղա Գևորգյանը։ Նորաբաց եկեղեցին ունի իր երգեցիկ խումբը։ Նորաբաց եկեղեցում քահանայագործում է նաև Մոսկվայի նախկին հոգևոր հովիվ Տ. Խաչատուր քահանան։

Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ Մոսկվայի հայոց Նորաբաց Ս. Հարություն եկեղեցու հիմնական նորոգության համար առաջ են տարվում համապատասխան ճարտարապետական խորհրդակցություններ։ Մոտ ժամանակներս Մոսկվայի հայերը կունենան գողտրիկ մի վերանորոգված եկեղեցի իրենց կրոնական-հոգեկան կարիքները լիովին բավարարելու։

«Եկայք շինեսցուք սուրբ զխորանն լուսոյ. Քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս ի Հայաստան աշխարհիս:

# ՀԱՅՐԵՆԻ ԹԵՄԵՐՈՒՄ

## ՎՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ԳԵՐԱՊԱՏԻՎ Տ. ՎԱՐԴԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԸ ԱԽԱԼՔԱԼԱՔՈՒՄ

*Հուլիսի 14-ին Վրաստանի թեմակալ առաջնորդ գերապատիվ Տ. Վարդան եպիսկոպոսը առաջնորդի օգնական Հոգեշնորհ Տ. Վահան աբեղա Գալամդարյանի և թեմական խորհրդի անդամ պ. Հակոբ Տեր-Հարությունյանի ուղեկցությամբ հովվական այցելության համար մեկնեց Ախալքալաք քաղաքը։*

*Թբիլիսիի օդանավակայանում առաջնորդ սրբազանին ճանապարհեցին քահանայից դասը, թեմական խորհրդի անդամները և հավատացյալները։*

*Ախալքալաքում սրբազան առաջնորդը դիմավորվեց տեղի քահանայական դասի, երգեցիկ դպրաց խմբի և հավատացյալների կողմից ու պատշաճ հանդիսավորությամբ առաջնորդվեց Ս. Խաչ եկեղեցին, որտեղ մտավ «Հրաշափառ»-ով։*

*Օրը շաբաթ էր, եկեղեցին լիքը հավատացյալներով։ Առաջնորդ սրբազանի նախագահությամբ կատարվեց երեկոյան հանդիսավոր ժամերգություն։ Արարողության վերջում Վարդան սրբազանը Ախալքալաքի հայությանը հաղորդեց Նորին Ս. Օծության Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական օրհնություններն ու ողջույնները։ Ախալքալաքի հավատացյալ ժողովուրդը երկյուղած ջերմեռանդությամբ, արտասվակալած աչքերով ընդունում էր Վեհափառ Հայրապետի օրհնությունները և իր սրտի խորքից մրմնջում. «Աստված երկա՜ր կյանք տա մեր ազիզ Հայրապետին»։ Իր խոսքի ընթացքում Վարդան սրբազանը եկեղեցում հավաքված բազմությանը հաղորդեց նաև Սփյուռքի հայության ջերմ ողջույններն Ախալքալաքի հայությանը։ Սրբազանն ասաց, որ Սփյուռքի հայության սրտագին ցանկությունն է մի օր գալ, ապրել ու աշխատել իրենց նախնյաց Հայրենիքում։*

*Արարողությունից հետո առաջնորդ սրբազանը հյուրասիրվեց իր ուղեկիցներով եկեղեցական խորհրդի անդամ Ռաֆայելյանների բնակարանում։*

*Հուլիսի 15-ին, կիրակի օր, գերաշնորհ Տ. Վարդան սրբազանը հանդիսավոր սուրբ պատարագ մատուցեց Ս. Խաչ եկեղեցում։ Եկեղեցին լիքն էր բազմությամբ։ Շատեր եկել էին հեռավոր շրջաններից և գյուղերից։ Սուրբ պատարագը երգեց տեղի երգեցիկ խումբը, որին ձայնակցում էր ամբողջ եկեղեցին։ «Հայր մեր»-ից առաջ քարոզեց պատարագիչ սրբազանը։ Նա խոսեց Ս. Էջմիածնի հոգևոր, քաղաքական, մշակութային դերի մասին, որ նա կատարել է հայ կյանքում։ Ապա նա եզրակացրեց, որ հայոց պատմությունը անցյալում տառապանքների և նեղությունների, կոտորածների և տեղահանությանց մի անվերջ շղթա է եղել, իսկ Հայ Եկեղեցին այդ տխուր օրերին գորովագութ մոր նման իր թևերի տակ առել, պահել ու պահպանել է հայ ժողովրդին։ «Մեր եկեղեցու միության արտահայտությունն է Ամենայն Հայոց Հայրապետու-*

թյուն,— ասաց նա,— Ս. Էջմիածնով, որ Հայ Եկեղեցու ծագման և հաստատության օրրանն է, Աստու քարոզիչ որբազանը բարեմաղթություններ արեց Նորին Սրբություն Վեհափառ Հայրապետի կյանքի արևշատության և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի անշարժության համար։

Հավատացյալների համար հոգեկան խոր ապրումների սրբազան առիթներ հանդիսացան սուրբ պատարագն ու սրբազան հոր քարոզը։

Հավարտ սուրբ պատարագի կատարվեց տեղի եկեղեցական խորհրդի և վերստուգիչ հանձնախմբի անդամների ընտրությունը։

Սրբազան հոր կարգադրությամբ միջոցներ ձեռք առնվեցին եկեղեցու գործերը առավել ևս օրինակելի կարգապահության մեջ դնելու համար։

Երեքշաբթի, մայիս 17-ին, առաջնորդ սրբազանը մեկնեց Ախալցխա, ուր ևս զբաղվեց նմանատիպ եկեղեցական գործերով։

Այդպես հանդիսավորապես նշել հանգուցյալ Տ. Կարապետ արքեպիսկոպոս Բաղրատունու մահվան 100-ամյակը։

Մայիսի 18-ին հաճախական այցելություններից Թբիլիսի վերադարձավ առաջնորդ սրբազանը։

ԹԲԻԼԻՍԻ ԹՂԹԱԿԻՑ

## ՇԻՐԱԿՅԱՆ ԽՐՈՆԻԿԱ

Վեհափառ Հայրապետի հրամանով անցյալ հունվարի 1-ին հոգեշնորհ Տ. Կոմիտաս վարդապետ Տեր-Սահակյանը նշանակվեց Շիրակի թեմի առաջնորդական տեղապահ։ Անցնող ութը ամիսների ընթացքում, շնորհիվ Տ. Կոմիտաս վարդապետի ջանքերի և նվիրված գործունեության, թեմի եկեղեցական և հոգևոր կյանքի մեջ զգալի փոփոխություն է նկատվում։ Արդարությամբ պետք է արձանագրել այն փաստը, որ Հայաստանյայց



Լենինականի Ս. Աստվածածին եկեղեցու երգեցիկ խումբը

Առաքելական Եկեղեցու հոգևոր զարթոնքի մի նոր շրջան է սկսվել ազգընտիր Հայրապետի երջանիկ գահակալությամբ։ Բոլոր հավատացյալների խորին համոզմունքն է

այդ։ Օրեցօր չէ՞ ավելի զարգանում, աճում և արմատավորվում է կրոնի սերն ու հավատը հայ հոգիների մեջ։ Շիրակի թեմում հրճվանքով և հուզումով ենք հաստատում եկեղեցի հաճախողների թվի օրեցօր աճումը, ինչ որ մի անգամ ևս կապացուցի շիրակցիների ավանդական եկեղեցասիրությունն ու բարեպաշտությունը։

Եկեղեցական կանոնավոր և ներդաշնակ երգեցողության կարգավորումը առաջնորդական տեղապահ հոր գործունեության առաջին քայլը եղավ։ Կազմվեց շնորհալի երգիչ ու երգչուհիներից բաղկացած մի երգչախումբ, որը հայր սուրբի անմիջական ղեկավարության տակ սովորեց քառաձայն պատարագի երգեցողությունը, հոգեկան ապրումների վսեմ սփոփանքը տալով հավատացյալներին, ջերմ հետաքրքրություն զարթեցնելով նաև դեպի Մայր Եկեղեցին ու նրա հնությամբ նվիրականացած մշակույթն ու արվեստը։ Լենինականի եկեղեցին այժմ ունի մարզված մի լավ երգչախումբ։

Ամեն կիրակի և տոն օրերին հնչում է եկեղեցու բեմից կենաց խոսքը, որ թարմացնում է հավատացյալի սրտում Ավետարանի սուրբ պատգամները։ Ամենայն կանոնավորությամբ կատարվում են ժամերգությանց և եկեղեցական ծիսակատարությանց, տոնական օրերի հանդիսությանց հոգեպարար արարողությունները, որոնք խորապես տպավորում են հավատացյալի մեջ հոգեկան արժեքների գերազանցությունը։

Շիրակի թեմը հարուստ է նաև իր ուխտատեղիներով—Ս. Հովհաննես, Թոփալուփ ուխտատեղին և այլն, ուր նշանակված քահանա հայրեր և դպիրներ ամեն կիրակի և տոն օրերին կատարում են եկեղեցական պաշտամունք՝ ի հոգևոր մխիթարություն հավատացյալների։ Շիրակի թեմում իրենց կոչումին արժանի քահանա հայրերը լավագույն կերպով են կատարում իրենց հոգևոր պարտականությունները, արժանանալով հավատացյալ ժողովրդի գնահատանքին ու հարգանքին և բարձր պահելով քահանայական դասի բարոյական վարկը։

Շիրակի թեմի եկեղեցիների հոգևոր պածառության և բարեզարգության հետ միասին չի անտեսվել նաև եկեղեցիների նորոգության հարցը։ Լենինականի Ս. Աստվածածին եկեղեցու կտուրի նորոգման գործը օրվա խնդիր է դարձել և այդ նպատակով կազմվել է արդեն նախահաշիվ, որպեսզի փութով ձեռնարկվի վերանորոգման գործին։ Կիրովականի Ս. Աստվածածին եկեղեցին ներքուստ հիմնովին վերանորոգվել ու բարեզարգվել է, ուր կանոնավոր եկեղեցական պաշտամունք է կատարվում։ Առաջնորդական տեղապահ հայր սուրբը հաճախ լինում է Կիրովականում։

***

Հուլիսի 8-ին, Վարդավառի տոնին, պատարագեց բարձրապատիվ Տ. Կոմիտաս վարդապետը։ Հավատացյալների խուռն բազմության առջև հանդիսավոր կերպով կարդացվեց Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի սրբատառ անդրանիկ կոնդակը։ Հայր սուրբը, ներշնչվելով Վեհափառ Հայրապետի կոնդակի ոգուց, քարոզեց «Այսօր լցաւ գիրս այս յականջս ձեր» բնաբանով։

***

Հուլիսի 29-ին, դարձյալ հավատացյալների խուռն բազմության առջև, եկեղեցու ավագ խորանից կարդացվեցին Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետի երկու կոնդակները, որոնցով արժանապատիվ Տ. Գևորգ քահանա Գևորգյանին և Տ. Հակոբ քահանա Քեյամյանին շնորհվում էր ավագ քահանայության պատիվ։ Հավարտ կոնդակների ընթերցման, Տ. Կոմիտաս հայր սուրբը քարոզեց «Քահանայք քո զգեցցին զարդարութիւն և սուրբք քո ցնծալով ցնծասցեն» բնաբանով, կոչ անելով պարգևատրյալներին այսուհետև առավել ևս նվիրումով ու սրբությամբ ծառայել Մայր Աթոռին և Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցուն։

ԼԵՆԻՆԱԿԱՆԻ ԹՂԹԱԿԻՑ

# ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## 1. ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻՆ

*Նորին Ս. Օծության Վեհափառ Հայրապետը այս մայիսին Լոնդոնի հայ գաղութին տված այցելության առթիվ, Լոնդոնում հետաքրքրվեց նաև անմահ վիպասան Րաֆֆու արխիվով և անձնական գործածության իրերով։*

*Այս առթիվ Նորին Ս. Օծությունը իր քարտուղար պ. Հայկ Առաքելյանին պաշտոն հանձնեց անձամբ զբաղվել այդ հարցով։*

*Պ. Հայկ Առաքելյանին հաջողվեց տեսակցել Լոնդոնում Րաֆֆու ավագ որդու՝ Արշակ Մելիք-Հակոբյանի այրի տիկին Ալեքսանդրա Կորմիկ Մելիք-Հակոբյանի հետ և նրանից ստանալ Րաֆֆու անձնական իրերից հետևյալները.*

*1. գրողի տնային վերնազգեստը։*

*2. ծխամորճը.*

*3. ծխախոտի քանդակազարդ տուփը.*

*4. գրիչ՝ նվիրված գրողին 1884 Թվականին.*

*5. թանաքամանը.*

*6. գրասեղանի այլ պարագաներ.*

*7. լուսանկարներ՝ 2 մեծադիր և 14 հատ փոքր՝ ընտանիքի անդամների.*

*8. երեք կտոր գիրք հեղինակի ֆակսիմիլեով մեր պատմության վերաբերյալ։*

*Նորին Ս. Օծության Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ իրերը բերված են Երևան և հանձնված Գրական Թանգարանի։ Թանգարանի վարչության անունից շնորհակալական գիր է ուղարկված տիկին Ալեքսանդրա Կորմիկ Մելիք-Հակոբյանին։*

## 2. ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ԹԱՆԳԱՐԱՆԻՆ

*Հայկական մանրանկարչության և քանդակագործության ականավոր վարպետ հանգուցյալ Տարագրոս Ստեփանի Տեր-Վարդանյանի հարազատները Մայր Աթոռի թանգարանին են նվիրել հանգուցյալ արվեստագետի մի շարք արժեքավոր նկարչական և քանդակագործական ստեղծագործություններ, որոնց թվում՝*

*1. Ս. Էջմիածնի մեծադիր յուղաներկ նկարը, 1904 թ.*

*2. Սելիմի իջևանի գրչանկարը, 1937 թ.*

*3. Հիսուսի մեկ յուղաներկ փշյա պսակով գլուխը.*

*4. Ս. Էջմիածնի Մայր Տաճարի մակետը փայտից.*

*5. Մի մեծ խաչքարի մակետը գաջից.*

*6. Մի փոքր խաչքարի մակետը գաջից.*

*7. Գառնիի հեթանոսական տաճարի մակետը գաջից.*

*8. Մի շարք յուղանկարներ և հայ մանրանկարչության գունավոր նմուշներ։*

*Հանգուցյալ արվեստագետը ծնվել էր 1878 թվականին Երևանում և վախճանվել՝ 1953 թվականի ապրիլին։*

*Մեծ է Տարագրոսի թողած վաստակը։ Նա իր ստեղծագործություններով անմահացրել*

է իր անունը և գալիք սերունդներ օրհնությամբ կհիշեն նրա անմոռաց վաստակը։

«Ցիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի»։

Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետը հանգուցյալ արվեստագետի հարազատներին տվեց շնորհակալական գիր՝ Մայր Աթոռի թանգարանին եղած այդ նվիրատվության առիթով։



Ս. Էջմիածին

(Ծաղանձերի Տառագրոսի. 1901 թ.)

## 3. ԵՐԵՎԱՆԻ ԹԱՏԵՐԱԳԻՏԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻՆ

Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետի Միլանոյում գտնվելու օրերին քարտուղար պ. Հայկ Առաքելյանը, Նորին Ս. Օծության կարգադրությամբ, հետաքրքրվեց հանրածանոթ դերասան Օվի Սևումյանի արխիվով։

Պ. Հայկ Առաքելյանը Միլանոյում տեսակցեց տիկին Լյուսի Սևումյան-Արզումանյանի հետ, որը Երևանի Թատերագիտական թանգարանին նվիրեց մեծանուն դերասանի զանազան դերերում, կյանքում նկարված 17 նկար։

Այս նկարները բերված են Երևան Նորին Ս. Օծության կարգադրությամբ և հանձնված Երևանի Թատերագիտական թանգարանին։ Թանգարանի վարչությունը շնորհակալության գիր է ուղարկած Միլանո՝ տիկին Լյուսի Սևումյան-Արզումանյանին։





# Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ, Ս. ՀՌԻՓՍԻՄԵԻ, Ս. ԳԱՅԱՆԵԻ, Ս. ՇՈՂԱԿԱԹԻ ՏԱՃԱՐՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ՇՐՋԱԿԱ ՇԵՆՔԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄՆ ՈՒ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄԸ

*Մեր ամսագրի նախորդ համարում գրել էինք Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պ. Հ. Գրիգորյանի Էջմիածնում Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետի մոտ հունիսի 28-ին հրավիրած ճարտարապետական խորհրդակցության մասին։*

*Ուրախ ենք հայտնելու, որ մեր ճարտարապետության յընտիր կոթողներ հանդիսացող հիշյալ մեր վանքերում կատարվելիք վերանորոգության աշխատանքները քննվել, ստուգվել են մեր հեղինակավոր ճարտարապետների հանձնաժողովի կողմից, որի կազմի մեջ են մտնում.*

*1. Մ. Մազմանյան, ճարտարապետ, Երևանի քաղաքային Սովետի Նախագծային արվեստանոցի վարիչ.*

*2. Վ. Հարությունյան, ճարտարապետական գիտությունների թեկնածու, Երևանի Պոլիտեխնիկ ինստիտուտի Ճարտարապետության ամբիոնի վարիչ.*

*3. Ռ. Իսրայելյան, ճարտարապետական գիտությունների թեկնածու, Նախագծային արվեստանոցի վարիչ.*

*4. Կ. Հովհաննիսյան, ճարտարապետական գիտությունների թեկնածու, Հուշարձանների պահպանության կոմիտեի նախագահ.*

*5. Կ. Ղաֆադարյան, դոկտոր, Երևանի Պետական պատմական թանգարանի դիրեկտոր։*

*Ճարտարապետների հանձնախումբը գովելի նախաձեռնությամբ մշակել և Նորին Ս. Օծության Վեհափառ Հայրապետին է ներկայացրել հետևյալ առաջադրությունը, որը հրատարակում ենք ի գիտություն և հուրախություն մեր ընթերցողների.*

## ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ

### ա) Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՇԵՆՔԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ՈՒ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ԿԱԶՄԵԼՈՒ ՀԱՄԱՐ

*1. Կազմել Ս. Էջմիածնի Մայր Տաճարի շրջակայքի հատակագծման ու բարեկարգման աշխատանքների ընդհանուր նախագիծը։ Այդ նպատակի համար նախապես կատարել շրջակայքի տեղանքի հանույթը ընդունված սահմաններում ընականի 1:1.000 չափով։*

*2. Կազմել ճանապարհների, փողոցների, ծառուղիների նախագիծ, ուղղահայաց հատակագծման և կանաչազարդման, ինչպես նաև ջրմուղի և կոյուղու, արտաքին լուսավորության և մանր ձևերի (նստարաններ, լուսասյուներ, ցրացայտեր, զուգարաններ, տաղավարներ և այլն) նախագծեր։ Նախատեսել նաև հեռախոսային և ռադիոցանց ինչպես Տաճարի ներսում, նույնպես և բակում։*

*3. Տաճարի բակում տեղ հատկացնել բացօթյա թանգարանի համար, որտեղ պետք է ցուցադրվեն Տաճարում և թե նրա շրջակայքում հայտնաբերված խաչքարեր, քան-*

դակներ, խոյակներ և հնագիտական արժեք ներկայացնող այլ բեկորներ։ Շարունակել և ամբողջացնել շրջակայքը սահմանափակող պարիսպն ու ցանկապատերը։

4. Կազմել Մայր Տաճարի մասնակի վերանորոգման նախագիծ, որի մեջ նախատեսել լուսամուտների փեղկերի փոխարինումը մետաղյա և խոշոր ապակիներով փեղկերով, իսկ Տաճարի ներսում գտնվող ճաղերը փոխարինել նորով։ Կազմել նաև Տաճարի շուրջը սալահատակման նախագիծ։

5. Կազմել Նոր Վեհարանի շենքի վերանորոգման նախագիծ (առանձին առաջադրանքով)։

6. Հին Վեհարանի շենքը պահպանել նույնությամբ և դարձնել թանգարան։ Այդ նպատակի համար կազմել նրա կառուցվածքի ամրացման ու վերանորոգման աշխատանքների նախագիծ։

7. Կազմել Ղազարապատի շենքի վերակառուցման նախագիծը։ Նրա բակը ընդարձակել ի հաշիվ խարխուլ մասերի քանդման ու դարձնել զոհարան, որին կից նախատեսել առանձին օջախների մի շարք։ Ղազարապատի բուն շենքը վերածել սեղանատան։

8. Կազմել Տրդատա դռան վերանորոգման նախագիծ։

9. Կազմել տպարանի շենքի վերակառուցման նախագիծ։

10. Առանձին առաջադրանքով կազմել հետևյալ շենքերի նախագծերը.

ա) Նախկին Սինոդի.

բ) Երեմյան խուցերի (հանրակացարանի).

գ) Ճեմարանի շենքի.

դ) Թանգարանի շենքի.

ե) վանքի տնտեսական շենքերի։

11. Կազմել էլեկտրական ենթակայանի, ջեռուցման կաթսայատան, դարաժի, ինչպես նաև բաղնիքի նախագծեր։

## բ) Ս. ՀՌԻՓՍԻՄԵԻ ՏԱՃԱՐԻ ԵՎ ԻՐ ՇՐՋԱԿԱՅՔԻ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՀԱՄԱՐ

1. Կազմել Ս. Հռիփսիմեի տաճարի շրջակայքի հատակագծման և բարեկարգման նախագիծ։ Նախատեսել բակի կանաչապատման աշխատանքները։ Տեղ հատկացնել բացօթյա թանգարանի համար։ Ինչպես բակում, նույնպես և փողոցի կողմից կատարել մայթերի և ուղիների սալահատակում ու կառուցել աստիճաններ անհրաժեշտ տեղերում։

2. Ս. Հռիփսիմեի տաճարի վերանորոգման աշխատանքների մեջ ի նկատի ունենալ տաճարի ներսում ծեփի հեռացումը՝ վերականգնելու համար տաճարի նախնական տեսքը։ Ներկա սեղանը փոխարինել ավելի պարզ ու շենքի ոճին համապատասխան կառուցվածքով։ Վերանորոգել տաճարի դրսի զետնախարիսխների, պատերի, քիվերի, ծածկերի վնասված մասերը։

3. Կազմել բակում գտնվող բնակելի տան վերանորոգման նախագիծը։ Երկրորդ հարկի կամարաշարի լուսամուտները հանել և վերականգնել նախկին տեսքը (գալլերեյը)։ Վերակառուցել շենքի կտուրը։

## գ) Ս. ԳԱՅԱՆԵԻ ՏԱՃԱՐԻ ԵՎ ԻՐ ՇՐՋԱԿԱՅՔԻ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՀԱՄԱՐ

1. Կազմել Ս. Գայանեի տաճարի շրջակայքի հատակագծման և բարեկարգման նախագիծը։ Նախատեսել կանաչազարդման, ջրամատակարարման, ճանապարհների և ծառուղիների նախագծեր։ Բակը ցանկապատել բոլոր կողմերից։

2. Ս. Գայանեի տաճարի ներսում և դրսում կատարել վերանորոգում։ Ծեփերից մաքրել թե՛ տաճարի ներքին պատերը և թե՛ գավիթը՝ պահպանելով քարի շարվածքը ներսում և աղյուսի շարվածքը գավթում։ Կատարել տաճարի զետնախարիսխների և մուտքերի մասնակի վերանորոգում։ Գոյություն ունեցող սեղանը փոխարինել պարզ ու շենքի ոճին համապատասխան շինվածքով։

3. Պարսպատել և բարեզարդել Ս. Էջմիածնի միաբանների գերեզմանատունը։

## դ) Ս. ՇՈՂԱԿԱԹԻ ՏԱՃԱՐԻ ԵՎ ԻՐ ՇՐՋԱԿԱՅՔԻ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՀԱՄԱՐ

1. Կազմել Ս. Շողակաթի տաճարի շրջակայքի հատակագծման և բարեկարգման նախագիծը։ Ցանկապատել բակը և կանաչազարդել։

2. Ս. Շողակաթի տաճարի լուսամուտները և այլ մասերը վերանորոգել և արձանագրությունները մաքրել ծեփից։

3. Կազմել բակում գտնվող երկու կիսավեր շենքերի վերակառուցման նախագիծ։



Հ. ՍԻՓԻԿԱՐՅԱՆ

(Մայր Աթոռի տնտեսա-ֆինանսական կառավարչության պետ)

# ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԾԱՎԱԼՈՒՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

*Մեր հրաշակերտ վանքերն ու հոյաշեն եկեղեցիները պերճախոս կոթողներն են հայու արարող, մշտաստեղծ մտքի, սիրառատ, զգայուն սրտի։ Նրանցից մի մասը ավերվել է, սակայն ավերակների յուրաքանչյուր բեկորը խոսում է մեր անմահ նախորդների աննկուն կամքի, լուսաշող հանճարի մասին։ Մի մասը կանգուն է և կարծես թե իր կրծքի տակ պահպանում է ավյունը մեր հերոսական ժողովրդի, որ ստիպված էր ապրելու իր տենչը վերածել մարմարյան մեծագործ ոգու և այն մարմնավորել մեր փոթորկաշունչ բնաշխարհի ճարտարապետական կառույցներում, նրանց վրա դրոշմելով իր երազանքների ու խոյացող մտքի դրոշմը։*

*Ո՞ր հայը, առանց սարսուռի, առանց ազգային հպարտության զգացմունքի, առանց ոգեշնչման և խանդավառության կարող է նայել մեր փոթորկալից պատմության այդ հոյակապ կոթողներին, որոնք լուռ ու մունջ, սակայն բոցավառվող պերճախոսությամբ, պատմում են հայ ժողովրդի արյունոտ ուղու և արևաշող ապագայի, նրա մարտնչող ոգու և խաղաղասիրական նկրտումների, հանուն ազգի գոյության մղված պայքարի և համամարդկային գաղափարների մասին։*

*Եվ երբ մենք տեսնում ենք մեր Հայրենիքի շինարար իշխանության եռանդուն ջանքերը վերականգնելու, հայկական հին ոճը և շունչը հաղորդելու նորակառույց հուշարձաններին, մենք չենք կարող չոգևորվել ու երախտապարտ չլինել այդ իշխանության։*

*Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Կաթողիկոս և Գերագույն Հոգևոր Խորհուրդը, չկամենալով մեր բազմաթիվ վանքերի ու եկեղեցիների վերականգնման հոգսը միայն պետության վրա թողնել և ոգեշնչված անցյալ տարվա սեպտեմբերի վերջերին գումարված Ազգային-եկեղեցական ժողովի որոշումներով, ծրագրեցին այս տարի սկսել վերականգնման և վերանորոգման ծավալուն աշխատանքներ, Մայր Աթոռի միջոցով, խորապես համոզված, որ Սփյուռքի հայերը սրտագին առատաձեռնությամբ նպաստելու են այդ սուրբ գործին։*

*Վերանորոգման ծրագիրը կազմվեց Վեհափառ Հայրապետի արտասահման մեկնելուց առաջ, իսկ վերադարձից հետո, երբ նա իր ցնծալից շրջագայություններից մեզ բերեց մեր հայրենաբաղձ եղբայրների կարոտակեզ ողջույնը և պատրաստակամությունը՝ ոչինչ չխնայելու Մայր Աթոռի, Հայրենիքի համար, շինարարական աշխատանքները ստացան նոր թափ։ Եվ մենք, համակված մեր սիրելի Հայրապետի վարակիչ լավատեսությամբ, խանդավառ ոգևո-*

թությամբ, մեր գլուխը ունենալով նրան, ձեռնարկեցինք Մայր Աթոռում վերանորոգումների լայն ծրագրի կենսագործմանը։

Առաջին հերթին սկսվեց և եռանդագին թափով առաջ են գնում Մայր Տաճարի հատակի մարմարապատման, Ավագ Խորանի վերակառուցման, Տաճարի շրջապատի սալահատակման, վանքի բակի բարեկարգման



Մայր տաճարի հատակի մարմարապատումը

և կանաչապատման, երթուղիների վերականգնման և Երեմիայի ու Սինոդի շենքերի հիմնական վերանորոգման աշխատանքները, որոնք Մայր Աթոռից պահանջում են շուրջ 2.000.000 ռուբլու ծախս։ Բոլոր այս աշխատանքները նախագծել են հայտնի ճարտարապետներ Րաֆֆի Իսրայելյանը և Լիպարիտ Սադոյանը, որոնք ջանք չեն խնայում գործի վերածելու իրենց նախագծումները, Մայր Աթոռը դարձնելու ծաղկուն, շենշող մի կենտրոն։ Շինարարական աշխատանքները ղեկավարում է երիտասարդ ինժեներ Հրաչյա Ավագյանը, օգնական ունենալով կառուցողների մի փորձառու խումբ, որոնք մեծ եռանդով նվիրված են նախագծողների ծրագրերի կենսագործմանը, իրենց տրված պատվավոր հանձնարարությունը ժամանակին և բարձր որակով կատարելու։ Մոտ ապագայում Հայության առինքնող կենտրոն Ս. Էջմիածինը կստանա իրեն արժանի շուքը, պատշաճ տեսքը։ Միաբանները կստանան հանգստավետ բնակարաններ, հոգևոր անդորր կյանքի և ինքնամփոփ առանձնության համար պայ-

մաններով: Ճեմարանի ուսանողները կունենան նաև գեղեցիկ, լուսավոր, բոլոր հարմարություններով օժտված ննջարաններ, ուսանելու, գիտության ձեռք բերելու նպաստավոր միջոցներ:

Միութենական կառավարության ղեկավար մարշալ Բուլղանինի բարեհաճ համաձայնությամբ շուտով Մայր Աթոռին է վերադարձվելու նոր Վեհարանը՝ վեհանիստ ու վեհաշուք ճարտարապետական այս հոյակապ կառուցվածքը դեռևս չէր ավարտված, երբ վրա հասավ առաջին համաշխարհային պատերազմը՝ բազմաչարչար հայ ժողովրդի համար ամենից ահավորը, ամենից աղետաբերը: Քանի՜-քանի՜ մանուկներ, երիտասարդներ, կանայք և տղամարդիկ, մահվան աղերսը շրթունքներին, հրաժեշտ տվին իրենց տանջալից կյանքին այս կիսավարտ շենքի պատերի տակ: Վեհարան դառնալուց առաջ, նա անխոս վկան դարձավ մեր պատմության ամենադաժան ողբերգության: Եվ օրերն անցան: Արև ծագեց: Ռուս հզոր ժողովրդի եղբայրական օգնությամբ ոտքի կանգնեց հայ ժողովուրդը, կազդուրվեց և նոր կյանքի կոչվեց: Պատմությունը գիտի՞ արդյոք արյունաքամ ժողովրդի ավելի կենսարար նկրտում, կյանքին կառչելու ավելի հախուռն կամք, ավելի համարձակ խոյանք, կենսալույս թռիչք: Վերջին քառասնամյակը լավագույնս ապացուցե՞ց արդյոք, որ մենք մեր հերոսական նախորդների արժանի հետևորդներն ենք, նույնքան կենսալից, նույնքան ստեղծագործ, նույնքան տոկուն և զոհաբերող:

Հրճվի՛ր, հայ հավատացյալ, Վեհարանը վերադառնում է Վեհին, վերադառնում է որպես հարգանքի տուրք այն հավատարմության, որը կրոնական դրոշի տակ կռել է նաև ազգային ոգին, ազգային մշակույթը, հանդիսացել է հայ ժողովրդի միասնության խորհրդանշան, աշխարհասփյուռ հայ փարանդիների հոգևոր կենտրոնը: Վերանորոգվում, երիտասարդանում, առույգանում է այդ կենտրոնը: Շուտով սկսվելու է նաև Վեհարանի հիմնական վերանորոգումը:

Վեհարանի վերադարձումը առաջացրեց Մայր Աթոռ ավելի լայն տարածության վրա ճարտարապետական մի ամբողջության վերածելու անհրաժեշտությունը: Միաժամանակ այս սրբավայրը պատմության մեջ ներկայացված է որպես հրաշագործ տեսիլք, աստվածային կամքի արտահայտություն, երկնային գեղեցկության նյութականացումը Արարատի փեշերի վրա: Եվ ահա հայ տաղանդավոր ճարտարապետների և գիտնականների մի հնգյակ՝ ճարտարապետներ Միքայել Մազմանյան, Ռաֆֆի Իսրայելյան, Վարազդատ Հարությունյան, Կոստանդին Հովհաննիսյան և հնագետ դոկտոր-պրոֆեսոր Կարո Ղաֆադարյան իրենց նվիրումով վերցրել են Մայր Աթոռի շինարարական մեծ ձեռնարկումների ղեկավարությունը և իրենց ազնիվ ջանքերով մարմին և արյուն են տալիս երկնային տեսիլքին՝ Մայր Տաճարի շուրջը ստեղծելով ճարտարապետական մի հոյաշեն ամբողջություն, արժանի Մայր Աթոռի վեհության, նրա պատմական փառքին, պահպանելով հին ոճը, հին երանգները: Անշուշտ, այս մեծ ձեռնարկումը կպահանջի միլիոնների ներդրում, որը սիրահոժար կերպով խոստացել են նվիրել դեռևս Հայրենիքից դուրս ապրող, սակայն ջերմորեն Ս. Էջմիածնին և Հայրենիքին նվիրված հավատացյալ և հայրենասեր հայերը: Չենք կասկածում, որ հեռու չէ այն օրը, երբ, Հայաստանի կառավարության ջանքերի, նյութական առատաձեռն զոհաբերության շնորհիվ իր ներքին դասական գեղեցկությունը վերստացած Մայր Տաճարը կունենա իր նույնքան գեղեցիկ շրջապատը՝ հարազատ իր պատմական մեծարժեք ոճին:

Մեր երիտասարդ, շինարար Հայրապետը իր հոգսերը միմիայն Մայր Աթոռի վրա չի կենտրոնացրել: Նրա շինարարական ծրագրի անմիջական խնդիրներն են Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոցի, Բջնու Ս. Աստվածածին, Բայազետի և մի շարք այլ եկեղեցիների վերանորոգումները, որոնք ձեռնարկված են և որոնք պետք է ավարտվեն ընթացիկ շինարարական շրջանում, պահանջելով ոչ պակաս քան 500.000 ռուբլու ներդրում: Համոզված ենք, որ բոլոր այս ձեռնարկումները լիակատար հաջողությամբ կպսակվեն: Մեր բարեխնամ կառավարության հոգատարությունը մեզ անհրաժեշտ շինանյութերով ապահովելու հարցում, և Սփյուռքի հայերի ինքնաբուխ, առատաձեռն նվիրատվությունները երախտագիտության և հույսի կենսարար զգացումներով համակել են մեզ:

Ինչպե՞ս չվերանորոգել Ս. Մեսրոպ Մաշտոցի անվանը նվիրված եկեղեցին: Ո՞ր հայ մարդը կկարողանա հանդուրժել, որ եղծվի այն հուշարձանը, որ նվիրված է մեծ հայու անվան, մի մարդու, որ մեզ տառեր տվեց, ստեղծեց Արարատից ավելի ամուր պատվանդան մեր գրականության, անմար և մշտաբորբոք արվեստի, մեր հիասքանչ մշակույթի:

Բջնի՜, չքնաղագույն ոստաններից մեկը մեր հեռավոր անցյալի, կոթողը մեր լուսավոր ճարտարապետության: Եկեղեցին խրոխտ կանգնած է գյուղի կենտրոնում, բարձունքի վրա: Փոթորիկները իրենց ավե-

րից։ Հետքերը թողել են այս սքանչելի տաճարի վրա, խարխլվել է այն, սակայն շնչում և աղոթում է, աղոթում է իննսունամյա Տեր Աբրահամ քահանայի դալուկ շրթունքներով։

Սպասեցի՞նք արդյոք լուսաբանումը շինարարական այն մեծ ծրագրի, որ հղացել է և կյանքի է կոչել մեր սիրեցյալ Հայրապետը։ Իհարկե ոչ։ Մեր փոքրաթիվ, սակայն մեծ ժողովրդի սրբացյալ դստրեր Հռիփսիմեի, Գայանեի, Շողակաթի, Գեղարդի, Խոր Վիրապի վանքերն են, որոնք ճարտարապետական մարգարիտներ են Էջմիածնի հողի վրա և ենթարկված են դարավոր փոթորիկների ավերիչ շունչին, պետք է վերանորոգվեն, պետք է ունենան բարեկարգված շրջապատ և արտացոլեն անհման կույսերի նահատակությունը՝ առինքնող պարզության մեջ։ Այս նորոգումները կպահանջեն ավելի քան 2.000.000 ռուբլի։ Այս նորոգումներին ձեռնարկելու հրճվալից երջանկությունն է համակել մեզ։

Մենք դեռ չսպառեցինք շինարարական աշխատանքների միթիարի ծրագիրը, որին նվիրվել է երիտասարդ Հայրապետը, իր ջերմ սրտի վարակիչ ավյունով։ Նրան են նայում մեր անկրկնելի Տաթևը, Օձունի տաճարը, Խեղինյաց վանքը, Գանձասարը և տակավին քանի՜-քանի՜ հիասքանչ սուրբ տաճարներ։ Մենք չենք խոսում այն վանքերի մասին, որոնք իրենց պատմական նշանակությամբ չեն զիջում վերոհիշյալ վանքերին, և որոնք վերականգնված են մեր Հարազատ Կառավարության ազնիվ ջանքերով (Սանահին, Հաղբատը, Գոշավանքը, Կեչառիս և ուրիշները)։

Սակայն հայու ստեղծագործ մտքի կոթողները միայն Հայաստանի հողի վրա չեն կառուցված։ Եղբայրական Վրաստանի և Ադրբեջանի հանրապետություններում, Հյուսիսային Կովկասի որոշ վայրերում, ամենուրեք կան հայկական վանքեր և եկեղեցիներ, որոնք իրենց հոյակապ կառուցվածքով, ճարտարապետական բարձրարվեստ ոճով չեն զիջում հայ բնաշխարհի հուշարձաններին։ Վեհափառ Հայրապետը նրանց էլ է ուղղել իր սիրով և ջերմությամբ ճառագայթող հայացքները։ Նրանց վերականգնումը, բարեկարգումը ևս նրա սքանչելի ծրագրի մի մասն է կազմում։ Մեր Հայրապետը այնպիսին չէ, որ միայն հնություններով տարվի, ու միայն հին հուշարձանների վերականգնումներ նվիրի իր անհատնում եռանդը։ Նա ծրագրել է Բյուրականում կառուցել հանգստի տուն՝ միաբանության անդամների և մյուս աշխատակիցների համար։

Մեր ժողովուրդը կառուցող, շինարար ժողովուրդ է։ Կառուցել ենք ամենուրեք. կառուցել ենք անհատնում եռանդով, մեծ թափով, հորդառատ ավյունով, սակայն այն շրջանում, երբ զրկված ենք եղել պետականությունից, շատ հաճախ կառուցել ենք մեր երկրից դուրս, օտար հորիզոնների տակ։ Միայն խորհրդային կարգերի հաստատումից հետո շինարարությունը ծավալվեց Հայրենի երկրում, և «արյունի ու արցունքի հովիտը» վերածվեց առաջավոր, բարձր ճարտարարվեստի երկրի, կանաչազեղ պարտեզի, լուսացայտ աղբյուրի, սակայն առանց մեծահարուստ հայերի մասնակցության։ Կառուցման փառքը պատկանում է հայրենաբնակ հայ բանվորին, գեղջուկին, մտավորականին, որոնք համախմբված ժողովրդական իշխանության շուրջը, աջակից ունենալով ռուս մեծ ժողովրդին և եղբայրական մյուս ժողովուրդներին, մեծ զոհաբերությունների, ծանր զրկանքների գնով կառուցեցին իրենց նորոգ, մշտադալար, ծաղկուն Հայրենիքը։ Այժմ կառուցման տենդը բորբոքվում է. այդ տենդը համակել է Սփյուռքի հայության հոծ զանգվածներին, հայրենանվեր կազմակերպություններին, մեծահարուստ հայերին, նրանք էլ տենչում են կառուցել Հայրենի հողի վրա, փառապանծ Հայրենիքի, նրա աննկուն, անխոնջ, նպատակասլաց ժողովրդի համար։ Այս էին ասում հայրապետական ընտրությունների պատգամավորները, Ազգային-եկեղեցական ժողովի բարձր



Մայր Տաճարի 5-րդ դարի կառուցվածքի խարիսխը և նրա տակի հիմները

ամբիոնից հայրենասիրական հրաշունչ ճառեր արտասանող մեր եղբայրները՝ գերաշնորհ՝ սրբազան հայրերը և աշխարհականները, ճառեր, որոնք անկեղծ էին, ջերմ ու վարակիչ, բոցավառված ժողովրդասեր սրտի կրակով, հայրենապաշտ հոգու կարոտով, ստեղծագործ մտքի վառ պատկերներով։

Մենք համոզված ենք, որ եկեղեցասիրական ու հայրենասիրական այն ոգին, որ բարձրացել է Սփյուռքում շնորհիվ Վեհափառ Հայրապետի հովվապետական շնորհաբեր այցելության՝ հետզհետե կբարձրանա, կծավալվի և վերածված ինքնաբուխ նվիրատվությունների, նյութական խոշոր արժեքների, կհոսի դեպի Մայր Աթոռ։

Մեր պատմությունը հարուստ է հայրենասիրական գործերի շողշողուն օրինակներով, համախմբված ժողովրդի հրաշագործ արարքներով։ Չկա մի ազգ, որ անագորույն պայմանների թելադրանքով ափռված լինի աշխարհով մեկ։ Հայ ժողովուրդը այն բացառիկն է բացառիկների մեջ, որի վտարանդի զավակները կապված են Մայր Երկրի հետ իրենց սրտի, հոգու, մտքի բոլոր թելերով, մարմնի բոլոր բջիջներով։

«Կռունկ, ուստի՞ կուգաս, ծառա եմ ձայնիդ,
Կռունկ, մեր աշխարհեն խաբրիկ մը չունի՞ս»։

Ո՞ր հայ պանդուխտը չի երգել այս հուզաթաթավ երգը արտասվալի աչքերով, մորմոքող սրտով։ Ճիշտ չի՞ լինի ասել, որ պանդուխտ հայը օտար հողի վրա ստեղծել է իր փոքրիկ օջախը հարանման հայրենի օջախին և ամփոփված նրա մեջ, ապրել է Մայր Հայրենիքի հույզերով, նորից իր հին օջախը վերապրելու հույսերով, երազանքներով։

Մեր Հայրենիքը օտարի կրունկի տակ չի հեծծում այժմ. նա ազատ է ու խաղաղ, հարուստ է ու հզոր։ Ստեղծագործելու նրա ձգտումը սահման չունի։ Նա ձգտում է իր արևաշող երկիրը, բնության ամենադյութիչ անկյուններից մեկը օժտել մարդկային հանճարի այն բոլոր պարգևներով, որոնցով հպարտանում են աշխարհի ամենաառաջավոր և մեծամեծ ժողովուրդները։

Թո՛ղ վերածնված Մայր Հայրենիքի հետ միասին փայլի նաև Ս. Էջմիածինը իր [illegible]կան գեղեցկության բոլոր երանգներով, թո՛ղ նա լինի դյութագեղ մարգարիտ աշխարհի երեսին։ Դրան է ձգտում համեստ, իր անձնական կյանքում սակավագոհ, սակայն անհագուրդ իր երազանքների ու ձգտումների մեջ մեր խանդավառ Հայրապետը, նույն իղձերով, նույն խանդավառությամբ վարակելով իր աշխատակիցներին։

Մենք համոզված ենք, որ մեր բոլոր երազները կյանք կստանան։ Մենք համոզված ենք, որ Էջմիածինը, ոչ հեռավոր ապագայում, կդառնա Հայաստանի գողտրիկ քաղաքներից մեկը։ Մենք համոզված ենք, որ այդ մեծ գործում իրենց պատվաբեր բաժինը կունենան Սփյուռքի հայերը, բոլոր հայերը, որոնց գրկաբաց սպասում է պատմական երկիր Նաիրին, ներկայիս ծաղկուն Սովետական Հայաստանը։

Վերականգնե՛նք հին կոթողները, կառուցե՛նք նորերը, որոնք պատմելու են մեր հետնորդներին իրենց նախորդների մշտավառ հոգու, մշտադալար սրտի, բարձրաթռիչ մտքի հրաշագործ սխրանքների մասին։ Ա՛յս է պատգամը մեր երիտասարդ Հայրապետի։






ՓԱՅԼԱԿ ՄԻԱԾԱՆ

## ԷՋՄԻԱԾԻՆ

Մեր տեսիլքի լույս քնարով քեզ վար բերինք երկինքներից,
Որ խոցոտված մեր սրտերի աղոթքի սուրբ տունը դառնաս,
Եվ երբ տրտում մեր հոգու մեջ մի կաթիլ շող ցողես քեզնից,
Լինես խաչված երազը մեր վերածնող ուժն երկնահաս:

Կառուցեցինք քեզ քար առ քար, շաղախիդ մեջ դրինք արյուն,
Մեր սրտից քեզ հոգի տվինք, մեր հավատից՝ տվինք կրակ,
Որ մեր կյանքի փշոտ ճամրին լինես պայծառ ուղենիշ սյուն,
Թե իսկ թողնենք երկիրը մեր՝ չընկնենք օտար աստղերի տակ:

Մենք բերինք քեզ մեր հանճարի ստեղծագործ ուժն անսպառ,
Որ դու ինքդ օծես նրան ավազանիդ սուրբ մեռոնով,
Ապա դարձած գույն ու քանդակ, դարձած միտք, և՛ երգ, և՛ բառ,
Այն արձակես հպարտությամբ դարերն ի վեր մշտահոլով:

Մեր դաշտերի հացն անխմոր դրինք սրտիդ՝ սկիհիդ մեջ,
Բուրվառիդ մեջ կրակ դարձավ մեր խաղողի որթը մատղաշ,
Կանթեղիդ մեջ օր ու գիշեր բոցավառվեց մեր հույսն անշեջ,
Որ փոթորկի ահեղ ժամին մեր փրկության լաստը դառնաս:

Ծընկի եկանք ամենայն ժամ խորաններիդ առաջ լռին,
Համբուրեցինք մամուռ կապած քո քարերը հնամենի,
Ու մրմունջով թոթովեցինք մեր աղոթքը «Խորհուրդ խորին»,
Որ քո զանգը ղողանջի միշտ, որ դու լինես միշտ կենդանի:

...Եվ դու եղար մեր վերքերի առողջարար սպեղանին,
Եվ դու դարձար Աստծուն օրհնող հայ բուրվառը նվիրական,
Եվ դո՛ւ էիր, որ վեհորեն իմաստ տվիր մեր հանճարին...
Ու մենք քեզ հետ կլինենք միշտ, կապրենք ամբողջ և անբաժան:

## ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱԿԱԴ. Հ. ՄԱՆԱՆԴՅԱՆ

# ՀԱՄԱՌՈՏ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ*

*Տիգրանի պետությունը եղել է, ըստ էության, նույնպիսի քաղաքական միություն, ինչպիսին եղել է Աքեմենյանների պարսկական պետության միությունը։ Հայաստանից կախում ունեցող թագավորությունները պետք է ճանաչեին «արքայից արքա» Տիգրանի իշխանությունը, պետք է վճարեին նրան հարկ և նրա ռազմական արշավանքների ժամանակ ցույց տային օգնություն։ Տիգրանի լայնածավալ միացյալ պետությունը չի եղել, իհարկե, ամուր կազմակերպված ամբողջական պետություն։ Նա հանդիսանում էր իրեն ցեղերի և ժողովուրդների խայտաբղետ խառնուրդ, որոնք գտնվում էին հասարակական և կուլտուրական զարգացման տարբեր աստիճաններում, Եվ նա հեշտությամբ կազմալուծվեց Տիգրանի հենց առաջին անհաջողության ժամանակ։*

*Երբ Հայաստանը այդ ժամանակաշրջանում, ինչպես երևում է հունա-հռոմեական աղբյուրների տեղեկություններից, գտնվում էր իր անցման շրջանում՝ Քսենոփոնի ժամանակվա տոհմային հասարակարգից դեպի Արշակունյաց շրջանի ֆեոդալական հասարակարգը։ Տիգրանի պետության մեջ, ինչպես և նրա ռազմական գործողությունների ժամանակ ղեկավար դեր էին խաղում հողագործական ավագանին և ազնվականությունը, որոնք ունեին ամրոցներ և հողային սեփականություն։ Նվաճած երկրների հարստությունների խոշոր մասը, հավանորեն, ընկնում էր նրանց ձեռքը։ Լինելով Հայաստանի զինվորական ուժի հիմքը և ունենալով իրենց ձեռքում ընդարձակ հողեր ու կալվածքներ, նրանք ամրացրել էին իրենց տիրապետությունը և, ըստ էության, ավելի էին ուժեղացել, քան նախորդ շրջաններում։*

*Խոշոր հողատեր դասի ուժեղացման հետևանքով, հավանաբար սաստկացել էր նաև համայնական գյուղացիության ճորտացման պրոցեսը և կախում ունեցող գյուղական ազգաբնակչության առաջացումը։ Ստրկությունը, անշուշտ, գոյություն է ունեցել և, ըստ էության, զգալի դեր է խաղացել, սակայն հիմնական արտադրական գործոն ուժ եղել է այդ դարաշրջանում ոչ թե մասսայական աշխատավոր ստրկությունը, այլ մասսայական աշխատավոր գյուղացիությունը, որը բաղկացած է եղել, գերազանցորեն, գյուղացի համայնականներից։*

*Պոմպեոսի Արևելքում տարած հաղթանակներից հետո Հայաստանը ճանաչված է եղել իբրև հռոմեական ժողովրդի բարեկամ և դաշնակից (66 թ. մ. թ. ա.) ու համարյա մեկ դարի ընթացքում գտնվել է Հռոմի ազդեցության տակ։ Այդ ժամանակվանից նա դառել է համաշխարհային հռոմեական պետության առաջապահը, որը տարածվում էր Արևելքում մինչև Եփրատ գետը և արաբական անապատները։*

*Տիգրանի հաջորդ՝ Արտավազդի ժամանակ (56—36 թ. թ. մ. թ. ա.) հռոմեա-*

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1956 թվականի № VI-ից։

րիթ ձգտում էին նվաճել նաև պարթևական թագավորությունը և երազում էին վերականգնել Ալեքսանդր Մակեդոնացու պետությունը Հռոմի իշխանության տակ։ Այդ փորձերը ոչ միայն չունեցան հաջողություն, այլև վերջացան Կրասոսի պարտությամբ (53 թ. մ. թ. ա.) և ապա նաև Անտոնիոսի (36 թ. մ. թ. ա.)։ Ուստի և Հռոմի սահմանը արևելքում մնաց Եփրատ գետը կամ Միջագետքը։

Այդ մշտական սահմանը հաստատելուց հետո, Հայաստանը դարձավ բուֆերային պետություն և ընկավ մուրճի ու զնդանի միջև՝ հռոմայեցիների, որոնք սեղմում էին Արևմուտքից և վերածնված պարթևների հզորության, որոնք նորից ուժեղացել էին Հայաստանի թուլանալուց հետո։

Իրար հետ մրցող Արևմուտքի մեծ պետությունների միջև գտնվող Հայաստանի այդ ճակատագրական դրությունը, որը շարունակվեց Բյուզանդական-Սասանյան և Բյուզանդական-Արաբական դարաշրջաններում, եղել է այն գլխավոր պատճառներից մեկը, որոնք ցնցեցին նրա բարեկեցությունը և անբարենպաստ ազդեցություն ունեցան նրա քաղաքական և ներքին զարգացման վրա։

Իրար հետ մրցակցող համաշխարհային պետությունների բախման հիմքում եղել են խորը տնտեսական պատճառներ։ Նրանց մեջ պայքարը տեղի է ունեցել, գլխավորապես, համաշխարհային առևտրական ճանապարհները ձեռք բերելու նպատակով, որոնք տանում էին դեպի Հնդկաստան և Չինաստան։ Այդ կատաղի պայքարում Հայաստանը հաճախ խաղում էր միայն հենարանի կամ ռազմաբեմի դեր։

Այդ ռազմաբեմին տիրելը չափազանց կարևոր էր պայքարող պետությունների համար և պայմանավորվում էր ոչ միայն նրանով, որ Հայաստանի վրայով էր անցնում հեռավոր-արևելյան տարանցիկ (տրանզիտային) ճանապարհի ճյուղերից մեկը, այլ առավել ևս այդ երկրամասի ռազմական նշանակությամբ։

Շնորհիվ իր բնական աշխարհագրական պայմանների, Հայաստանը միշտ հանդիսացել է իբրև բնական ամրոց և ունեցել է առաջնակարգ ռազմական նշանակություն՝ թե՛ պաշտպանության և թե՛ հարձակման համար։

Հենց այդ արժեքավոր ռազմական նշանակությունը եղել է Հայաստանին տիրապետելու համար տեղի ունեցող մշտական կռիվների պատճառը։ Դրանով է բացատրվում նաև այն, որ նրա պատմությունը միշտ միախառնվել է Մերձավոր Արևելքի մեծ պետությունների պատմության հետ։

Պարթևների կողմից Կրասոսին և Անտոնիոսին հասցրած պարտությունից հետո, Հայաստանում սկսվեցին կատաղի կռիվների խռովահույզ ժամանակներ և հռոմեական ու պարթևական դրածոների փոփոխակի թագավորություն։

Մեր դարաշրջանի սկզբում, Տիգրան 4-րդի և նրա քրոջ Էրատոյի մահով դադարեց Հայաստանում Արտաշեսյանների հարստության իշխանությունը և սկսվեց միջիշխանություն, որը տևեց մինչև Արշակունիների գահակալությունը (մեր թվարկության 66 թիվը)։ Որպեսզի Հայաստանը պահե իր ազդեցության տակ, Հռոմը գործում էր այստեղ կաշառքի և սպանությունների օգնությամբ, և վարում էր երկպառակություններ, գժտություններ ու հաճախակի ապստամբություններ առաջացնելու քաղաքականություն, որոնք արգելք էին հանդիսանում երկրի քաղաքական զարգացմանը։

Սակայն այդ քաղաքականությունը չունեցավ հաջողություն. Հռոմի իշխանությունը Հայաստանում մնում էր անվանական, և Հայաստանում նկատելի կերպով ուժեղանում էր պարթևական ազդեցությունը, որին համակրում էր հայ ազնվականության մեծ մասը։

Հռոմի հնավանդ քաղաքականության անհաջողությունները Հայաստանում, ստիպեցին Ներոն կայսերը 58—63 թվերին (մեր թվարկության), հռոմեա-պարթևական կռվից հետո, համաձայնություն կնքել պարթևների հետ, որի հետևանքով Հայաստանում հաստատվեց Արշակունիների պարթևական հարստությունը, Հռոմի անվանական գերիշխանության տակ։ Հայկական նոր հարստության հիմնադիրը եղավ պարթևական Վաղարշ թագավորի եղբայրը՝ Տրդատ 1-ինը, որը իր թագը ընդունեց Հռոմում Ներոն կայսեր ձեռքից։

Արշակունյաց Հայաստանը պահեց իր գոյությունը, իբրև անկախ պետություն, ավելի քան երեք հարյուր տարի (66 թվից մինչև 384—387 թ. թ. մեր թվարկության) և ապրեց ավելի, քան պարթևական թագավորության անկումը ու Սասանյան թագավորության հաստատումը Պարսկաստանում (մեր թվ. 227 թվին) և Բյուզանդական կայսրության առաջացումը (4-րդ դարի վերջում)։

Հայաստանը շարունակեց մնալ համաշխարհային իրադարձությունների ոլորտում նաև Արշակունիների թագավորության ժամանակաշրջանում և կամովին կամ ակամա մասնակցություն է ունեցել տեղի ունեցող կռիվներում (2-րդ—4-րդ դ. դ. մ. թ.)։

Արշակունիները, բարձրանալով Հայաստանի թագավորական գահը 66 թվին հան-

ձին Տրդատի և նրա հաջորդների, իրենց իշխանության առաջին ժամանակներում հասցրին երկիրը տնտեսական զարգացման և քաղաքական հզորության բարձր աստիճանի։

Տրդատի գահակալությունից հետո, Հայաստանի մայրաքաղաք Արտաշատը, որ հռոմեական զորավար Կորբուլոնը ավերել էր (մեր թվ. 59 թվին), նորից վերակառուցվեց Ներոն կայսեր տված միջոցներով և վերանվանվեց Ներոնիա։ Այնուհետև այն ժամանակաշրջանում հիմնվեցին Մծուրն և Վաղարշապատ քաղաքները։ Դրանցից առաջինը՝ Մծուրնը շինել է Արշակունի թագավոր Սանատրուկը 1-ին դարի վերջին քառորդում, կամ 2-րդ դարի սկզբում՝ հին հայկական Տարոն գավառում, Արածանի և Ղարա-սու գետերի միախառնման մոտ, իսկ երկրորդը՝ Վաղարշապատը, որ կոչվում էր նաև Կայնեպոլիս, կամ Նոր քաղաք, հիմնել է հին Վարդգեսավան բնակավայրի տեղում Սանատրուկի որդի Վաղարշը, որը թագավորել է Հայաստանում հռոմեական կայսր Անդրիանոսի ժամանակ (117—138 թ. թ.)։

Հենց այդ երեք խոշոր քաղաքների կառուցման փաստը 50—70 տարվա ընթացքում ցույց է տալիս Հայաստանի տնտեսական բարեկեցության արագ զարգացումը առաջին Արշակունիների ժամանակ։

Տրայանոս կայսեր (98—117 թ. թ.) ժամանակ 115 թվին Հայաստանը վերածվեց հռոմեական պրովինցիայի (նահանգի), որը ղեկավարվում էր լեգատի վարչության իշխանության տակ։ Սակայն, այդ դրությունը երկար չտևեց և Տրայանոսի հաջորդ Ադրիանոս կայսրը (117—138 թ. թ.) հրաժարվեց իր նախորդի նվաճումներից), իր գահակալության առաջին տարում վերականգնելով Արշակունիների թագավորությունը։

Այնուհետև, մինչև 3-րդ դարում Սասանյանների պարսկական միապետության առաջացումը (226 թվին մ. թ.), որը փոխարինեց պարթևներին, Հայաստանում՝ պարբերաբար վերսկսվող հռոմեա-պարթևական կռիվների ժամանակ տեղի էին ունենում փոփոխություններ հռոմայեցիների կամ պարթևների դերակշռությամբ։ Մեր թվարկության 2-րդ դարում այնտեղ փոփոխակի թագավորում էին կա՛մ հռոմայեցիների կա՛մ պարթևների դրածոները։

Սակայն, ընդհանրապես, այդ դարաշրջանում Հայաստանը գտնվում էր հարևան Պարթևաստանի քաղաքական և կուլտուրական խոր ազդեցության տակ, որը հիմնված էր այդ երկու երկրների համայնական կենցաղային կապի և սոցիալ-քաղաքական կազմակերպության ազգակցության վրա։

Արշակունյաց Հայաստանի ներքին կյանքի բնորոշ երևույթներից է համարվում իրանական Պարթևաստանի կուլտուրայի և պետականության ուժեղ ազդեցությունը, և Հայաստանում նախարարական կամ ֆեոդալական հասարակարգի վերջնական ձևավորումը, որի հիմունքները գոյություն են ունեցել դեռևս Արտաշեսյանների իշխանության ժամանակ։

Ինչպես այդ, նույնպես և հետագա միջնադարյան շրջաններում Հայաստանի ներքին կյանքը զարգանում էր ֆեոդալական հասարակարգում ընդունված ձևերով, որը իր բազմաթիվ բնորոշ գծերով հիշեցնում է Արևմտյան Եվրոպայի ֆեոդալիզմը։ Այստեղ ևս, ինչպես և Արևմտյան Եվրոպայում ֆեոդալական հասարակությունը հանդիսանում էր իրեն դասակարգային բնույթի բազմահարկ կառուցվածք, ընդ որում, իբրև գերիշխող դաս ներկայանում էր այստեղ ևս զինվորական-հողատիրական ազնվականությունը, որը շահագործում էր իր հողերի վրա նստած, իրեն ենթակա գյուղացիներին։

Այս հասարակության վերին շերտը Հայաստանում կազմում էին նախարարական կամ իշխանական տոհմերը, հողային խոշոր կալվածների ժառանգական տերերը, որոնք իրենց սեփականություններում օգտվում էին պետական իշխանության իրավունքներով։ Այդ նախարարությունները եղել են Արշակունիների վասալները կամ ծայրագավառների խոշոր իշխանությունների ենթավասալները։ Արշակունյաց թագավորության մեջ խոշորագույն նախարարություններին տրված են եղել, իբրև ժառանգական իրավունք, բարձրագույն պետական պաշտոններ։ Այսպես օրինակ՝ թագադրողի պատվավոր պաշտոնը եղել է Բագրատունիների նախարարական տոհմի ժառանգական արտոնությունը։ Հայկական զորաբանակի բարձրագույն հրամանատարությունը ժառանգաբար հատկացված է եղել Մամիկոնյանների տոհմին։ Հազարապետների իշխանությունը, որոնց վրա դրված են եղել գյուղացի-շինականների գործերը վարելու և պետական տուրքերին վերաբերող վարչական պարտականությունները, պատկանում էր, ըստ երևույթին, Գնունիների տոհմին։ Կայսերական զորամասերի (գվարդիա) իշխանությունը և թագավորի պաշտպանությունը եղել է Խորխոռունիների իրավասության տակ։ Իսկ Արշակունիների գանձերի, ամրությունների և կալվածների վարչական իրավունքը և թագավորական հարեմի հսկողությունը եղել են Մարդպետ իշխաններ

նախարարական տոհմի արտոնությունը։ Գոյություն են ունեցել նաև ուրիշ պալատական պաշտոններ, որոնք բաշխված են եղել ազնվատոհմ ընտանիքների մեջ։

Հայաստանի ֆեոդալական-նախարարական հասարակության երկրորդ միջանկյալ խումբը բաղկացած էր արտոնյալ մանր հողատերերի լայն խավից, որ կոչվում էին ազատներ, որոնք եղել են Արշակունի թագավորների կամ խոշոր ու մանր հողային սեփականատեր նախարարների վասալները։ Ազատների դասը իր սոցիալ-տնտեսական դրությամբ համապատասխանում էր «ազնվական ռինվորներին», կամ միջնադարյան Եվրոպայի ասպետներին։ Նրանց համար պարտադիր էր ծառայել Արշակունիների կամ նախարարների հեծելազորում։ Ազատները ազատված էին հարկատվությունից և, հեծելազորում ծառայելու համար, ստանում էին պայմանական-ժառանգական հողամասեր կամ ֆեոդներ, որ կոչվում էին «խոստակ»։

Ֆեոդալական հասարակության երրորդ խումբը կազմում էին հողին ամրացված կախումն ունեցող գյուղացի շինականները, որոնք շատ բաներում հիշեցնում էին բյուզանդական կոլոններին։ Այդ խումբը եղել է երկրի հարկատու բնակչությունը, որը վճարում էր հողատուրք (բահրա) և կատարում էր «կոռ»-ի պարտականությունները։

Ստրկությունը զգալի դեր էր խաղում, սակայն այդ ստրկությունը եղել է գերազանցորեն տնային։ Ստրուկներ են ունեցել Արշակունյաց Հայաստանում նախարարները և ազատները, նաև եկեղեցիները, վանքերը և նույնիսկ առանձին հոգևորական անձինք։ Սակայն իր ծավալով, ստրկությունը Հայաստանում չի կարող ունենալ ոչ մի համեմատություն հին Հռոմի կամ Հունաստանի ստրկության հետ։ Արտադրության հիմքը այստեղ եղել է ոչ թե ստրկական աշխատանքը, այլ գյուղացի շինականների աշխատանքը։

Արշակունյաց ժամանակի և հետագա դարաշրջանների ֆեոդալիզմը բնորոշվում է, բացի այդ, տրանզիտային, այսինքն՝ փոխադրական արտաքին առևտրի զարգացմամբ և գերակշռությամբ, և Հայաստանում նոր քաղաքների առաջացմամբ, որոնք տեղավորված են եղել համաշխարհային առևտրի հյուսիսային ճանապարհի վրա, որ Չինաստանից ու Միջին Ասիայից գնում էր դեպի Սև ծովի արևելյան նավահանգիստները։

Հռոմի և ապա Բյուզանդիայի գրաված Միջերկրական և Սև ծովի ծովափնյա շրջանները ծառայում էին նրանց ոչ միայն նվաճողական քաղաքականության, այլև լայն արտաքին առևտրի նպատակների համար։

Հայաստանը, որի վրայով գնում էին հյուսիսային տարանցիկ (տրանզիտային) ճանապարհները դեպի Սև ծովը, խաղաղ ժամանակը զգալի դեր էր խաղում այդ առևտրում։ Նա ծառայում էր իբրև տարանցիկ երկիր՝ չինական մետաքսի և այլ արժեքավոր ապրանքների փոխադրության համար, որոնք արտահանվում էին դեպի Արևմուտք՝ Չինաստանից, Միջին Ասիայից և Հյուսիսային Հնդկաստանից։

Հենց դրանով է բացատրվում Արշակունիների և Բյուզանդական-Սասանյան դարաշրջանում մի շարք նոր քաղաքների առաջացումը, որոնցից ամենախոշորները եղել են Վաղարշապատը և Թեոդոսուպոլիսը։

Հատկապես մեծ նշանակություն է ունեցել միջազգային առևտրում Հայաստանի մայրաքաղաք Արտաշատը, որը դառել էր փոխադրվող ապրանքների պահեստավայրը և միջազգային առևտրական փոխանակության գլխավոր կենտրոններից մեկը։

Պարթևական վերջին Արտավան թագավորի սպանությունից ու նոր-պարսկական Սասանյան պետության հիմնադրումից հետո (227 մ. թ.), Հայաստանը, որտեղ շարունակում էր թագավորել Պարթև Արշակունիների ազգակից հարստությունը (դինաստիան), խիստ փոխեց իր քաղաքականությունը Հռոմի հետ մոտենալու ուղղությամբ։ Ուստի և բնական է, որ Սասանյանները թշնամաբար էին վերաբերվելու դեպի հայ Արշակունիները և աշխատելու էին նրանց ոչնչացնել։

Առաջացած համառ կռիվներում, որ շարունակվեց 3-րդ դարի ընթացքում, հաղթանակը սովորաբար տանում էին Սասանյանները։ Վերջապես, 3-րդ դարի վերջում, ջախջախիչ հարվածից հետո, որ հռոմեական Դիոկլետիանոս զորավարը հասցրել էր պարսիկներին (297 թ.), Արշակունյաց Հայաստանը ժամանակավորապես ազատ շունչ քաշեց Հռոմի գերագույն հովանու տակ։

Այնուհետև, հայկական գահի վրա հաստատված Տրդատ 3-րդը դառավ Հռոմի հավատարիմ վասալը։

Հռոմեական կայսրության հետ ունեցած Հայաստանի այդ վասալական կապի հետևանքներից մեկը եղավ հայերի հեթանոսական կրոնի վերացումը և քրիստոնեության ընդունումը Հայաստանում, որը 4-րդ դարում հայտարարվեց իբրև պետական կրոն, ինչպես ամբողջ հռոմեական կայսրության մեջ, այնպես էլ վասալական Հայաստանում։

Արշակունիների քաղաքականությունը՝ Արևելյան Հռոմեական կայսրության հետ քաղաքական և կուլտուրական բարեկամական կապեր հաստատելու ուղղությամբ և հայերի սերտ դաշնակցային կապը հռոմայեցիների հետ ընդդեմ հզոր Սասանյան Պարսկաստանի, Հայաստանի համար եղավ կործանարար։

Մեր թվականության 4-րդ դարում, հռոմեա-պարսկական կռիվները վերսկսվեցին արտասովոր կատաղությամբ, և Հայաստանը, որ անընդհատ կռվում էր, իբրև հռոմեացիների կողմնակից, սպառելով իր ուժերը, կարճ ժամանակից հետո դարձավ հռոմեական կայսրության երդմնազանցության զոհ։ 363 թվին Հուլիանոս կայսեր Արևելքի դեմ ունեցած անհաջող արշավանքից հետո (361—363 թ. թ.), նրա հաջորդ Հովիանոսը (363—364 թ. թ.), խաղաղություն կնքելով պարսից Շապուհ 2-րդի (310—379 թ. թ.) հետ ոչ միայն զիջեց նրանց Անդրտիգրիսյան երկրները՝ Աղձնիքը, Կորդուքը և Սոփքերը, այլև անամոթ կերպով դավաճանեց իր դաշնակից հայերին և մատնեց նրանց պարսիկների ձեռքը։

Հռոմեական պատմագիր Ամմիանոս Մարցելինի վկայությամբ, որը ժամանակակից է եղել այդ իրադարձություններին, խաղաղության պայմանագրում եղել է, Հայաստանի համար կործանարար, ծայր աստիճանի մի ամոթալի կետ։ Համաձայն այդ կետի, հռոմեացիք պարտավորվել էին ցույց չտալ Հայաստանի թագավորին օգնություն, որը, ինչպես վկայում է Ամմիանոսը, եղել է նրանց մշտական և հավատարիմ բարեկամը։

Հռոմեացիների պարտությունից և 363 թվին ամոթալի խաղաղություն կնքելուց հետո, հայ Արշակունիները թողնված են եղել իրենք իրենց և ստիպված են եղել անհավասար կռիվ մղել հաղթական Պարսկաստանի դեմ, առանց դաշնակիցների։ Կորստյան մատնված երկրի այդ կռիվը, հերոսությամբ ու անհավասար դրամատիզմով լցված, եղել է հին հայկական ժողովրդական վեպի հիմնական թեմաներից մեկը, որը պահպանվել է 5-րդ դարի պատմիչ Փավստոս Բուզանդացու պատմության մեջ։

Այդ կռվի վախճանը եղել է կանխորոշված։ Նա վերջացավ նրանով, որ պարսիկների կողմից ավերված ու քայքայված Արշակունյաց Հայաստանը դադարեց այնուհետև գոյություն ունենալ, իբրև անկախ պետություն, և ընկավ օտարների լծի տակ։

384—387 թվերին Շապուհ 3-րդի (383—388 թ. թ.) և Թեոդոսիոս 1-ի (379—395 թ. թ.) ժամանակ Հայաստանը բաժանել են իրար մեջ Սասանյան Պարսկաստանը և Արևելյան-Հռոմեական կայսրությունը։

Այդ դեպքերից հետո երկու Հայաստաններն՝ Արևելյանը կամ Պարսկականը և Արևմտյանը կամ Բյուզանդականը, մնում էին շատ դարերում համաշխարհային պատմական իրադարձությունների հանգույցում։

Պարսկաստանի և Արևելյան-Հռոմեական կայսրության կատաղի կռիվը, որը շարունակվեց նաև Հայաստանի բաժանումից հետո, ընդունեց արտաքին կրոնական ձևավորում։ Շնորհիվ սահմանային հայկական երկրամասի ռազմական կարևորության, թշնամի պետությունները վարում էին չափազանց համառ կռիվներ հենց իր Հայաստանի միջում, նպատակ ունենալով կուլտուրապես ու կրոնով միաձուլել և կուլ տալ հայությունը։

Անսովոր համառությամբ վարում էր իր միաձուլման քաղաքականությունը 4-րդ—5-րդ դարերում Սասանյան Պարսկաստանը, որը գրավել էր Արշակունյաց Հայաստանի մեծագույն մասը։ Նրա ծրագրված ճիգերը, որոնք նպատակ ունեին վերականգնել Հայաստանում զրադաշտական կրոնը և հայ ժողովրդի իրանականացումը շարունակվեցին երբեմնակի ընդհատումներով համարյա մի ամբողջ դար։

Արևելյան Հայաստանի վրա, որը կորցրել էր իր քաղաքական անկախությունը, կախվել էր այդ ժամանակաշրջանում մահացու վտանգ՝ նաև նրա լեզվի կորստյան և նրա ազգային կուլտուրայի ոչնչացման. վտանգ էր սպառնում հենց իրեն՝ հայ ժողովրդի գոյությանը։

Սակայն, չնայելով Սասանյան Պարսկաստանի ճնշմանը, սանձարձակությանը և համառ ձգտմանը՝ կոտրել և ոչնչացնել Արևելյան Հայաստանի ներքին ինքնուրույնությունը և կուլտուրական ինքնագոյությունը, նա կարողացավ պաշտպանել իրեն։ Իր կուլտուրայի և լեզվի պահպանման համար Արևելյան Հայաստանը պարտական էր ոչ միայն ապստամբած ժողովրդի կայունությանը և դիմադրական կարողությանը, այլև 4-րդ դարի վերջին Մեսրոպ-Մաշտոցի հայ գրերի հանճարեղ գյուտին։

(Շարունակելի)



# ՍՓՅՈՒՌՔՈՒՄ

## ԹԱՐԳՄԱՆՉԻ ԳԵՐԵԶՄԱՆԸ

**Հոդվածագիր պ. Երվանդ Աղաջանյանը 1955 թվականին Ս. Էջմիածնում գումարված Ազգային-Եկեղեցական ժողովում ամերիկահայ պատգամավորներից մեկն էր, որ ժողովի երրորդ նիստում, 1955 թվականի նոյեմբերի 5-ին, ամերիկահայ պատգամավորության անունից խոստացավ տպարանական սարքավորում նվիրել Ս. Էջմիածնին, նորընտիր Հայրապետի՝ Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի երջանիկ ընտրության առիթով:**

**Տպարանական գործի կապակցությամբ Հյուսիսային Ամերիկայի միացյալ նահանգներում կազմվել է ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՏՊԱՐԱՆԻ ՀԱՆՁՆԱԽՈՒՄԲ, որը ձեռնարկած է հանգանակության և հարյուր հազար դոլար գոյացնելով պիտի օժտի Մայր Աթոռը տպագրական մեքենայով:**

**Տպարանական հանձնախմբի վարչական կազմի մեջ են մտնում որպես պատվավոր ատենապետներ՝ գերաշնորհ Տ. Մամբրե արքեպիսկոպոս Գալֆայանը, գերաշնորհ Տ. Վարդան արքեպիսկոպոս Քասպարյանը, գերաշնորհ Տ. Շնորհք եպիսկոպոս Գալուստյանը: Վարչության ատենապետն է պ. Եդվարդ Աղաջանյանը, գանձապահ՝ պ. Ջորջ Գարագյոզյան, քարտուղար՝ պ. Տիգրան Սիմսարյան, իսկ պատվիրակներն են՝ պ. պ. Երվանդ Աղաջանյանը, Տիգրան Բոյաճյանը, Հերի Բյուրդը, Լևոն Դավիթյանը, Հերի Հայրապետյանը, Մկրտիչ Թոփիկյանը, Տիգրան Սիմսարյանը և Հայկ Սիմսարյանը: Վարչական պատասխանատու կազմից բացի, հանձնախմբի մեջ մտնում են նաև վարպետներից երեսուն անդամներ:**

**Մայր Աթոռը արդիական կատարելագործված տպագրական մեքենաներով և սարքավորումներով օժտելու գործը կարևոր է և անհրաժեշտ, որի մասին անդրադարձել է Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետը իր անդրանիկ սրբատառ կոնդակում: Ահա այս մասին է, որ գրում է նաև պ. Եդվարդ Աղաջանյանը, Ս. Մեսրոպի գերեզմանին ուխտի գնալու առիթով:— ԽՄԲ.:**

«Եվ երբ մեզ խոստացված նվիրատվությամբ հաստատենք Մայր Աթոռի տպարանը հիմնել, պիտի սկսենք հրատարակել նաև այլ պարբերականներ ու հոգևոր եկեղեցական գրականություն, և Մայր Տաճարի զանգակներ հաղթական պիտի ղողանջեն, և հորիզոնե հորիզոն պիտի ավետեն, թե այստեղ կենդանի է Ս. Մեսրոպի ոգին և կանգուն Ս. Էջմիածինը, հայ ժողովուրդը լուսավորելու իր փառապանծ ճամբուն վրա»: *Երբ Վեհափառ Հայրապետին անդրանիկ կոնդակին մեջ կկարդանք այս տողերը, կզգանք մեր վրա դրված պատասխանատու գործին կենսականությունը, որուն իրակա-*

նայումին երեւակայութեան իսկ ներշնչում կուտա գուշակելու անոր իմաստն արդյունքները։

Մայր Հայրենիքին մէջ շատ քիչ բաներ կան, որոնք դարերու ընթացքին իրենց իրական վիճակէն խախտած չեն։ Ս. Մեսրոպի գերեզմանը ատանցմէ մին է, որ Օշականի եկեղեցիին ավագ սեղանին ներքև, ստորերկրյա մատուռին մէջ կգտնվի… կոչվելով «Թարգմանչի գերեզման» և ծառայելով ուխտատեղի մը հայ ժողովուրդին համար։

Երբ մենք Մայր Հայրենիք գացինք, ամէնամեծ փափագներէն մին էր Ս. Մեսրոպի գերեզմանը այցելել։

Այս փափագը շատ չուշացավ իրականանալու։ Ճամբու մը բավական ճամբորդելէ վերջ Աշտարակ և Բասաղ գյուղերուն մէջէն անցնելով, Օշական գյուղը հասանք։ Անմատչելի վայր մը հեքիաթական լանջերու մէջ թաղված…

Մեր խումբը, որ գրեթե բաւն անձերե կբաղկանար, որոնց մէջ էին Շնորհք եպիսկոպոս Գալուստյան, Ինթոյան և Վալարյան վարդապետները, երբ եկեղեցին մտանք, կարծես հոգեկան հուզմանքի մը բռնվեցանք։ Բոլորիս ալ աչքերը թաց էին։ Սուրբ գետնի վրա կկոխեինք և կզգայինք Ս. Մեսրոպի հոգիին ներկայությունը։ Եկած էինք երկրպագելու այն գերեզմանին, որ կկրեր մասունքները մեծ Վարդապետին, որուն երևակայությունը, հանճարը անխոնջ և տքնաջան աշխատությունը կերտած էին հայուն ամենազորավոր զենքը, իր Ա Բ Գ-ը։

Գետնահարկ գերեզմանին քով իջնելէ առաջ, խորանին առջև շարված, մեր հոգևոր հայրերուն առաջնորդությամբ երգեցինք շարականներ և աղոթեցինք արցունքոտ աչքերով։ Կարծես մեր հոգիները, սիրտը և ամբողջ էությունը մաքրագործել կուզէինք, արժանի ըլլալու մեզ, մոտենալու այդ պատկառելի սրբատեղիին, ուրկէ կբխեր ամբողջ ազգի մը գոյության գլխավոր իրավունքներէն մին։

Կորյուն վարդապետ, որ Մեսրոպ Մաշտոցի աշակերտներէն և գործակիցներէն էր, Մաշտոցի կենսագրությունը գրած է 443—451 թվականներուն։ Գիրքը կկոչվի «Վարք Մաշտոցի»։ Կորյուն վարդապետ իր գրքին մէջ կըսէ. «Հայրական չափուն ծնեալ ծնունդ և նորոգ և սքանչելի Ս. Աջովն իւրով նշանագիրս Հայերէն լեզուի» — այսինքն, ան իր Ս. Աջովն հայրաբար ծնեց (կամ հորինեց) նոր և սքանչելի հայերէն լեզվի նշանագրեր…

… Հայ գիրը զենքին տեղը պիտի բռներ, որ իրապես ավելի մահացու եղավ թշնամիին քան զենքի ուժը։ Մեր հոգևոր հայրերը այդ տառերը գործածեցին, անմիջապես Ս. Գիրքը և ուրիշ շատ մը գրքեր հայերենի թարգմանեցին…

Ճիշտ է, թե պատմությունը ինքզինքը կկրկնե հաճախ։ Հայ ազգը այսօր նույնքան և ավելի նման ուծացման վտանգին առջև կգտնվի, քան չորրորդ և հինգերորդ դարերուն։ Այսօր հայ մեծ զանգվածներ իրենց մայր երկրին դուրս կապրին և քաղաքացիներ են այլևայլ երկիրներու։ Անոնց զավակները մեծ մասով հայերեն գրել և կարդալ, նույնիսկ հայերեն խոսիլ չեն գիտեր։ Այո, անոնք հայու զավակներ են, բայց այդ երկիրներուն մէջ ծնած և այդ երկիրներուն կպատկանին։ Նույնիսկ մենք, որ Մայր Հայրենիքի մէջ ծնած ենք, բայց կամովին ընդունած ենք այլևայլ երկիրներու քաղաքացիություն, մեր առաջին հավատարմությունը կպատկանի հանդեպ մեր որդեգրած երկիրներուն։ Սակայն ոմանք թերևս չեն անդրադառնար այս իրականության, բայց այս անուրանալի իրողություն մըն է։ Ուրեմն, ի՞նչ է ճարը, դարմանը մեզ իրարու հետ, մեզ մեր զավակներուն հետ, մեզ և մեր զավակները մեր Մայր Հայրենիքին հետ կապված պահելու։

Ինչպես տասնհինգ դարեր առաջ, այսօր ալ այդ ճարը և դարմանն է ամենեն ավելի եկեղեցին հայերեն լեզվով։ Սակայն, այդ հեղինակությունը պետք է, որ Ս. Էջմիածնեն բխի, որ մեր եկեղեցիին հիմն է։ Անոր հիմնումը և հեղինակությունը կապված են աստվածահրաշ տեսիլքի հետ. «Տեսանեցիր զՏաճարն անուանն Աստուծոյ որ ցուցաւ ի տեսլեան՝ ուր սիւնն հրեղէն ունէր զոսկի խարիսխն… և տեղին այն լիցի տաճար Աստուծոյ և տուն աղօթից խնդրուածոց ամենայն հաւատացելոց և Աթոռ Քահանայապետութեանն»։ Որով Առաքելական Գահուն, Մայր Տաճարի և ուրեմն մեր եկեղեցիին բարձրագույն հեղինակության Ս. Էջմիածնեն հաստատվիլը գերաշունչ խորհուրդ մը թելադրված է։

Չորս հարյուրական թվականներուն Ս. Մեսրոպ հայ գրերը հորինեց, Հայոց եկեղեցիին ինքնություն տալու համար, որպեսզի մեզ իրարու կապված պահելու դերին ծառայե։ Այսօր մենք Մայր Աթոռը տպագրական մեքենայով պիտի օժտենք, զորացնելու եկեղեցին նույն գրերով, որ ի վիճակի ըլլա վերստանձնելու իր այդ դերը։ Ինչպես որ ըսված է՝ «ի վերայ Աջոյն և Ս. Էջմիածնի ամենայն ազգն Հայոց կապեալ կան»։

Այս գիտակցությամբ էր, որ ծունկի եկանք Ս. Մեսրոպի շիրիմին առջև։ Արցունքով լեցված աչքերով համբուրեցինք պաղ քարը և բացինք մեր հոգիին և սրտին

ղոները, որ լեցվին անոր անմահ ոգիով։ Երբ Օշականի եկեղեցիէն դուրս եկանք, եկեղեցիին դռնէն քիչ անդին, բակին մէջ արձանի մեծութեամբ գերեզմանաքար մը տեսանք, որու վրա փորագրված էր «Վահան Ամատունի իշխան Հայոց»։ Ամատունիք Արարատյան աշխարհի տերն էին Ս. Մեսրոպի վախճանած ժամանակ։ Իշխան Վահան Ամատունին, որ Օշական ծնած էր, Ս. Մեսրոպի մարմինը Օշական փոխադրելով եկեղեցիին մէջ թաղել տալէ ետք կտակ կընէ, որ երբ մեռնի զինքն ալ եկեղեցիին բակին մէջ թաղեն։ Այո, Ս. Մեսրոպի գերեզմանը ներսը խորանին տակ, Հայոց իշխանն ալ դուրսը պահակ կանգնած։

... Վեհափառ Հայրապետ— Ս. Մեսրոպի ոգին մեռած չէ։ Ամերիկահայութիւնը անվազն հարյուր հազար դոլար գոյացնելով, պիտի օժտէ Մայր Աթոռը տպագրական մեքենաներով, ամեն նպատակի և ամեն պետքի համար։ Եվ Ս. Տաճարին զանգերը պիտի ղողանջեն Ձեզի ավետիք տալու, թե Ձեր զավակները կանգնած են Ձեր կողքին, Եւ Դուք, Վեհափառ Հայրապետ, Ձեր քրիստոնեական ոգիով և հայրական գութով, տիրացաք մեր բովանդակ էութեան, առաջնորդելու մեզ Ս. Լուսավորչի կանթեղի լույսով դեպի հոգեկան ազատութիւն։

Ն. ԱՂԱՋԱՆՅԱՆ

(Բոստոն, «ՊԱՅՔԱՐ» օրաթերթ.
27 հունիսի 1956 թ.)





# «ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳԻՐԸ ԵՎ ԻՐ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԸ

**(Նամակների տեսություն)**

*Խմբագրությունս բազմաթիվ շնորհավորական նամակներ ստացել և ստանում է և՛ Մայր Հայրենիքի և՛ Սփյուռքի իր հավատացյալ ընթերցողներից, որոնցում նրանք գրում են այն մասին, որ Մայր Աթոռի պաշտոնաթերթ «Էջմիածին» ամսագիրը նրանց համար դարձել է հոգևոր սնունդ մատակարարող մի անհրաժեշտություն, որ նրանք անհամբեր սպասում են ամսագրի ամեն մի նոր համարին, և հաճախ թանկագին թելադրություններ և դիտողություններ են անում ամսագրի բովանդակության և ձևի մասին, և խնդրում են մանավանդ, որ ամսագրի «Մայր Աթոռում» բաժնում ավելի լայն արձագանք գտնի Մայր Աթոռի, Նորին Ս. Օծության, միաբանության, Ճեմարանի կյանքի և գործունեության հետ կապված ամեն մի մանրամասնություն։*

*Խմբագրությունս միշտ ընդառաջել է և կընդառաջի իր ընթերցողների այդ սրտագին բաղձանքին։*

*Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու վերականգնման աշխատանքներում մեծ ու պատասխանատու դեր է վիճակված մեր այժմյան կրոնական մամուլին— «Էջմիածին», «Սիոն», «Հասկ», «Շողակաթ», «Հայաստանյայց Եկեղեցի», «Հայ կեդրոն» պաշտոնաթերթերին։*

*«Էջմիածին» ամսագիրը, որպես Ամենայն Հայոց Հայրապետության պաշտոնաթերթ և Վեհափառ Հայրապետի կենդանի խոսքը ուղղված իր սիրելի հոտին, սիրությամբ և պատվով է կատարում իր հոգևոր դերը հայ եկեղեցական կյանքում, և որի էջերից միշտ հնչել են քրիստոնեական վեհ իդեալների, համամարդկային վեհ գաղափարների, հայրենի սրբությունների, եկեղեցասիրության և հայրենասիրության սրբազան պատգամները։*

*«Էջմիածին» ամսագիրը նաև իր պատմական, հայագիտական և բանասիրական արժեքավոր հոդվածների բովանդակությամբ առաջին տեղերից մեկն է գրավում մեր կրոնական մամուլի շարքերում, արժանանալով իր հավատացյալ բազմաթիվ ընթերցողների բարձր գնահատության և քաջալերանքին։*

*Ստորև ուրախությամբ ենք հրատարակում ստացված բազմաթիվ նամակներից մեկը։*

**Հարգարժան խմբագրություն**
**«Էջմիածին» ամսագրի**

*Հոգեկան մեծ հաճույքով եմ կարդում «Էջմիածին» ամսագրի ամեն մի հա-*

մարը։ Առանց հուզմունքի և հաճախ արտասուքի չեմ կարող ընթերցել հետաքրքրական, բովանդակալից նյութերը։ «Էջմիածին»-ը ինձ համար կենսատու հաց է, առանց որի իմ կյանքը ամբողջական չի լինի։ Ես հավատացած եմ, որ ամեն մի ընթերցող ամսագրում կգտնի համապատասխան նյութ ըստ իր ճաշակի և կմխիթարվի դրանով։ Ամենից շատ ես հետաքրքրվում եմ «Մայր Աթոռում» բաժնով։ Ինձ համար սիրելի է Մայր Աթոռի կյանքից ամեն մի մանրամասնություն։ Ամսագրին այնպիսի բնույթ է տրված, որ ամեն մի հայ ուշի ուշով կարդա այն։ Ամսագիրը մի տեսակ սրտագին, հոգեկան կապ է Ս. Էջմիածնի և հավատացյալների միջև։ Անգնահատելի է մանավանդ ամսագրի կատարած բարոյական և դաստիարակչական դերը հայ կյանքում, աշխարհիս ողջ հայերի համար։ Ամեն մի ընտանեկան սեղանի զարդն է մեր հոգու կենդանի խոսք «Էջմիածին» ամսագիրը։ Հաճախ նույնիսկ ժամանակից հետո ձեռք եմ առնում ամսագրի հին համարները՝ նորից կարդալու համար։

«Էջմիածին» ամսագրի ընթերցողները իրենց սրտի խորքում փայփայում ու ջերմ սիրում են այն։ Մեզանում շատ ռուսախոս հայեր կան, նրանց համար ըստ կարելվույն թարգմանում եմ ամսագրի կարևոր նյութերը, մանավանդ «Մայր Աթոռում» բաժինը, և նրանք արտասվալից աչքերով լսում են ամեն ինչ։

Մեծ սիրով ենք կարդում մեր կաթողիկոսների մասին գրված հիշողությունները։ Ցանկալի կլինի հաճախ կարդալ նման հոդվածներ։

Ամբողջ սրտով ցանկանում եմ Ձեզ բեղմնավոր կյանք և գործունեություն։

«Էջմիածին» ամսագրի
ընթերցող՝ Մ. Ն.

12 Յուլիսի 1956 թ.
Աստրախան